Hon. Rédaction
de la Revue arménienne HANTESS
au Couvent des R.R. P.P. Méchitharistes
à VIENNE
VII Mechitharistingasse 4

ԱՐԵՒԵԼԵԱՆ
ՀԱՄՈՒԼ

ԿԻՍԱՄՍԵԱՅ

Ա. ԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

24-Դ ՏԱՐԻ

1894

ԹԻՒ 23-24 ԴԵԿՏԵՄԲԵՐ 15

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ
Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՋՄԻՒՌՆԻԱ
ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐԵԱՆ



ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

	Երես	
Քաղաքակրթութեան Հերոսները	721	ԽՄԲ.
Մուր Օրեր	726	ԽՄԲ.
Աղուոր Իրիցկինը	733	Ա. Ց. ԱՅՎԱԶԵԱՆ
Մանկան Դիեցումը	737	ՏՕՔԹ. ՓԱՇԱԵԱՆ
Դամբանական	741	Ս. Ց. ՊԱԼԱՊԱՆԵՈՆ
Գիշերը	745	Ա. Խ.
Թռչուն Ըլլանք	747	ՄՈՏԱ
Իմ Մանկական Յիշատակներս	749	Մ. ՆՈՒՊԱՐԵԱՆ
Ֆրեսկներու Նուէրները	756	Կ. Վ. ՊԱԼԱՊԱՆ
Երաժշտութիւնը Մեր Վարժարաններուն Մէջ	760	ԾՈՓԵՑԻ
Զարթարանաց Վանք Եկեղեցադառնալի	762	Ս. ԱՄԱՏԵԱՆ
Կարեւորներէն Մին	768	Մ. ԵՐԿԱՆԵԱՆ
Դպրոցական Թոշակ	769	Վ.
Լրաբաղ	777	Հ.
Լրաբեր	779	Վ. Մ.
Ցանկ Նիւթոց	781	

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎՌԱՄ ԵՒ ՄԱՐԻԱ
կամ
ՍՐՏԻ ԶՈՀԵՐ
Հեղինակ
* * *

Սոյն վիպերիկ դրքոյկն միմիայն 5 դրչ. վճարելով փոխադրուիլ կարող են ունենալ, կրնան դիմել Պ. Կարապետ Գոյումճեանի, Պ. Վրդ. Պէրպէրեանի ինչպէս նաև Մամուրեան տպարանն։

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Թերթիս այն բաժանորդներն որ մինչև դարձ իրենց բաժանորդագրին չեն վճարած, կ'խնդրուի որ փութան իրենց պարտքն հատուցանելու ԲԱՐԵՀԱՃԻԼ ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՏԻՕԵՆԻՍ

(GRANDS MAGASINS DIOGENIS)

ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻՈՅ

Աւելի չքեղօրէն զարդարած ենք մեր

ԱՄԵՆ ՁԻՒՂԻ ԴԱՐԱԿՆԵՐԸ

ԱՆԿԱՐԵԼԻ Է մեր ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍԻՆ

չքեղութիւնը բառերով նկարագրել։

Պատ. Հասարակութիւնը թող հաճի այցելել մեր մեծ վաճառատունը և իւր աչքերով իւ րողութեան երազեկ լինի։

ՎԱՐՉՈՒԹՈՒՆ

ՄԵՐ ՆՊԱՐԱՎԱՃԱՌՈՒԹՅՈՒՆ

Գ. եւ Լ. ՃԷՐԻՏՃԵԱՆ

Հայոց Ձեռ Ընկ

Մեր վաճառատան մէջ կը գտնուի անոյշին ամէն տեսակ պարէն, ինչպէս՝ ալիւր, բրինձ, արդար եղ, շաքար, խաշուկ, ձէթ, մաքարոնի, ապուրի համար խմորեղէններ, պահեր, պիպրուխներ, անուշեղէններ, գինի, քօնեակ, և այլն, և այլն և ամէն ինչ որոց պէտքը ղգայի է ամէն տան և մանաւանդ աքաղ խոհանոցի մէջ։

Թխած ածան և ամէն մրգուամ արհամարհող գիներ։

ՀԱՅԿ ԶԱՆԻԿԵԱՆ

ՄԹԵՐԱՆՈՑ ՎԵՐՄԱԿՆԵՐՈՒ

Փող – Իվ, Ընկ 4, 12 և 14

Կը ծախուին զանազան վերմակներ, անկողնի և բազմոցի համար թէ՛ բամպակէ և թէ՛ յարդէ բաճկեր, փետրէներ և սեպերներ։ Նաև Տեղային և Եգիպտական ամէն տեսակ բամպակ թէ՛ մեծ և թէ՛ փոքր քանակութեամբ։

Ապագրանքի վրայ մեծ հաւատարմութեամբ կը պատրաստուին զարդարուած վերմակներ Հարսանեկան անկողնի համար։

Գաւառներէ եկած յանձնարարութիւնք փութով ու ճշտութեամբ կը կատարուին։

ՇԱՏ ԶԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐ

ԱՐԱՆՑ ՀԱՄԱՐ ՈՏՆԱՄԱՆՆԵՐ

Զանազան կաշիներէ, ինչպէս՝ տեւէ տերէ, Իելուին, վէտելը, ըռոդրի, սաթքէ և ամառուան համար գունաւոր կաշիներ։

Յանամանները գինը պահի որոշուի Հարդուղին ոտքին թուոյն համեմատ։ Ահա ՆՈՐՈՒԹԻՒՆ մը որմէ օգտուիլ կը խրատենք մեր Պատուական Յաճախորդներուն և Արդոյ Հասարակութեան, որովհետև՝ այս դրութեամբ

0/0 10-15 ՆՈՒԱԶ պահի վճարին։

ԳՆԵՑՈՒՑ

Թիւ- 40 են Գնվ 48 — Մեծութ. 33 են

	Թիւը	գրշ
Կօշիկ Նաբուխ կրկնաներքան		7
Կօշիկ Իելը »	»	6
Պօթի Կռճալաոր և Լաբուտ	»	3 25
Քօթին ու սունկաւոր (մանիմարը) »	»	2 75
Գլուքեզ ու »	»	2 75
Կէս գլուքեզ և կէս պօթ	»	2 50
Ոքարբին	»	2 37 1/2
Քօթին Տալտ	»	3 75

Մնանեցքանր վերի ցուցակին գիներէն 1/4 մեծիտ պակաս։

Յանամանները ի Տարկին 24 ժամէ կը յանձնուին,

Ազնուութիւն, Գիմացկունութիւն և Ճաշակաւոր Ձեւաւորութիւն։

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ ԿԱՆԽԻԿ

Ամի Ներքեւ Եկեղեցւոյն Դէմ Դրան Տօր, Ընկ 47

ԱՄԱՍ ՊՕՂՈՍ Կ. ՕՀԱՆԵԱՆ

ՄԹՐՆՅ· ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐՈՒ

Ն. Ժ. ԲԱՔԱՐԱՔԻ ԵՒ ԸՆԿ·

Ցուց· Բաշ 91 — Շինճինաղ 34

Գանաթ, Քեմեր–Ալթը 32/34

Մարդ կրնայ՞ամէն տեսակ կարի մեքենաներու տէր լինիլ, ՄԻՄԻԱՅՆ չարաթական 1/2 մէջիտ վճարելով ։

Կօշկակարներու, դերձակներու և ճերմակեղէնի կարուհիներու համար՝ կարի մեքենաներու նոր ֆաբրիք ամենէ տոկուն, ամենէ արագ, ամենէ դիւրին և առանց ձայնի է։

Մեր վաճառատանէն ծախուած ամէն մեքենայ ԵՐԱՇԽԱՒՐԵԱԼ է։

Մեր ամէն յաճախորդներուն ՋՐի դասատուութիւնն և մեքենաներու նորոգութիւնն։

Ամէն տեսակ մեքենաներու նորոգութիւն։

Ասեղ, դերձան, իւղ չափաւոր գիներով։

Համոզուելու համար ԱՆԳԱՄ ՄԸ ՄԻԱՅՆ այցելել պէտք է։

ՎՃԱՐՈՒՄՆԵՐՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԻԶՄԻՒԻ համար — Արժէքին կէսը կանխիկ և միւս կէսը երեք ամսէն։

ԻԶՄԻՒԻ ԴՈՒՐՍ — կանխիկ։

Ամէն անոնք կ'փափաքին հաստատուն և ճաշակաւոր ու միանգամայն խիստ չափաւոր գիներով՝ կտրվեալ դրքեր ունենալ Թող դիմեն, 1857է իվեր հաստատեալ, Եվանկէլիքեան Յուշնաց գլխոցին անցքին մէջ Թիւ 8

տե՛ս **ԱՓՈՒՆԱՍ ԱՆԿԷԼԻՏՒՍ**

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ

ՉԱՐԵՀ ՇԵՈՐՀԱԻՈՐ

Հայոց Բաշ, Բեշիկթաշ Ճաղրե

Ամէն տեսակ դեղերու մեծ խանութ պատրաստութիւն
Չափաւոր գիներ

Դատառներէ եկած հիւանդներու ամէն դիւրութիւն կը տրուի, իրենց հիւանդութեանց տեսակին յարմար բժիշկներ կը ներկայացուին և անոնց պէտք եղած դեղերը մինչև իսկ դատառները կը զրկուին։

LA NEW-YORK

ԼԱ ՆԻՈՒ-ԵՕՐՔ

Կենաց ապահովագրութիւն հաստատեալ 1845 ին

Դրամագլուխ. — Պատրաստ դրամ ֆրանք 771.000.000

Անշարժ կալուածք եւ առանց յետդարձի ֆրանք 30.000.000

Եւրոպիոյ համար Ընդհ. Տնօրէնութիւնն ի Բարիզ, ընկերութեան կալուածոց մէջ, 16 Պուլվար տէ պիզալիէն և 1, 3 Ռիւ Լը Բըլըթիէ։

Դրամատուն ի Թուրքիա — Օսմ. կայս. Պանքա։

Ձմիւռնիոյ Ընդհ. Տնօրէն, Պրն. Վ. Ֆ. Վանտէր Զէ, Լօքալ Չէօնիչէր և Քննիչ Պրն. Հէրման Քիւն, Լօքալ Սբօնդի, Թիւ 13, պատիւ ունին ծանուցանել Թէ՝ պատրաստ են ամէն տեղեկութիւն հաղորդել ընկերութեան տուած չահաւէտ առաւելութեանց վրայ։

Ապահովութիւն կենաց, կենսաթոշակ կամ ժամանակաւոր ապահովագրութիւն, ստանալի 15 կամ 20 տարուան միջոցէ վերջ։ Ի դէպ մահու վճարում ապահովեալ դրամագլխոյ, վճարեալ ապահովագիներով։ Տղայոց համար կրամուտի հաստատութեան։

ԿԵՆԱՑԵԻ ԵԿԱՄՈՒՏ։

Ապահովագիրները ընկերութեան չահերուն ամբողջութեան կը մասնակցին։

ՊՈՂՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

3Ր

Օսման Զադե խան, Վերի յարկ

ԴԵՐՁԿ

Իւր ամէն յաճախորդներէն գնահատուած իւր յամրագ ճեւքին, գործածած ապրանքներուս ընտրութեան և արագ պատրաստութեան համար։

Ա.ԺԱՆ ԳԻՆԵՐ

Վ. ՍԻՏԻ — V. SIDI

Մեծ կազմատուն Բարիզեան և Անգլիական ճաշակով։

Ամենաընտիր կազմ, Նուագատուներուս և Տումարներուս

ԽԻՍՏ ՁԱՓԱԼԻՈՐ ԴԻՆԵՐ

17, Պարպարեսի խան, Ֆրանկաց Թաղ



ԹԻՒ 23 – 24 15 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1894

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Ա

Ազգի բարոյական քան դիտական վարդապետութիւն՝ բարեշրջութեան օրէնքն դեռ ևս հաստատուն և բացարձակ հիմեր չունի, ինչպէս ամեն բարոյական դիտութիւն, ժողովրդեան մը զարգացման պատճառները վնտռել իր միջավայրին մէջ, այս է՝ լոկ կազմուածքին, բնաւորութեան, կլիմային, բարուց, օրինաց, ղեկավարանց և այն ամեն բնական և բարոյական աղդեցութեանց մէջ որ զինք կ՚շրջապատեն, իր վրայ կ՚ազդեն և կ՚ստիպեն զինք մասնաւոր ուղղութեան մը հետեւիլ, չենթադրելը, ինչպէս դաս մ՚ընկերաբաններ կ՚պնդեն, թէ այդ ժողովուրդն անընդհատ յառաջդիմութեան շաւիղին մէջ կը գտնուի և սահմանուած է բարեշրջութեան ծայրագոյն

աստիճանն հասնիլ, այսինքն՝ քաղաքակրթութեան ամեն բարիքն ինքնուին վայելել։ Միջավայրն՝ ընկերքանական բառ մ'որ այժմ ստէպ կ'կրկնուի, որոշեալ վիճակ մը բացատրելու, ինքնին նշանակութենէ զուրկ է և փոխո-խութեան անընդունակ, երբ կայ և կ'մնայ մի և նոյն դրութեան մէջ՝ հեռի կամ զուրկ ամեն արտաքին ներդործութենէ, ներգործութիւն՝ որ կրնայ զարգացման պայմաններն այլայլել և անոր լաւ կամ վատ մղում մը տալ, նոյն ներգործութեան յոռի կամ բարերար բնութեան համեմատ։

Նկատել բարեշրջութիւնն իբրև ընդարձոյս կամ ինքնաձին յատկութիւն մը ժողովրդեան մը, որ կամայ ա-կամայ և առ հարկի ստիպուած լինի յառաջանալ, կ'նըմանի յուսալ վայրենի ծառէ մը ամենէ քաղցր և ղմայլելի պտուղներ։ Ազգ մ'ինչ նպաստաւոր պայմաններու մէջ որ ինքնուրոյն գտնուի, ի'նչ բնական և մտային յատկութիւններ որ ինքն իր մէջ մշակելու ճգնի, դարձեալ երբ իր յատուկ ոյժերուն ձգուած է, կ'հասնի վայրկեան մ'ուր կանկ կ'առնու և աւելի ևս յառաջ գնալու ոչ պէտք, ոչ հակում և ոչ կարողութիւն կ'զգայ, և կ'դեգերի քաղաքակրթութեան ստորին աստիճաններու մէջ։ Ի բաց թողլով առ այժմ այնարհի քաղաքակիրթ կոչուած ազանց զարգացման ներքին և արտաքին պատճառներն, քանի քանի ժողովուրդներ կան երկրիս երեսին որ անբանութեան և վայրենութեան սահմանները կը տարուբերին դարերէ ի վեր և այդ չրջանէն դուրս ելնելու յարմարութիւն մը չեն յայտներ, քանի որ չրջափակ միջավայր մ'է իրենց բաժինն։ Ընտարակոյս՝ այդ բարբարիկ ժողովուրդներն ևս վիճակակից չեն, քանի որ տարբեր բնակցութիւն և ազգակցութիւն, տարբեր բնոյթ և պիտոյք ունին, սակայն եթէ ի նկատ առնուի անոնց կեանց ներքին ընթացքն, տարբերութիւններն կարծուածին չափ ղգալի չպիտի երևին։ Կրօն, սովորութիւն, արհեստ, ճարտարութիւն, բոլորն նախնական անտաշ ու կոշտ վիճակի մէջ, ըստ տեղւոյն և ժամանակին այլայլան,

ընդհանրապէս մնայուն դրութեան մէջ կ'երևին, նման այն ջրերուն որ վաղուն աղբիւրներէ կենդանութիւն և պայծառութիւն չեն առներ։ Եւ միթէ ասոր կ'հետևի՞ թէ՝ մարդ կամ ժողովուրդ մ'երբ կղզիացեալ վիճակի են թարկուած է, յառաջադէմ զարգացման ճանբան չը-կրնար գտնել։ Միթէ կ'հետևի՞ թէ՝ մարդկային իմացա-կան և բարոյական կարողութեանց սերմերն յաւէտ ան-մշակ կրնան մնալ եթէ արտաքին զարկ մը չընդունին, միթէ, վերջապէս, հին վարդապետութիւնն, որ այժմ կը նորոգուի, թէ մարդս ինքնին կատարելագործելի էակ մ'է, ճշմարիտ է թէ ոչ։ Ըստ մեզ՝ ինչպէս պատասխանը կ'գու-շակուի մեր դիտողութեանց բնութենէ, է և չէ։ կատա-րելագործելի է, եթէ ոչ միայն դիւրաւոր այլ և ւրիւրաւոր պայմաններն այդ կատարելագործութեան կ'նպաստեն, հակառակ պարագայի մէջ, այսինքն երբ ինքն իրեն ձը-գուի, երբ խեղդէ յառաջդիմութեան ամեն բնածին ձկտումն, երբ մերժէ արտաքին ամեն վերկարար մղումն, կատարելագործութեան դուռն փակած կ'փակէ և ան-բանական չրջանի մը մէջ կ'դառնայ, ինչպէս կ'մնայ նորա-ծին մանկիկ ընդ միշտ անբան մարդ, թէև կենդանի, եթէ արտաքին աշխարհի ամեն ձայնէ, լեզուէ, յարաբերու-թենէ, լոյսէ ցվերջ հեռի և անհաղորդ մնայ։

Հետևապէս բարեշրջութիւնն առ հարկի օրէնք մը չէ որ, ինչպէս բնախօսական և աստղաբաշխական օրէնքն մարդկային մարմնոյն և երկնային դ ունեերու վրայ կը ներգործեն անվրէպ, ներգործէ նաև մարդկային բնաւո-րութեան, մտքի և զանազան բարոյական հանգամանաց վրայ անկախօրէն, այլ բաղմազան պայմաններու արտադ-րութիւնն է, արտադրութիւն՝ որ երևան չելներ բնաւ երբ այդ պայմանները պակսին։

Ը

Եւ ի՛նչ են այդ պայմանները։ Պատմութիւնը մի առ ցոյց կ'տայ քաղաքակիրթ կոչուած ազգերու զարգաց-ման պատճառներն, որ՝ եթէ ներելի է ըսել, ինքնածին,

հողածին չեն, այլ խառնածին։ Հարկ չկայ պատմութեան հին էջեր կրկտել նկատելու համար թէ ի՛նչպէս քաղաքակրթութիւնն հիմալայա լեռներէն կ՚անցնի կ՚սփռի դաղթական, երկրակալական, արշաւական ընթացքով դէպ ի Եւրոպա, ինչպէս և յԵգիպտոս, և զանազան շրջաններ ընելէ ետև՝ հիմնական շրջումները կ՚դործէ ցեղերու, լեզուներու, սովորութեանց և բարուց մէջ՝ և ի վերջ հիմն ու կայան կուտայ այն ազգերուն որ՝ հետզհետէ իրարու վրայ ներդործելով իրենց դրական, դիտական, ճարտարական դիւտերով և լուսաւորութեամբ կ՚հասնին այն վիճակին ուր այժմ կ՚գտնուին, և իրաւամբ քաղաքակրթութեան հերոսներ կ՚կոչուին։ Քաղաքակրթութիւն՝ որու մէջ մէն մի յառաջադէմ ժողովուրդ՝ իր յատուկ բնաւորութեան, հանճարին, կարողութեան և հնարագիտութեան համեմատութեամբ իր բաժինն ունի, և ահա այս բաժիններուն գումարն է որով կ՚կազմուին ընդհանուր բարեշրջութեան տարրներն։

Բայց այս բարեշրջութիւնն ի՞նչ աստիճան հանրականութիւն ունի, և անոր մէջ մէն մի յառաջադէմ ազգի բաժինն ի՞նչ է, խնդիրներ են որ երկար ուսումնասիրութեան և ազատ բացատրութեան կարօտ են։

Սակայն բաւ կ՚համարինք հանևանցի ակնարկով մը անցնիլ։ Նախ՝ ակներև ճշմարտութիւն մ՚է որ երկրագունտիս վրայ քաղաքակրթութեան շրջանակը դեռ ևս շատ նեղ է։ Սոյն շրջանակին մէջ կ՚մտնեն Եւրոպա, Նոր Աչխարհի մի մասն, ինչպէս նաև Ասիական և Աֆրիկեան մի քանի երկիրներ, այնպէս որ անհուն տարածութիւններ տակաւին բարբարոսութեան և խաւարի մէջ կ՚դևդերին, հետևապէս չենք կարող ըսել որ քաղաքակրթիւնն հանրային նկարագիր մ՚ունի։ Իսկ երկրորդ կէտին գալով, անուրանալի է որ քաղաքակրթութեան ծաւալման ազդուսպէս սատար գտնուած են ոչ այնքան այն ազգերն որ դրականութեան, դիտութեան, ճարտարա-

դիտութեան կատարն հասած, ընկերային և քաղաքական շրջումներու առիթ տուած և նրբամտութեան, ճաշակի և գեղարուեստի օրինակ հանդիսացած են, որքան անոնք որ բարոյական անկումն ընաւորութեան, գործնական ոգւոյ և յանդուգն ձեռնարկութեան տէր, իրենց վարչային, տնտեսական, առևտրական և գաղթային ճարտարութեամբ անծանօթ բարբարիկ երկիրներ նուաճած են, թէև երբեմն բուռն միջոցներով, քաղաքակրթութեան բարիքը։ Սպանիա՝ իր անձուկ կրօնական դաղափարներով՝ իր սահմանին մէջ հաղիւ ուրեմն զարգացաւն, երկրակալութեան և ոսկեմոլութեան տենչով կ'քանդէ քան կ'շինէ Նոր Աշխարհն, Բորթուգալ՝ երբեմն հզօր ծովու վրայ, բաղդախնդիր ոգւոյն լոկ նուաճելու քան պահելու արհեստին մէջ յաջողակ, Իտալիա՝ թէև օտար իշխանութեանց երկարատև լծին ներքև՝ դրականութեան և արուեստից մէջ ոչ նուազ նշանաւոր, չունեցան հանրօգուտ ներգործութիւն, մինչդեռ Ֆրանսա, թէև գաղափարներու աշխարհին մէջ անմահ դունագեղ փառոս մը, թէև ընկերային, օրէնսդրական, կառավարական շրջումներու մէջ մնայուղ վերանորոգիչ և մեզ սկզբանց ու իրաւանց վերհանձն ախոյեան, կ'դղրդէ Հին Աշխարհի հիմերն՝ իր լեզուի, հիմնարկութեանց և նորաձեւութեան ներգործութեամբ, սակայն այդ ներդործութիւնն կը գադրի որոշեալ սահմանի մը մէջ, Գերմանիա՝ այդ իմաստասիրութեան և ազգագիտութեան աշխարհն՝ երբեմն պատակտեալ, իր նորագոյն կազմակերպութեամբ և հըզօր գլուխներու առատութեամբն իսկ՝ զուրկ կ'երևի այն վերհանձնական ձկտումներէ որ մեծապէս կրնան նպաստել ոչ միայն եւրոպական այլ և համայն աշխարհի քաղաքակրթութեան։ Ա.յլ և այլ ազգերու մէջ որ քիչ շատ կարևոր դեր ունեցած են երկրիս լուսաւորութեան և բարօրութեան գործին մէջ, ինչպէս Ռուսիա, Աւստրիա, առաջին տեղը կ'բռնէ մեկ կողմէ Ամերիկայի Միացեալ Նահանգք, միւս կողմէ Անգլիա, որ իրենց թևը կ'տարածեն ոչ միայն այլոց անհալելի աշխարհներու վրայ

և լուսաւորութեան, արհեստից, ճարտարութեան, վաճառականութեան չնորհներն կ'սփռեն, այլ և հետզհետէ գործունէութեան և համերաշխութեան գաղտնիքն կ'հաղորդեն՝ լոկ ծուլութեան, դանդաղութեան, կլօնամոլութեան և բարբարոսութեան մէջ դարերէ ի վեր տառապեցող հեռաւոր ժողովրդոց մէջ և այսպէս իրաւամբ կրնան կոչուիլ արդի քաղաքակրթութեան գերազանցապէս գործունի հերոսները։

ՄՈՒԹ ՕՐԵՐ

«ՄԵԳԱՑ ՏՐԻՏՈՒՐԸ» (Շար)

Ամեն արագութեամբ վազեցի գացի այն տունն ուր առջի դիշեր թողեր էի Վարսենիկը։ Ջարկի ուժգին հնչակն Սպասուհի մը դուռը բացաւ։ Հարց ու փորձ ըրի տիկին Ֆարմրի մասին, քանի դիտնալով որ, տան տիրուհիէն զատ, բոլոր տնեցիք այս անուամբ կ'ճանչէին Վարսենիկը։ Ջարմանօք իմացայ, որ, քիչ մ'առաջ, նէ տունէն ելեր էր հետիոտն և միայնակ։ Սպասուհին այնպէս կ'կարծէր որ նէ չպիտի վերադառնար, քանի որ այն առտու անտուկներն եկեր տարեր էին։

Այս լուրն որ առի՝ ամենէ առաջ իմ արտորանքս պարապեցի։ Անշուշտ ճամբուն վրայ մօտէն անցած և գինք տեսած չէի։ Այլ ոչ, այդ բանն անկարելի էր։ Շատ անձուկ էր այդ ուղին, լուսնակն՝ դեռ իր լոյսը կ'սփռէր։ Եթէ հանդիպէի Վարսենիկին, անտարակոյս պիտի տեսնէի։ Ինքն ևս պիտի տեսնէր զիս և պիտի կեցնէր։ Կարելի չէր որ իմ բռնած ճամբէս գացած լինէր։

Բայց ո՞ւր էր։ Ո՞ր կողմն պարնել պարտաւոր էի գինք գտնելու համար։ Այս խնդիրն ինչ կերպով որ նկատէի — թէև համոզուելու անյօժար — ստիպուած էի որոշել որ նէ Ռօտին տանող ճամբան բռնած էր։ Ուրիշ ճամբայ մը չկար։ Նէ գացած էր, ինչպէս որ ես կ'երթայի, Ֆէրրընտը դիտաւորելու։ Թերևս տունէն ելած էր ինձ գալու մտօք, բայց անգամ մ'ևս այն

մարդը տեսնելու վախ մը — անոր գլխուն չանգ իմանու-թիւններ տեղալու նպատակաւ, ինչպէս սրտագին կ'յուսայի — փոխել տուած էր իր դիտաւորութիւնը։ Սակայն, ինչ որ լինէր իր նպատակն, ապիրատը տեսնելու համար ճամբայ ելած էր։ Եւ իմ սիրտս կ'ճմլուէր քանի կ'համոզուէի յիշելով որ նա մեր-ժած էր ինձ ընկերանալ՝ այս առարկութեամբ թէ բան մ'ու-նէր ընելու տունս գալէն առաջ։ Այդ բանն, ինչպէս այժմ կը յայտնուի, ուրիշ բան չէր այլ միայն . . . տեսնել մարդը։

Երբէք, եթէ հնարին է ինձ, չպիտի թողում որ իր ձայնը վարսենկան ականջին հասնի։ Երբէք չպիտի թողում որ գի-բար տեսնեն. երբէք իր պղտոր մտան անգամ չպիտի դպի թշ-ուառ կնկան, պիտի երթամ և իր ու ապիրատին մէջ տեղ կե-նամ։ Վասն զի եթէ դէմ առ դէմ գան, սրիկան նէրա սիրտը պիտի վիրաւորէ։ Վարսենիկ պիտի զայրանայ, պիտի սպառնայ։ Այն ժամանակ վատն ուրիշ հնար մը պիտի խորհի. գութ պի-տի հայցէ, պիտի երդնու թէ տակաւին կ'սիրէ, խոստումներով պիտի հրապուրէ զինքը։ Իսկ վարսենիկ մտիկ պիտի ընէ, պիտի վարանի, թերևս հաւանի և վերստին ծուղակն ընկնի։ Ահա այն ատեն կորսուած պիտի լինի նէ ընդ միշտ ինձ համար։ Այժմ իմ աչքիս առջև այնքան անարատ է որքան որ առաջին անգամ տեսայ զինքը։ Ուրեմն պարտիմ փութալ, հասնիլ իրմէ առաջ, գտնել իր մատնիչն և, եթէ հարկ լինի, զանի գետին տապալելը։

Երբ դառնէն ելայ՝ դիտեցի որ մեծ և չանկարծական փոխ-խութիւն մը տեղի ունեցած էր երկնից երեսը։ Այնպէս երևա-ցաւ ինձ որ՝ երբ մի քանի վայրկեան անցուցի տան մէջ որպէս զի ընելիքս որոշեմ, թանձր անպեր դիւցուեր չորս կողմը պա-տեր էին կազմային մթութիւն մը կ'տիրէր, այնքան մութ էր որ դուրսը կանգ առի, գրպանէս լապտերս հանեցի և մի քանի փորձերէ ետք հազիւ կրցայ վառել։ Ապա՝ անհամբեր ընկայ ճամբայ արագօրէն վազելով։

Նոյն պահուն հովը երեսիս կ'զարնէր ուժգին։ Ցանկարծ դէմքիս վրայ զգացի ձիւնն որ կ'ծակծկէր և կ'կուրցնէր զիս։ Ճամբուն երկու կողմը գտնուած անտերև ճիւղերէն կ'գոռար հովիւ։ Ձեան գունտեր ապիս անդին կ'պտոյտէին մոլորագին։ Այդ մռայլոյ վիճակիս մէջ անգամ կարող եղայ դիտել թէ՝ երբէք այսպիսի զայրագին ձիւնաբեր փոթորիկ մը չէր պա-տահած Անգլիա, կամ նմանն այսպէս չանկարծ չէր հասած։

Եւ՝ ինձ պէս Վարսենիկ դուրսն էր, այդ սոսկալի մրրկին խաղալիկ մը։ Տէ՛ր Աստուած, թերևս հոլորէր ճամբուն վրայ, և բոլոր դիշեր թափառական դէս ու դէն չրջէր։

Այս երկիւղն իմ քայլերս փութացուց։ Կառապի փոթորկին դէմ կուրծք տալով կ'վազէի։ Նոյն պահուն՝ Սըր Մկրվին Ֆէրրընտ և վրիժառութեան գաղափարը մաքէս թռան։ Իմ մէկ հատիկ փափաքս էր գտնել Վարսենիկը, տուն տանիլ զինք և անվտանգ տեսնել իմ յարկիս ներքև։ Անդուլ մաքառելով հոգւին դէմ կ'ըսէի իւրովի, — Անտարակոյս՝ չատ հեռու չպիտի լինի Վարսենիկ։ »

Շարունակ աչքս չորս դին էր, թէև կարելի չէր շատ բան նշմարել, քանի որ, չրջապտոյտ ձեան պատճառաւ ամեն ինչ ծղմէ մի քանի քայլ անդին աննշմարելի էր։ Ականջներս կ'սրէի որպէս զի տկար ձայն մը, կամ թեթև չչուկ մ'իսկ լսեմ, անդադար կ'քալէի՝ ճամբուն այս և այն կողմը տանելով լապտերիս լոյսը։

Սիրտս թունոտ մէջ էր որ մի գուցէ՝ Վարսենիկ սպիտակափայլ մրրկին դէմ դնելու անկարող, ձիւնակոյտի մը ներքև ընկած լինի, և եթէ իրաք այսպէս էր, անտես պիտի անցնէի։ Եւ այս աղէտն ուրիշ բան չէր նշանակեր այլ միայն իր մահը։

Ա՜խ, ինչու իր խոստումը չկատարեց։ ինչո՞ւ այն անիրաւ մարդը դիմաւորելու ելաւ։ Եւ միթէ կարելի՞ է որ Վարսենիկ սիրէ այն անօրէնն։ Եւ ես երած սիրտս սփոփելու համար կ'աֆորժէի յիշել առջի իրիկուն արտասանած գառնաղաղն խօսքը։ — Վասիլ, աստո՜ծ ես երբէք մարդ մը։ »

Ո՛չ, նէ չէր կրնար սիրել այդ մարդը։ Այս խօսքը նորէն դրգռեց իմ ոխս։ Ո՞ւր էր Ֆէրրընտ։ Իմ յապաղումս և այլ պարագաներ ի հաշիւ առնելով՝ հարկ էր որ ցարդ անոր հանդիպած լինէի։ Ո՛ դիտէ, թերևս օդին վատութենէ ահարեկ՝ որոշեց Ռօտին մնալ այս դիշեր։ Գոնէ սայդ լինէի որ Վարսենիկ անվտանգ իր տան մէջ կ'գտնուէր, սիրտս պիտի հանդարտեր, և մանաւանդ՝ ո՞րքան գոհ պիտի լինէի եթէ թշնամիս դիմացս ելնէր այս ամայի ճամբուն վրայ, այս ահռելի փոթորկին ժամանակ։

Սակայն Վարսենիկի նշմարն իսկ չկար։ Ահա այն տեղն ըսկսայ նորէն ծփալ տարակուսանքի մէջ, ինչ աղէտալի բան, եթէ իրաք անտես անցած իմ քովէս։ Բայց կարելի է այս պահուս իմ տնակս կ'գտնուի և կ'ջորտանայ որ ես տարակայ եմ։ Շուարեր

մեացեր էիր Ո՞ր կողմը գարնեմ, յառաջ քալեմ թէ ոչ ետ դառնամ։ Սակայն ինչ սոսկալի անձկութեամբ սիրտ պաշարուէր երբէ ետ դառնալով վարսենիկս տունը չգտնէի։

Պահ մը կայ առի՝ տատամսոտ՝ ճամբուն կեդրոնը։ Արեանս չրջանն երագելու համար սկսայ բնաղդով ձեռներս իրարու գարնել։ Սրսիուքը պիս առաւ. այս ահռելի, աննման միջոցին դէմ բաւական լաւ հագուած չէի։ Տունէն փութով ելեր էի։ Թէև քալս արագ, բուռն էր չարժումս, բայց ոտքս ու ձեռքս սկսեր էին սառիլ և երեսս ծակծկիլ։ Երկի՛ն. հասիր ինձ օգնութեան որ ուղիղ որոշում մ՚ընեմ, հասիր։ Արդեօք ուղիս չարունակե՞մ թէ ոչ ետ դառնամ։

Որոշում ընելու վրայ էի, երբ յանկարծ ինձ մօտ, վայրագ թնդիւն մը, սոսկալի քրքիջ մը լսեցի, այնպէս որ կարծես արիւնս սառ դարձաւ։ Իսկոյն՝ յորձանուտ, ալեծուփ ու սրավար ձեան մէջէն դուրս ելաւ բարձր սպիտակ կերպարան մը։ Չովանման անցաւ քովէս, բայց դիտեցի որ նոյն ինք վարսենիկն էր. փնտռածս գտած էի։

Սակայն վայրկենի մը մէջ անհետ եղաւ վարսենիկ, մինչ ես հաղիւ սթափեր էի պիս նոյն վայրը գամող սարսափէն։ Իսկոյն ճամբայ ելայ և չուտ չուտ վազելով սկսայ սրռալ. — վարսենի՛կ, վարսենի՛կ։

Հասայ սիրականիս մօտ, բայց խաւարն այնքան թանձր էր որ անոր դպչելէն եաև միայն կարող եղայ իր ստուերային, ճիւաղանման կերպարանը տեսնել։ Թևերս բանալով գինք գրկեցի, մինչ նէ կ՚տարուբերէր իմ թևերուս մէջ բռնադէս։

— Սիրականդ իմ վարսենիկ, ես եմ, ես Պասիլն — ըսի ահկանջին փսփսալով։

Կարծես թէ ձայնս հանդարտեցուց գինք, կամ լաւ ևս ըսեմ, դիմադրութեան վերջ տուաւ։

— Փա՛ռք Աստուծոյ, գտայ քեզ վերջապէս. չուտ չուտ դառնանք տուն։

— Դառնա՛նք. ո՛չ. յառաջ գնա՛, գնա՛ — բացագանչեց նէ։ — Գնա՛ աւելի վեր, քիչ մ՚ևս յառաջացիր . . . սոյն մերկալի ձեան մէջ, Գնա՛ մինչև որ աչօքդ տեսնես թէ ինչ թաղուցի իմ ետիս։ Գնա մինչև որ « Մեղաց տրիտուրը » տեսնես։

Այս խօսքն ուսմբի մը ներգործութիւնն ըրաւ իմ վրայ։ Սոյն մթնալատ գիշերը՝ կարող էի տեսնել վարսենկան դէմքն որ ճիւնաշող կնդուղէն աւելի սպիտակ էր։ Կարող էի նշմարել իր խոշոր, անշարժ սև աչերն անպատում սոսկումով լի։

— Սիրականս, խնդրեմ հանդարտէ — ըսի և իր ձեռները ձեռացս մէջ առնելու ջանացի։

Երբ իր աչը բռնելու փորձ կ'ընէի, բան մ'ընկաւ վար և՝ թէպէտ ճամբան ձիւնապատ, մետաղեայ ձայն մը լսեցի այդ առարկան դետինը դպելով։ Մեքենապէս վար ծռեցայ և զայն վերցուցի։ Այս միջոցին վարսենիկ վայրագ ճիչ մ'արձակեց, իմ ընդարմացած ձեռքէս թռաւ, և կրկնելով պայրագին. « Մեղաց տրիտուրը » աներևոյթ եղաւ խոր մթութեան մէջ։

Եւ երբ իր եռւէն պնդեցի, դող մ'առաւ դիս զգալով չափիմամբ թէ ինչ էր ձիւնոտ գետնէն վերցուցած առարկաս։ Փոքրիկ հրացանակ մ'էր։ Թէև, ինչպէս յայտնի է, մետաղը պաղ էր, կարծես թէ կրակի պէս կ'այրէր դիս։ Այսպէս վազելու միջոցին՝ ներքին դրդմամբ, անխոհեմաբար, զէնքը հեռուն նետեցի, իզմէ չատ հեռու։ Եւ ինչու համար նոյն դիշերն այդպիսի զէնք մը վարսենիկի ձեռքը կ'գտնուէր։

Խենթի պէս կ'վազէի, բայց երկար չտևեց այս վազքս։ Ոտքս քարի մը զարկի և վար ընկայ՝ գրեթէ կարկամած և ընչաստաւ։ Մի քանի վայրկեան անցաւ մինչև որ քիչ մ'ետք զինքս գտայ և վերստին կանգ առի։ Նոյն պահուն վարսենիկ այնքան յառաջ գացած պիտի լինէր իր վայրագ արագութեամբն, որ դրեթէ անկարելի կ'երևէր ինձ անոր հասնիլ։

Եւ սակայն, տարօրէն, անզսպելի զգացում մը կ'մղէր դիս։ Այն մահաբեր զէնքին չմումն դեռ ևս կ'այրէր ձեռքս։ վարսենիկի խօսքը դեռ կ'հնչէր ականջիս։ — Շուտ ընդ առաջ, գնա՛ վեր ճամբան ի վեր քիչ մ'ևս — գոչեր էր նէ։ Ի՞նչ ըսել կ'ուզէր։ ի՞նչ պատահած էր նոյն դիշեր։

Պարտիմ քայլերս այլևս ուղղել։ պարտիմ տեսնե՛լ, իմանալ։ վարսենիկ այս պաղ, մութ և սոսկալի դիշերով կ'խուսի անդուլ, բայց վերջապէս իր կաղմուածքը կնկան մը կազմուածքն է։ Անշուշտ՝ շուտով պիտի յոգնի, թերևս ճամբուն վրայ պիտի փուռի անզգայ։ Բայց իմ միտքս հետզհետէ պաշարող երկիւղալի կասկածները պէտք է որ փարատին։ ապա կարող եմ շարունակել իմ խուզարկս։ Ի՛նչ որ լինի, հարկ էր պատահածն իմանամ։

Վերստին դարձայ մրրկին դիմազրաւ։ Տէր Աստուած, այսպիսի դիշեր մը կրնայ ամեն բան պատահիլ։ Ընդ առաջ անցայ՝ շարունակ լսելով ձայն ճամբուն կեդրոնն և մէն մի կողմն արձակելով։ վարսենիկն իմ ձեռքէս խոյս տուած տեղէն քիչ

մ՛աւելի առաջ անցայ։ Ապա՝ յանկարծ՝ աղաղակ մը ձգելով զարհուրած, անշարժ կանգ առի։ Իմ ոտքիս տակ՝ արահետին մէջև, լապտերիս նշոյլով շողացող սպիտակ կոյտ մը տեսայ, և երբ ակնարկս անոր վրայ ընկաւ, իսկոյն ըմբռնեցի վարսենկան վայրագ բացագանչութեան իմաստը.—Մեղաց տրիտո՛ւրը, Մեղաց տրիտո՛ւրը։

ԳԼՈՒԽ Գ.

ՔՆԱՃԻՐ Կ՛ԱԴԱՉԵՄ

Մեռա՞ծ. այո՛, ղեռ ևս իր մօտ ծուներ չդրեր, իր վերարկուին կոճակները չհաներ էի, ձեռքս լանջին վրայ չդրեր էի, և արդէն դիտէի որ մեռած էր։ Դեռևս լապտերս իր սպիտակ երեսին չտարեր էի, և արդէն գուշակեր էի թէ ո՞վ էր այդ մարդը։ Սըր Մէրվին Ֆէրրընտ իր մեղքը կեանքովը քաւե՛ր էր։ Բժշկական մեծ հմտութեան հարկ չկար իր մահուան պատճառն իմանալու համար։ Այնպէս կ՛երեւէր ինձ որ մօտէն գնդակ մը արձակուելով սրտէն թափ անցեր էր։ Վայրէն մ՛իսկ չհանելով գետին տապատ ընկած պիտի լինէր։ Եւ որո՞ւ ձեռօք, անշուշտ իր անիրաւած կնկան ձեռօք։

Իր անշարժ դէմքին վրայ տակաւին հեգնական ժպիտ մը կ՛թռթռար։ Կարող եմ երեւակայել իսկ թէ ի՛նչ խօսք թռաւ բերնէն, երբ արագ և յանկարծակի՝ առանց զղջման կամ խոստովանութեան վայրկեան մը տալու, մահաբեր գնդակն իր կեանքը զրաւեց։ Պահ մը կանգուն և կենսալից մնաց, թերևս ծաղրելով այն անձն որ իրեն վտահեր և վար մատներ էր, յաջորդ պահուն՝ ղեռ ևս իր սկսած խօսքը չաւարտած, անկենդան ընկած է այդ անձին ոտքը, ձեան տարափով որ սկսեր էր իր պատանքն յօրինել։

Ա՛հ, այդ վրէժ՛ էր, արագ, մահաբեր վրէժ. բայց ինչո՞ւ, ա՛հ, ինչու՜ նէ վրէժը թափեց վարսենիկ, իմ աննման վարսենիկն, մարդասպա՞ն մը։ Ի՛հ, այս չատ ահռելի, չատ զարհուրելի՛ բան է։ Կ՛երևի թէ կ՛երազեմ։ Վրէժխնդրութեան բոլոր խորհուրդներս ցրուեցան։ Նոյն պահուն գուբ, միայն գուբ կ՛ըզդայի այն մարդուն համար՝ որ կենդրաւ կ՛մնար ծաղիկ հասակին մէջ։ Երբ գիտէի թէ նա կենդանի էր, կարող էի ապագան դիտել և երևակայել այն վայրկեանն ուր դէմ առ դէմ կե-

ցած պաղարեամբ պիտի ջանայինք զիրար սպաննել։ Բայց հիմակ որ մեռած էր, զինք այլևս չէի ատեր։ Ա՛հ, մահը նուիրական բան մ՚է։ Մեռա՜ծ, Սրր Մէրվին Ֆէրրընտ մեռած, Վարսենիկի ձեռամբ սպաննուա՜ծ։

Այդ անհնար է որ ստո՛յգ լինի, այդ սէտք չէ որ ստո՛յգ լինի։ Եւ սակայն կ՚սարսռէի քանի կ՚յիշէի թէ ինչ կրքով կ՚արտասանէր այս խօսքն. — Պասիլ, երբէք ատած ես մարդ մը։ Տագնապալի մեղմ աղաղակ մ՚արձակեցի յիշելով թէ ինչպէս իր ձեռքէն ընկած հրացանակն նետեր էի հեռու — ճիշտ այն ղէնքն որ այս սոսկալի գործը կատարեր էր։

Վարսենիկի ձեռօք սպաննուած։ Եւ այս սպանութիւնը չէ թէ բարկութեան անզսպելի և յանկարծական թափի մը բերմամբ, այլ կանխակալ դիտաւորութեամբ կատարուած է։ Անշուշտ՝ դինուած գացած էր զինք դիմաւորելու. սրտին ուղղած է դնդակն, տեսած է անոր անկումը։ Այն ժամանակ և այն ժամանակ միայն նկատած է ահաւելի իրականութիւնն և մոլեգնաբար հեռացած է նոյն վայրէն։ Ո հ, խե՛ղճ աղջիկ, եղկելի՛ աղջիկ։

Այս տագնապալի տեսարանին առջև գլխովին չուարած՝ ոտք ելայ և դիակին մօտ պահ մը կանգ առի։ Ահա այս վայրկենին էր որ զգացի թէ որքան կ՚սիրէի այս ոճիրը գործող կինը։ Իմ վշտիս և սոսկումիս վրայ ներ ի վեր կ՚սիրէր սէրս։ Ի՛նչ որ լինէր, պարտ էի ազատել Վարսենիկն — արդարութեան ձեռքէն ազատել, ազատել այն գայրագին տարրներու բռնութենէ որու կ՚դիմագրաւէր նոյն պահուն իր վիպիկասուն մարմինը։ Եւ երբ յիշեցի թէ ինչպէս երէկ փնտռեց զիս և պատմեց իրեն ընդունած անիրաւութիւնն, ինչպէս՝ քանի մը վայրկեան առաջ՝ իմ քովիս հեռացաւ իրրև վայրագ, խելագար, կոյր արարած մը նոր մթութեան մէջ ապաւէն փնտռելու, երբ միտքս բերի իր կրած նախատինքն, որ իրեն դրգիռ եղաւ այդ մարդուն արիւնը թափելու, երբ բաղդատեցի իր սրտի վիճակն այն վիճակին հետ ուր առաջին անգամ զինք ճանչեր և սիրեր էի, գութն սկսաւ մարիլ սրտիս մէջ, իմ զգացմունքս աւելի անաչառ և մթին ուղղութիւն մ՚առին և տակաւ սկսայ, ակն ընդ ական կանոնին համեմատ, անբասիր հանել, թէև ցաւօք, Վարսենկան սոսկալի գործը։ Արդարև կամ անիրաւ, նէ իմ սիրած կինս էր, և երդում ըրի զինք ազատել իր ոճրին ծանր հետևանքէն, մինչև իսկ — Աստուած ոյժ տայ ինձ — եթէ զալիք ամբաստանութիւն իմ գլուխս իջնէր։

Սակայն արդարութենէ խոյս տալու խորհրդի մը բերմամբ չէր, որ նախ հարկ սեպեցի բառնալ դիակն և տանիլ ճամբուն այն կողմն ուր սորին հոգակոյտ մը կար որու վրայ կ'բարձրանար ցանկապատ մը, այլ միայն մեռելի մը հարկ եղած պատկառանքն էր որ զիս կ'դրդէր այդ ընթացքը բռնելու։ Չէի կարող այդ թշուառն թողուլ արահետին մէջ տեղ որ առաջին անցորդը անոր վրայ գլորի։ Անշուշտ վաղն երևան պիտի ելնէր, այդ դիակն, վաղն ամեն կողմէ ազաղակ ու վայնասունը պիտի բըրդէր վաղն վ՚արսեներիկ, իմ վ՚արսեներիկս թերևս պիտի . . . ո՜հ երկինն, երբէ՛ք, երբէ՛ք, ոչ երբէք։

Այսպէս Սըր Մէրվին Ֆէրրընտի դիակն ակնածութեամբ մեներուոր ճամբուն մի կողմը տեղաւորեցի. ջանացի իսկ զոցել իր ապականման աչերն և իր յատուկ թաշկինակով երեսը ծածկեցի։ Ապա՝ երբ անմուռանալի երկիւղ և վիշտ մը սիրտս կ'տագնապէին ճամբայ ելայ որպէս զի անբաղդ և ողորմելի ազգիկը փնտռեմ։

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

ԱՂԻՈՐ ԻՐԻՑԿԻՆԸ

Թո՛ղ ներեն ընթերցողք, խորագրեալս Աբէլէ մէջ սկսայ, և ահա, կամքէս անկախ, Աբէլէն Մոլս մէջ զայն ամբողջացնել հարկադրուած եմ, ինչպէս եղաւ Նաէլան Պատրիարքին կեանքի շարունակութիւնը, և ինչպէս պատահեցաւ՝ Ղազարոսեան Քրիստոսատուր էֆէնտիի կենսագրութիւնը, որոյ Առաջին և ոսկերչական մասը՝ նախապէս Հաչբէնէի մէջ հրատարակուեցաւ, և ապա անոր երկրորդ մասը՝ Աբէլ Մոլս մէջտեղ լոյս տեսաւ, առանց բան մը աւելցնելու, առանց սորագիտ մը յապաւելու . . .

Նշմարեցաւ, Տէր-Գէորգ Արծրունի Աւագ քահանային վարքագրութիւնը ձեռքերէն Շուբենէի մէջ ձեռնարկեցի տարբոյս սկիզբը, և չեմ գիտեր թէ՝ ո՞ր պիտի յանգեցնեմ անոր վախճանը տարբոյս վերջը։

Այսպէս թէ այնպէս, գրական մշանջևնաւոր աղատ կեան մը չունեցողին, շարժական կամ ապագնդական բեմ ունեցողի մը ճակատագիրն այս է։

Այսօր հո՛գ, վաղը՝ հո՛ն . . . .

* * *

Աղ-որ - Իրիցկինը՝ ի մէջ այլոց, մետաքսէ, բուրդէ (էֆ էֆէյ) պարտէզ մը կարգադրած, յարդարած էր, և ուր ճարտարութեամբ զետեղած է տեսակ տեսակ սաղարթախիտ թուփեր՝ գեղատեսիլ թռչուններով զարդարուած։ Պարտէզին մէջ արուեստական քարերով աւազան մը յերիւրած է՝ շրջապատեալ պուրակներով և շաղափատեալ կանանչ բազեղներով, տերևազարդ ճիւղերով, ծաղկախիտ շիւղերով և ուռճայից ոստերով։

Արդարև ճաշակաւոր յերիւրում և անագիւտ դասաւորում մ'է՝ մանաւանդ այդ աւազանին և կամ պաղպաջուն լճակին մէտը կտկտացող հաւերը՝ իրենց ձագուկներովը համախառնուած։ Քիչ հեռուն՝ տեսնելու արժանի է, այն մանաղեալ ոչխարները՝ որոց հովուական՝ թաւուտներուն վրայ տարածուած ու ընկողմանած, իւր եղեգնեայ սանդալական սրինգովը՝ Խշրեւևէ կը տօնէ, գարնանային բիւրազան ծաղիկներով պսակուած։

Աղ-որ - Իրիցկինը՝ յանձնարարեալ գործերը խնամով կը պատրաստէր, որ տեսնողներուն աքանչացման առարկայ կ'ըլլային, ինչպէս հետևեալ միջադէպն յայտնի է։

Առաջնակարգ վաճառական Հանգուցեալ Գափամաճեան Մանուկ Աղան՝ իւր ազնուաշունք Պէադրիս աղջիկը ամուսնացուցած տանն Քիւրքճիխանէյեան կարապետ էֆէնտիի հետ; բուսական գործեր յանձնարարուած է Իրիցկինին։ Թէև կարգ մ'ալ փարիզէն բերել տուած են, հարսանիքի օրուան շուտով հասցնելու համար։

Երբոր փարիզէն բերել տրուածները կը տեսնայ Իրիցկինը, ցաւելով և հառաչելով մը կըսէ։ « Ատոնցմէ աւելի ազէկները՝ մ'րթէ՝ ես չէի՞ կրնար շինել հօ՛ս »։

Ա՛ռ այս Գափամաճեան ընտանիքը կը պատասխանէ՝ « Հոգ չէ՛. թէ որ իրաւցնէ ատոնց նմանը դուռ ալ շինելու ըլլաս, բացէն քեզի ալ 50 ոսկի պարգև կը տրուի »։

Եւ արդարև գեղարուեստի սիրահար և ձեռնհաս Իրիցկինը՝ փարիզեան ապրանքներէն շատ աւելի ազէկները ընդ փոխ պատրաստելով, Գափամաճեան ընտանիքին կը ներկայացնէ, որ գոհունակութեամբ ընդունելով զայնս, խոստացուած դումարը նուիրելէ զատ, եւել եւելոք ալ վարձատրած և քաջալերած են համբաւաւոր ձեռագործուհին։

Այսպէս, Երամեան Իրիցկինը լաւ ատակ կը շահէր և կը շահեցնէր, ու գիտէր ատակին յարգը։

Ձեռագործներու աշխատութիւններէ զատ, ասիլ-այի առևտուրով ալ կ'զբաղէր։

Քաջ կը ճանչնար հին դրամները, ասիլ-ները։ Եւ այս պատճառաւ տեսակ մը ընտանեկան սեղանաւորութիւն ալ կընէր, և տոկոսով՝ իւր յաճախորդներէն ոմանց փոխ դրամ կուտար։

Սրբուհին՝ (այս էր Իրիցկինին աւազանի անունը) հետզհետէ հայերէնը աւելի կատարելագործեց, և տանը մէջ՝ իւր զաւակներուն դաստուն ինքն էր և իրենց առաջին ու նախասիրական դասը ըրած էր առաւօտուն կատարել այդ մայրական - դաստիարակի պաշտօնը։

Սրբուհի՝ անբաժին բարեկամի տեր, պարկեշտ և կրթեալ տիկին մը լինելով, դրեթէ բոլոր բարձր դասու ընտանեաց և անձնաւորութեանց յարգելին ու սիրելին եղած էր։

Մինչ կ'երթևեկէր մեծամեծաց ամարանոցները, ապարանները և բնակարանները, և ձեռագործի դասեր կ'աւանդէր աննախանձաբար։

Մասնաւորապէս ի խաղիւղ՝ Պուրնուզեան ազնուաշունչ ցեղով Աղային բնակարանն երթալով նազելափայլ և օժտեալ բարեկիրթ աղջիկներուն ձեռագործ, ու այլ և այլ թուչուններ ձեռակերտելու արուեստը կը սովրեցնէր՝ հանդերձ բնական պատմութեամբ։

* * *

Սրբուհի Իրիցկին՝ չորս զաւակներ ունէր, չորսն ալ այլ և այլ ձիրքերով օժտեալ, որոց երեքը աղջիկ, և մէկը՝ մանչ էր։

Անդրանիկը՝ այսօր Տիկին Պայծառ Ֆասուլեաճեան — Ծանօթ դերասանուհին — և միւսները՝ Սանդուխտ, Սարգիս (1) և Վիրգինիա։

Սրբուհի Իրիցկին՝ բուսաբանական և ծաղկաբանական լեզուէն ալ կը հասկնար, և իւրաքանչիւրին՝ ո՛ր ցեղին, ո՛ր ընտանիքին, և կամ ո՛ր սեռին ու տեսակին վերաբերիլը քաջ ուսումնասիրած ըլլալուն, գարնան, ամրան, աշնան և ձմրան հատընտիր ծեղիկներէն և անուշահոտ բոյսերէն հաւաքածոյ մը պատրաստած, և խնամով չորցուցած էր, ոչ թէ բուսաբանական կամ ծաղկաբանական ալբո՞մ մը կազմելու համար, այլ այս ծաղիկներէն իւր չորս սիրասուն զաւակացը մանրանկարները յօրինելու համար՝ գեղարուեստական ճաշակաւ։ Անդրանկուհին պայծառն գարնան պայծառափայլ ծաղիկներով, Սանդուխդն՝ ամրան տօթակէզ բոյսերով, Սարգիսը՝ աշնան ցօղաւնիներով, Վիրգինիան՝ ձմեռնային վեր—գին վարդերով և պահարիչէի վէմ-ներով։

Իրիցկինը՝ իր բոլոր արուեստագիտութեամբը և խանդավառութեամբը գիշեր և ցորեկ կ'աշխատէր զաւակներովը, բացի Սանդուխտէն, որ թէև շատ խելացի, աշխատասէր և հրեշտակատիպ աղջիկ մ'էր, բայց անագորոյն պարկեանք՝ հնգետասանամեայ ծաղիկ հասակին մէջ խլեցին իւր ծնողացը գրկէն դժբաղդաբար։

Վերջապէս, Սրբուհի Իրիցկին՝ ոչ միայն եզական էր ձեռարուեստի և գեղարուեստի ճիւղերուն մէջ, այլև օրինակելի և տիպար մայր մ'էր, որ հոսկ ապա իւր չարաչար աշխատութենէն՝ կուրծքի հիւանդութենէ մը բռնուեցաւ, և վ. սեմ. Տօքթ. Խորասանճեան էֆէնտիի խնամատարութեամբը դարմանուեցաւ։

Այդ ժամանակները՝ Իզմիրի Հայոց վ. Թատրոնը նոր շինուած էր, նախաձեռնութեամբ վ. անդեցի Սարգիս Մերզա բարեչիշատակ վաստակաւն երիտասարդին։

---

(1) Պ. Սարգիս՝ տաղանդաւոր դերձակ մը լինելով հանդերձ, ձեռագիտութեան համար մանկաւարժ գիտեր, եւ ամեն կարգի թրանեներու համար՝ արուեստական նմոյշներ յօրինած է։

Շահումեան Պօղոս էֆէնտին՝ ալ իմիմրէն մպրաքաղաքս եկած էր մանաւորապէս, դերասանական խումբ մը կազմելու համար։

Միւհէնտիսեան Յովհաննէս և Գրիգոր էֆէնտիները՝ Սրբուհի Իրիցկինին հօրեղբօր որդիներն էին։ Ցեսան որ Իրիցկինին հիւանդութիւնը՝ թեւ քիչ մը ապաքինած, բայց Պօլսոյ ձմրան օդն չի յարմարիր անոր ֆիզիկական կազմուածքեանը, ուստի Տօքթ. Խօրասանճեանի հետ միանալով՝ կը համոզեն Իրիցկինը, որ իմիմր երթայ յօդափոխութեան։

Պայծառը՝ արդէն հանդերձեալ էր 25 ոսկի ամսականով Շահումեան Պօղոս էֆէնտիին հետ իմիմր երթալու։ Իրիցկին—մայրն ալ տրամադրուեցաւ և ընկերացաւ դերասանուհի աղջկանը, իւր միւս զաւակներն հետը առնելով։

Սակայն իմիմրի մէջ Իրիցկինը՝ 5 ամիս հազիւ ապրելով, 39 տարեկան հասակին մէջ մեռաւ, բաւական պատրաստ դրամ—որ 1500 ոսկի կը ենթադրուի—, գոհարեղէն և թանկագին հնութիւններ թողլով, որոնք իրեն հետ մէկ տեղ մեռած և աներեւութացած են . . . ,

Կըսուի թէ՝ արուեստագէտ մը կլլած և մարսած է որբերուն ժառանգութիւնն եղող այդ դրամական հնութիւնները. իսկ յայտնի չէ՝ թէ ո՞ր ծնոցին անոր հնչուն դրամները։

Չարցուած չէ իսկ, կըսեն՝ ցարդ, ժառանգորդացը կողմանէ այդ իրողութիւնը, կարծուելով թէ՝ իմիմրի Ս. Աստփաննոս եկեղեցւոյն կտակուած է։

Մեռա՞ծ է տպաքէն Սրբուհի Իրիցկինը պանդիդութեան մէջ, բայց անմահ է նա՝ յանձին իւր աղջկան, Տիկին Պայծառ Ֆաուստլեանճեանի, որ վաստակաւոր դերասանուհի մ՚է, բայց հանգոյն Իրիցկին—մօրը՝ ունի անգիւտ վարք, օրինակելի բարոյական, անյողդողդ նկարագիր, լաւ կրթութիւն, և աղնիւ բնաւորութիւն, որոց շնորհիւ՝ Պօլսոյ և Միջագիւղի, ինչպէս նաև Ռուսաստանի աղնուաշունչ ընտանեաց դրեթէ ընդհանուրին համակրութիւնը գրաւած է։

Մասնաւորապէս Տփխիսի մէջ՝ ընտանեաց քով մեծ համարում և շատ յարգ կը վայելէ։

1863 ին, Մոսկուայի մէջ Գոլէրըայի մեծկակ վաճառատունն բացած էր։ Կարևոր դրամագլխով, և 20 ի մէտ դերձակուհի և դերձակներ՝ իւր տրամադրութեանը տակ կ՚աշխատէին ու կ՚ապրուէին։

Քօնդէսներու ու պարոնուհիներու՝ ճաշակաւոր հագուստներ և շրջազգեստներ կը շինէր։

Տիկին Պայծառ՝ Ռուսաստանի ամէն կողմերը շրջած է ամուսնոյն հետ, ինչպէս նաև ի Տրապիզոն, ի Պրուսա, ի Սմլանիկ, Հերմիրնէ, ի Ֆիլիպէ, ի Թեքիրտաղ և այլ տեղեր, ու դերասանական շրջաններ կատարած է շարժական թատերաբեմներու վրայ։

Բայց Պայծառի բնատիպ շնորհքը՝ դերասանուհի կամ բեմի զարդ ըլլալէ աւելի, իւր արուեստագէտ Սրբուհի մօրը՝ արժանի պայազատուհի մը ըլլալուն երջանկութիւնն է, որ ըսել է, կեանքի շարունակութիւնը՝ մեծանուն ծնողքին։

Տիկին Պայծառը՝ մեռե՞լ չի ճանչնար։ Բայց մեռե՞լ քանի՞ն գիտե, անոր թագուն արժանիք մը, ծածկեալ տաղանդ մը ըլլալը։

Գիտէ նա Հայերէն, կը խօսի Տաճկերէն, կը գրէ Ցունարէն, և կը թեքէ Ռուսերէն։

Ասոնցմէ զատ, ներհուն պատմագէտի համբաւը կը վայելէ թատերական աշխարհին մէջ։

Ունի ընտիր ձեռագիտութիւն, իր մօրը բոլոր ձեռարուեստները գրեթէ գաղափարած է, ժառանգած է։

Եթէ նեղութեան մէջ հինայ կամ անձկութեան մէջ տատապէ, լաւ հնարագէտ է Պոյծառ։

Սուենկի կտորներով և ծովային ժամկներով, բոյսերով ու բրածոյներով աքանչելարուեստ վոսփորի կէօք—Սուլթին քնանկարները յերիւրած, արարչագործած է։

Եւ դեռ չատ չըներ, Տիկին Պոյծառ՝ ձեռարուեստի մի ինքնագիւտ հրաշակերտ ալ պատրաստեց։ Լուպեան, ոսպը, պիստակը (չամ—ֆըստըխին), ատոնց կեղևները (չէօփերը) մեկիկ մեկիկ համբերութեամբ և երկայնամտութեամբ՝ ծակելով, և գոյնզգոյն ներկելով զայնս՝ հետաքրքրաշարժ և արտակարգ զարդ մը, Խվէնի կամ դրապեզի վրայ դնելու զարդարանք մը յօրինած էր, և գազգիոյ աշխուաշուք դեսպանուհւոյն տանելով՝ համեստ դումարով մը (30 լիրա) վաճառած էր զայն։

Եւ իրօք՝ անհիւթական կարծեցեալ նիւթեր, սակառը նետուելիք քուրչի կտորներ, կամ պիստակի չէօբերն ու ոսպի կեղևներն իսկ, երբ ուղուելու ըլլայ, մգական հանճարին ձեռօքը ու աշխատասիրին ճարտար մատանց ներդաշնակութեամբը՝ տեսակ մը բանաստեղծութիւն կամ ամբողջ քերթուած մը չե՞ն դառնար, ճիշտ՝ գրուած, ոգուած և նկարուած բանաստեղծութեանց ու քերթուածոց պէս հմայաթափ, սրտառուչ և հոգեպարար միանգամայն։

Ա. Ց. ԱՑՎԱԶԱՆ

ՄԱՆԿԱՆ ԴԻԵՑՈՒՄԸ

The child is the father of man « Wordsworth » *

Դիեցումը նորածին մանուկը կաթով սնուցանելն է. դիեցման չորս գլխաւոր կերպեր կան։ 1 — Մայրական դիեցում. 2 — Ստնտուով դիեցում. 3 — Արուեստական դիեցում. 4 — Խառն դիեցում։

Ա. Մայրական դիեցում. — Առանց հակասութեան մայրական դիեցումը բնական և բարոյական օրէնքներու ամենէն համա-

* Մանուկը մարդուն հայրն է։

ձայնն է. մորը առաջին պարտականութիւնը իր աչխարհ բերած մանուկը ինքն անձամբ դիեցնելն է։

Մանկան վարդէ բերանին չը դպող այն սպիտակ ծիծը ի՞նչ բանի կը ծառայէ, կ'ըսէ Գաղիացի բանաստեղծ մը. «բնութիւնը մայրերու ծիծերը կաթով լեցուններով, կըսէ Պլուտարքոս, կը ցուցնէ թէ մայրը իր ծնած տղան կը պարտաւորի նոյն իսկ ինքն դիեցնել»։ «Մայրերը, կըսէ Մարք — Օրէլ, տղայ մը բերելով կէս մայր են, և իրենց պտուղը սնուցանելով ալ կէս մայր կ'ըլլան, որով այս երկու պարտականութիւնները կատարող, այսինքն տղաբերող և իր յատուկ ծիծերով դիեցնող կինը միայն կատարեալ մայր մը կըլլայ»։ Իր նորածինը դիեցնող կինը տղաբերող կինէն աւելի յարգելի մայր մըն է — Quoc lactat mater magis quam quae genuit — կըսէ Լատին հին առած մը որով հռչակաւոր մնացած հետևեալ պարբերութիւնը կրկնած է անմահ պիտակն տ'Ալեանպէր «իմ մխիթարիտ մայրս այն է որ դիս իր կաթով սնուցած է, բնաւ ուրիշ մայր չ'եմ ճանչնար»։

Մայրական դիեցումը չատ հին դարերու մէջ ի գործ կը դըներէին. Սուրբ գիրքը մեզ կը տորմրեցնէ թէ երբայեցի մայրերը իրենց զաւակները անձամբ կը դիեցնէին և անոնց համար մայրական դիեցումը նուիրական յատուկ պարտականութիւն մըն էր. Պօրտօի բարունապետը, Պ. Լէվի, կը հաստատէ թէ երբայական լեզուին մէջ վարձկան սրնդոսի նշանակութեամբ բառ մը չը կայ։ Հոմերոսը կարդալով կը տեսնենք որ Հէկիւսի՝ Հէկտորը և Պէնելոպ՝ Տելեմաքը կը դիեցնէր։

Հռոմայեցիք իրենց զաւակները իրենք կը դիեցնէին և մեռքերու մէջ կը մեծցնէին. իր անձը մայրական խնամիներուն նուիրելը և զայն տան մէջ դաստիարակելը իրենց մեծ վաստքն էր։ «Երբէք, կըսէ Պլուտարքոս, այնքան տիպղոզական բան մը չը կար որ հասարակութիւնը բռնէր որչափ իր զաւակը դիեցնող, լոգցնող և խանձարուրող կնոջ մը մտեներալը»։ «Առաջները, կը գրէ Տակիտոս, ամեն մարդ իր զաւակը ոչ թէ վարձկան ստուտի մը դրկաց մէջ, այլ մօր մը ծունկերուն և ծիծերուն վրայ կը մեծցնէր»։ Նոյն հեղինակը ուրիշ տեղ մը գերմանական բարքերուն վրայ դրելով կ'աւելցնէ. «Մանուկները ամեն տեղ անպաճոյճ կը թողուն, ամեն տեղ իրենց մայրերէն կը դիեցուին, ոչ սպասուհիի և ոչ ստնտուի կը յանձնեն, այս պատճառաւ հուժկու և ղեղեցիկ մարդեր կը պառնան որոնց վրայ մենք կը հիանանք»։

« Ի՞նչ պիտի ըսէին, կը դրէ Տբ Ա. Լ. Լապարթ, եթէ հեթանոսութեան այս մեծ պատմաբանները այսօր մեր մէջ գտնուէին. երիտասարդ քրիստոնեայ կիներ պիտի տեսնէին որոնց մեծագոյն մասը իրենց մայրական նուիրական պարտականութիւններէն այնչափ դիւրութեամբ օձիքնին կ'ազատեն »։

Պատմական այս կարճ տեսութիւններէն կ'եզրակացուի թէ մայրական դիեցումը նախնիքները մեր օրերէն չատ աւելի կը յարգէին, և սակայն ի դէպ է աստ յիշել կեսարներու ժամանակը որ կործանման առաջնորդող չայլութիւնը մայրերուն մայրական պարտականութիւնները չուտով մոռցնել տալով իրենց զաւակները վարձկան տնտուներու յանձնեցին։

Կաթոլիկութիւնը երրայեցիներէն ներշնչուելով մայրական դիեցումը պարտաւորիչ կարգապահութիւն մը ընել փորձեց, սակայն Դ. դարէն սկսեալ Սուրբ Անպրուաս կատարելապէս կը հաստատէ թէ բազմաթիւ քրիստոնեայ մայրեր իրենց պարտաւորութիւնները կը մոռնային, « Թոչուններուն իրենց ճագուկներուն տածած խանդաղատանքը, կըսէ նա, մայրերուն և հայրերուն զէպի իրենց զաւակները ունեցած պարտականութիւնները կը սորվեցնէ, մեր օրերը այս պարտականութիւնները ո՛ր աստիճան մոռցած չ'են . . . ։ Կը տեսնենք որ մայրերուն մեծ մասը իրենց ամենասիրասուն զաւակին իրենց ծիծերը տալ կը մերժեն. երբ վճարելու կարողութիւն ունենան զանոնք օտար տնտուներու կը յանձնեն, ուրիշ ո՛ր կողմ մարդկային նմանօրինակ անդթութեան մը կրնայ պատահուիլ . . . »։

Ինչ որ Անպրուաղ 1500 տարի առաջ կը դրէ, նոյնը կարելի է բոլորովին մեր դարուն վերագրել, որովհետև Պիւտարքոսին ժամանակը, բարոյախօսներուն և փիլիսոփաներուն գրածներուն հակառակ այսօր, Գերմանիոյ, Անգլիոյ, Գալլիոյ, Հօլանտայի և Պելճիոյ բարեկեցիկ դասուն մէջ բարեկիրթ կամ պարզապէս դիւրակեցիկ կիներէ չատերը իրենց զաւակները չը դիեցնելով զանոնք վարձկան տնտուներու կը յանձնեն։ Հազիւ կը գտնուին մի քանի մայրեր որ լաւ կերպով իրենց զաւակները կը դիեցնեն և կը կրթեն։ » Ի՞նչպէս չը քաջալերել խիստ հաղուագիւտ այն մայրերը, կըսէ Տբ Րէնէ Պլաշ, որ չեն ուզեր իրենց զաւակին առաջին ժպիտը և առաջին գգուանքը օտարուհիի մը թողուլ։ Դժբաղդաբար երիտասարդ հարսերը իրենց ընտանեկան չրջանակին մէջ խիստ քիչ կամ բնաւ քաջալերութիւն չեն գտներ. ասկէ զատ, նեղութիւն կրելու, յոգնելու և

երկար ատեն մանկան օրորոցին մօտ գտնուելու վախը, երկանը ձլասը, աշխարհային հաճոյքները կամ ընկերական պահանջատութիւնը, իրենց հասակին և հրապոյրներնուն կորսուիլը և չը գիտեմ դեռ ինչե՛ր . . . բոլոր ասոնք իրենց դիեցումը դադրեցնելու պատրուակներ են »։

« Սակայն և այնպէս կան քրիստոնեայ մտատիպար կիներ որ մեզ կը պատրաստեն կրօնուհիներու դաստիարակութիւնը, կըսէ Տ՛ Ա· Լ· Լապարթ· մտացածին տեսութիւն մը չէ այս, որովհետև վիևնոյն պրակին մէջ կը կարդացուի թէ Բրօֆէսէօր Թարնիէ ծննդաբերող կանանց հիւանդանոցին (Maternité) դլխաւոր վերաբերեալը, իր արուեստը գործադրած բարձր դասու յաճախորդներուն մէջ մայրական դիեցման թիւը ութնէն մէկ ըլլալը հաստատելու չը վարանիր· արդ յայտնի է որ Ֆրանսայի հարուստ դասակարգի կիները, որոնց ակնարկուած է, առ հասարակ աչխարհիկ դաստիարակութիւն մը ստացած չեն »։

Այս խօսքերը ապահովապէս կրնանք մեր պղտարնակ բարձր դասու աղդակիցներուն պատշաճեցնել, որոնք մեծ մասամբ զուրկ են լուրջ և բնական դաստիարակութենէ և իրենց խելքն ու միտքը աչխարհային հաճոյքներու և զուարճութեանց տուած են· այս պատճառաւ իրենց մայրական սրբազան պարտականութեանց մէջ կը թերանան. եթէ իրենք ստիպուին մանկան վրայ հսկել և անձամբ դիեցնե՛լ, ո՛հ, այն ատեն խաղի սեղանին լուրջը ո՛վ պիտի բազմի, երեկոյթներու մէջ անիմաստ շատախօսութիւններ ո՛վ պիտի ընէ· վերջապէս պարահանդէսներու ո՛վ պիտի մասնակցի· մանաւանդ իր զաւակը անձամբ դիեցնելը միթէ ամո՛թ չէ՞ . . . , ատենոտու մը վարձելը միթէ բարձրը դասակարգի անհրաժեշտ պէտքերէն մին չէ՞ . . . և դեռ չեմ գիտեր ի՞նչ անհեթեթ մտածումներ մեր բարձր դասակարգի ընտանիքներու մայրերը կը գրկեն իրենց զաւակները դիեցնելու բնական պարտաւորութենէն և անփոխարինելի հաճոյքէն . . . ։

Ո՛վ մայրեր, եթէ բժիչկնիդ հարկ չէ դատած զաւակնիդ օտարներու բռնապետիկ խնամներուն և կեղծ գուանքներուն յանձնել, դուք անձամբ դիեցուցէք· հաւատացէք որ վերջը աւելի գեղեցիկ և աւելի մկուն պիտի ըլլաք, մանաւանդ ձեր հոգեհատոր զաւակները ձեր կաթը ծծելով աւելի առոյգ, աւելի առողջ և աւելի գեղեցիկ պիտի ըլլան· ձեր կնոջական պարտականութիւնները ձեզ յիչեցնելը միթէ նախատինք չէ՞ . . . ։

Գաւառացիները իրենց զաւակներն անձամբ դիեցնելով և բնութեան արարածը բնութեան ծոցի մէջ մերկ և կէս խըղճամիտ ձգելով է որ կունենան ձեր տեսած կարմրայտ, առոյգ և խելացի պանդուխտները. հապ՛ա կանանց բնական գեղեցկութիւնը և առողջութիւնը ո՛ւր թողունք . . . , որք մայրական այդ պարտականութիւններէն զատ հաշար և մեկ տեսակ մարմնական տաժանելի աշխատութիւններ ունին։ Անոնց մէջ մայր մը չը գտնուիր որ իր զաւակը դիեցնելու համոյքէն զըրկուի. նոյն իսկ ծանր հիւանդներ տեսած եմ որ հակառակ պատուէրիս յամառաբար զաւակներնին կը դիեցնէին։ Գաւառացիները իրենց զաւակները այն ատեն միայն օտարի մը կը յանձնեն երբ տղուն հէգ մայրը մեռնի։

(Շարունակելի) ՏՕՔԹ. ՓԱՇԱԵԱՆ

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ

Ի ՍԳԱԼԻ ՄԱՀ ՄԵԾ. Մ. ՅԱԿՈԲ ԷՖ. ԵՍԱՅԵԱՆԻ

ՀԱՆԳՈՒՑԵԼՈՑ 31 ՀՈՒԼ. 1894

Սգաւոր եաց Հանգիստակ՛անք

Աքանչելի է Աստուած յաւիտեան գործս իւր, և մէն մի գործք Աստուծոյ մէն մի հրաշալիքներ են։

Երանի՛ այն յոտակտեւ աչաց՝ որ ընդհանուր տիեզերաց վարչական ընթացքը սոյն մտօք կ՛ըմբռնեն։ Իսկ անոնք որ այսպէս չեն նկատեր զաչխարհ և իրենց յարաբերութիւնները՝ զոր ունին աչխարհի հետ, չեն կարող իրենց գիտութեամբն իմանալ թէ՝ ի՞նչ են իրենք և ինչ է աչխարհ։ Ուստի այնպիսեաց համար աչխարհ է, և կը մնայ մի անբացատրելի առեղծուած։

Երբ համայն երկինք և համայն երկիրս Աստուծոյ անսահման կարողութիւնն, իմաստութիւնն և բարութիւնն մշտամըռունչ, յայտնարարքառ կը քարոզեն, և երբ մարդս այս մտօք և այս տեսութեամբ կ՛իմաստասիրէ՝ ի՞նչ անպատում բերկրութիւն չզեղանիր նորա հոգւոյն մէջ, և քանի՞օն երջանիկ է այդ-

պիսի մարդոյ կեանքն՝ որ կ'ապրի ոչ միայն այս անցաւոր աշխարհիս մէջ, այլ յաւիտենական կենաց յուսովն անմահ կը դառնէ դինքն, անմահ՝ թէ՛ ներկայ կենաց մէջ, թէ՛ գերեզմանէն անդին սպասող յաւիտենականութեան համար։

Նախանի Հարք, Նահապետք, Մարգարէք, Առաքեալք, Հայրապետք, մէկ խօսքով՝ համայն ճշմարիտ քրիստոնեայք այս ողւով վառուած, այսպիսի դիտումներ իմաստնացած կ'ուրախանային, կ'աղօթէին և վառարանութիւններ կ'ներգէին այս անհուն հրաշալեաց Ձեղինակն Աստուծոյ։ — Կըսէին նոքա. «Տէ՛ր, ո՞վ է մարդ, զի յիշես դու զնա, կամ որդի մարդոյ՝ թէ այց ինչ արացես դու նմա»։

Այո՛, Սգալի՛ Հանդիսականք, Աստուած մարդն ստեղծելէն ետք՝ ոչ թէ իբաց լքած է զնա, այլ կը յիշէ զնա երբ նորա գոյութեան պէտք եղած բանական հոգին իւր արարչական զօրութեամբ կը ներգործէ անոր մէջ։ Աստուած կը յիշէ զմարդն յընթացս բովանդակ կենաց նորա։ Վերջապէս Աստուած այցելութիւն կընէ ի հրաժարման նորա յաշխարհէս, երբ կը հրաւիրէ զնա յերկնային աշխարհն։

Ո՞չ ապաքէն բնական է մեզ խնդակցութեան զգացումներ կրել երբ կը ծնանի մարդ յաշխարհ, ի՞նչ է այդ բնական խընդակցութիւնն, ո՞չ ապաքէն նոր հոխութիւն մի ընտանեաց համար, և նոր մարդ աշխարհի համար աւելնալն է։ Դարձեալ, ինչէ՞ն յառաջ կուգան ի մեզ զանազան զգացումներ յընթացս մեր կենաց, ուրախութիւններ և տրտմութիւններ մեր կենաց այլ և այլ չրջաններուն մէջ, ո՞չ ապաքէն մեր և աշխարհի մէջ եղած յարաբերութիւնք են՝ որ կ'ազդեն ի մեզ այդ հակակիր զգացմունքներն, յարաբերութիւնք՝ որ ըստ Քրիստոսական Ս. կրօնի՝ Աստուծոյ տիեզերական Նախախնամութեան՝ և մեր վըրայ ունեցած անհուն սիրոյն արդիւնքներն են, յորմէ կը բղխին Օրհնութիւններ՝ որով կ'ուրախանանք, և խրատներ՝ որով կ'ըսթափինք եթէ ի քուն եմք, քանզի պէտք չէ մեզ ի քուն կալ՝ որ ուղևորներ եմք այս ժամանակաւոր կեանքէն դէպ ի հանդերձեալ յաւիտենական կեանքն։

Սայն խորհրդածութեանց մի կենդանի պատկերն ահա կը ներկայանայ մեզ այս սգակազարդ չիրմին վրայ, ուր իջաւ այժմ մեռելակիր դագաղն, և ուր կը հանգչի Մեծ. Յակոբ Ս. Եսայեան, մեր ամենուս սիրելի քաղաքակիցն, մեր ամենուս բարեկամն, որոյ կեանքն իւր սկիզբն մինչև ցայս տխուր ժամ մեր

աչաց առջև կատարեալ բարեպաշտ քրիստոնէի մը կեանքն է, գործավարութ հօր մը կեանքն է, արդարասէր և գործունեայ վաճառականի մը կեանքն է, Ազգին բարեվաստութեանը փափագող աշխոյժ և անձնուէր անհատի մը կեանքն է։

Եւ յիրաւի՝ Մեծ. Յակոբ էֆ. Եսայեան իր ժամանակի աղգային վարժարանին մէջ ուսման ընթացքն աւարտելէ ետքը՝ անմիջապէս կը նետուի վաճառականութեան դիրկը՝ ուր իր աչխատութեամբ, հաւատարմութեան և գործունէութեան բարի համբաւով կը ճոխացնէ Եսայեան ընտիր Գերդաստանի բարեհամբաւ Տունը։ Հետզհետէ աչակից կը ժամանէ նմա իր հարազատ եղբայրն Մեծ. Մ. Ստեփան էֆ. Եսայեան, որով այս երկու Հարազատք ձեռք ձեռքի տուած Ասիական և Եւրոպական վաճառականութեան Տուն մի կը հաստատեն, որ կը տարածուի Զմիւռնիոյ և փոքր – Ասիոյ մէջ, 70 տարիներէ ի վեր։ Յակոբ էֆ. Եսայեան տեսնելով իր սերմանած մանանխոյ հատին այսպէս ուռճազարդ բարգաւաճիլն յանհունս կ'ուրախանայր, և իրրև բարի Նահապետ իր Օրհնեալ Տան գործավարից կը գուրգուրար իր սիրելի Հարազատին վրայ։ Այլ աւա՛ղ քանի՛ դառն հարուած, դի չուտ խլեցաւ նա իր դրկէն, մանն օրհասական յափշտակեց վնա յանդարձ հրաժարական։ Սակայն Աստուած, որ օրհներ էր Եսայեան Տունը, զայն հաստատ հիմանց վրայ պահելու համար փութով հասուց նմա զօրաւիդներ հօրամոյն սրդիքն, որոց չնորհիւ առաւել ևս բարձրացաւ Եսայեան բարեհամբաւ Տունն և որ օտար աղգաց իսկ հանդէպ նախանձելի հանդիսացած է։

Այլ ևս իր քրտնաթոր աչխատանաց դեղանսեհ արդիւնքներն ընդունած կը գտնէր դինքն այս նոր Նահապետն, ուստի ձեռք քաչած ամեն գործէ երջանիկ ու խաղաղ կեանք կը վարէր բաւական տարիներէ ի վեր։ Ո՛հ քանի՛սն երջանիկ կ'զգար դինքն երբ այցելութիւններ կ'ընդունէր թէ՛ եկեղեցական և թէ՛ աչխարհական դասէն, կը խօսէր ամենուն հետ նպատակ ունենալով միչտ Աստուծոյ փառքը, Եկեղեցւոյ սէրը, և նոյն իսկ այցելուին օգուտը։ Մեծ ախորժ կ'զգար Ս. գրոց պատմութիւնները լսելով և խօսելով, եռանդագին կը խօսէր մերայնոց բարեվաստութեանը համար, և իր վաճառականական կրօնավարիր հետատեսութեամբ նոյն իսկ ընդունած այցելուներուն օգտակար չափեր կ'ուսուցանէր։ Ի մի բան՝ իր բոլոր կեանքն եղած էր Աստուածասէր առանց մոլեռանդութեան, տոհմասէր առանց կու-

ռակցութեան ոգւոյ, և մարդ ասէր առանց կրօնի խորութեան։

Վկայ կը կոչեմ սոյն ճշմարտութեանց Նորա երիտասարդ հասակէն ազգային բարձր պաշտօններու մէջ փայլիլը և ցոյց տուած խոհական դործունէութիւնն, յորում մի միայն արդարութեան ոգին և բարւոյն սէրն էր՝ որ կ'առաջնորդէր նմա։ Իսիրտ և հոգի կ'ուրախանար հասարակաց բարեկեցութեան լուրերն՝ առնելով. իսկ ձախող դէպքերու մէջ իրև անձնական իւր վիշտն կ'զգածուէր։ Եւ մի՞թէ կարելի՞ է Նորա ողորմածութեան դործերուն վրայ ձգուած քօղը չբանալ այժմ, որ ի կենդանութեան իւրում ի ծածուկ կը պահէր ըստ Աւետարանական պատուէրի։ Բայց ո՛ր և մէկը հնարին է թուել։ Պաւրնապատ դիւղի Ս. Եկեղեցւոյ չինութեան և զարդարման մեծ սատար, ղանդակատունն ամբողջովին իւր զուարթառատ նուիրատուութեանց արդիւնքն եղած է։ Իւր ուշադրութենէ չեն վրիպած աղքատիկ ուսանողաց ամբողջական հագուստներն ամեն տարի հանդիսական օրերուն մէջ, ինչպէս նաև Ս. Սահակեանոս Եկեղեցւոյ և Աղգային Հիւանդանոցին յաճախակի նուէրներն։ Վերջապէս՝ չեղաւ տառապեալ ոք որ Նորա գթութեան դիմելով ձեռնունայն դարձած ըլլայ, որուն ամբողջ Ջմիւռնացիք կը վկայեն։

Այսպէս ահա օրհնուեցաւ Յակոբ էֆ. Եսայեանի հիմնարկած Տունը, և եղաւ Տուն պատկառելի ոչ միայն Ջմիւռնիոյ և շրջակայից ամեն ազգաց հանդէպ, այլ նոյն իսկ ճիւղ արմակելով Անգղիա, յարաբերութիւններ հաս տատելով Ռուսաստան և յայլ և այլ Հայաստանս Եւրոպիոյ և Ամերիկայի և այլուր։ Գըտնահատեցաւ Նորա այս ամեն արժանիք նաև Օսմանեան Բարեխնամ Կառավարութեան կողմէ, ուստի և Նորին Կայսերական Վեհափառութիւնն բարեհաճեցաւ վարձատրել իւր ամենահաւատարիմ հպատակն Մէճիտիէ շքանշանով։

Վասնորոյ ամեն բերան ղբեղ կ'օրհնէ այսօր, ո՛վ մեծահասակ Եսայեան, ամեն սիրտ քեզ համար կըբարախէ, Ջմիւռնիոյ Հասարակութեան ընտրեալ դասը քու դագաղդ չրջապատելով կ'զգածուին այսօր ի սիրտ և հոգի, ղի կը բաժնուին քեզ նման պատուական քաղաքացիէ մը, վաճառականաց դասը կ'զգածուի, ղի իւր մեծարժէք երիցադոյն անդամէն կ'անջատուի։ Հայը իւր փառաւոր առաքինի զաւակներէն մին կը կորսնցնէ, կարօտելոց դասը ողորմասիրտ հօրմէ մը կը զրկուի։

Մեծ Յակոբ էֆ. Եսայեան իւր կենաց 89 ամ. տարին լրացնելով այսօր իւր վերջին հրաժեշտը կուտայ և կերթայ հանդ-

չիլ երանութեան յաւիտենական աչխարհին մէջ ընդունիլ իւր բարեպաշտական գործոց վարձքը ի փրկչէն մերմէ, որոյ կենսաբեր ընորհաց վրայ յոդաւորուած էր իւր կենդանի հաւատովն, հաստատուն յուսովն և անկեղծ սիրովն։

Այսպէս ահա, Սգալի Հանդիսականք, ցակոր էֆ. Եսայեանի գովանի կենաց սոյն հակիրճ նկարագիրն թո՛ղ զարթուցանէ ի մեզ Աստուծոյ բարերարութեանց յիշատակը, և առաջնորդէ մեզ լինիլ անոր նման բարեպաշտ ի կրօնս, գորովագութ յընտանիս, արդարասէր և աչխոյժ ի գործս, անձնուէր և լի սիրով մերայնոց։

Իսկ մեք մաղթե՛մք հանգիստ հոգւոյ նորա յերանաւէտ կեանս, մաղթե՛մք և երկնային մխիթարութիւն նորա հարազատից և համայն սիրելեացն։ Օրհնե՛մք և գնահատե՛մք Աստուծոյ, որ իւր անճառ իմաստութեամբ կը հաստատէ մարդ յաչխարհ, և անհուն սիրովն կ՚առաջնորդէ նմա ի բարի գործս, և ի հրաժարման պահուն աստուածային գթութեամբն կը հրաւիրէ զնա յերկնային անվախճան բարութիւնն, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

31 Հոկտ. 1894 ՍԱՐԳԻՍ Ճ. ՊԱԼԱՊԱՆԵԱՆ

ԳԻՇԵՐՔ

Ցիշի՛ս, Մարի, ամպաճօղիկ
Ա՛հ, աճմոռաց այն գիշեր
Որ լուռնակէն փուճջ մը շողիկ
Ներեակէն ներս կը ֆշեր։

Հօն հրդեհեալ գլխուս հպէր
Եւ ես գլխիկ գեղանի,
Ինչպէս հպին եկու ամպեր
Երկնից սիրուն սեղանի։

Լուսնի ոժգոյն ցոլիմն ներքեւ
Ակերպ ի սէր փայլէին,
Եւ շրթներէդ լուսապարգեւ
Թուչէր ժպիտ մ՚երկնային։

Սիրով մ'անցյագ եւ անշպար
—Ա՜խ, յիշատա՜կ անմոռաց—
Փափուկ մատներդ առնէին պար՝
Մէջ դողդոջաց իմ ձեռաց։

Լռիկ էիմ մենիմ հովէ հով
Լուսինն ալ լուռ մեզ դիտէր,
Բայց ամառակազոյն սիրոյ մ'երգով
Նուագէին մեր սրտեր։

Շիկաթ բարբառ մ'իսկ երերուն
Վերայ շրթանցդ օդաչին։
Այլ անվումենրն էս մատներուդ
Սրտիդ վիճակն յայտնէին։

Լռիկ՝ անհաս եւ անբարբառ
կը հրճուէինք մենիմ, Մարի,
Եւ ցնծայինն ատեղ ի պար
Երկնից կապոյտ կամարի։

Անմեղ կրից հեղեղ մ'անցաւ
Սրտից մէջէն մեր փափուկ,
Սակայն ոչ ոք բարբառեցաւ
Սիրոյ վանկ մ'իսկ խուսափուկ։

*
* *

Ցիշէ՛, Մարի, — անպարտիկ
Ա՜խ; անմոռաց այն գիշեր
Որ լուսնակէն փուճ մը շողիկ
Սենեակէն ներս կը հշէր։

Անմեղ կրից հեղեղ մ'անցաւ
Սրտից մէջէն մեր փափուկ,
Բայց դեռ ոչ ոք բարբառեցաւ
Սիրոյ վանկ մ'իսկ խուսափուկ . . .

Խ. Ս.

ԹՌՉՈՒՆ ԸԼԼԱՆԻ

(Սէրոյ խօսքէր)

ՌՈՒԲԷՆ ՈՐԲԵՐԵԱՆԻՆ

— Գիտե՞ս թէ ի՛նչ կ'ըզգամ ես, երբ կը տեսնեմ դէմքդ, այդ սիրուն ու չնորհալի դէմքդ, երբ կը տեսնեմ քու ո՛ւ է մէկ շարժումդ կամ ո՛ և է մէկ ըրածդ։ Գիտե՞ս, ա՜խ, միամիտ ու ղուարթ աղջիկ, թէ ի՛նչ կը զգամ և թէ ի՛նչ կըլլամ քու նայուածքներուդ հանդէպ։ գիտե՞ս թէ ո՛րքան կը յուզէ զիս և կ'ուրախացնէ մերթ պազ և մերթ անուշ նայուածքդ։

Սիրտը կը բանար, հոն ծածկուած սէրը դուրս կը թափէր վահան, երիտասարդ և զգայուն տղան, Շուշանի առջև, այն մատաղ ու կոյտաս աղջկան, այն շուշանի մը պէս անբիծ ու աղուոր աղջկան, զոր կը սիրէր հեռուէն, իր սրտին խորէն, ուր ժամանակէ մը ի վեր, օրէ օր, կ'աւելնային Շուշանի նկատմամբ իր ունեցած անհանգիստներն ու երազները զանիկայ սիրելու, պաշտելու և անկէ, փոխադարձաբար, սիրուելու։

— Նայուածքերն ճառագայթներ են, արեւին ճառագայթներուն պէս, լոյս և կեանք տուող, մանաւանդ այն սիրով ու գորովով զեղուն նայուածքդ, երբ թուչնիկներուդ ուղղուած է, իմ դերագոյն համբոյրս է։

Այդ սև ու երկար մազերդ, չամիչի պէս սև ու աղուորիկ ջուխտակ ալիքերդ, հապա վարդերն ալ գերազանցող դա կարմրուկ շրթունքներդ միշտ ամէն տեղ ու ամէն մթոլորտներու մտածումներուս առարկաներն են, ոգիներն իսկ, երազներուս մէջ, քեզ միայն կը տեսնեմ և կը քնանամ կարծելով լսել անուշ և ղուարթ երգերդ։

Առտուան զեփիւռէն ալ մեղմիկ, գարնան օդէն ալ թեթև, թըռչուններու գեղգեղանքէն ալ ներդաշնակ ձայնդ յաւէտ քեզ ինծի պաշտելի կընէ. քու խօսքերդ, մէն մի բառերդ կեանքս կաւելցնեն, բերրութիւնս կը կրկնապատկեն և զիս կը ղուարթացնեն։ Քու անոգ ու անմեղ ժպիտդ իմ բոլոր վիշտս կը մոռցնէ և սիրտս կ'ուրախացնէ։ Քու թեթև քալուածքդ կաքաւներուն նախանձը կը շարժէ և անոգ ցատկոտոցդ ալ՝ գառնուկներունը։

Ես, բոլոր արտովս ու հոգիովս, ամէն բանէ աւելի կըզգամ ու կը տեսնեմ քեզ տեսնել միշտ, քեզ գիտել միշտ. տեսնել մանաւանդ, երբ առտուն կանուխ, մինակուկ, կը պտըտիս պարտէզին մէջ, երբ կ'երթաս վարդենիներուդ քով, ու հատ մը ասկէ, երկու հատ քիչ մը անդիէն, քանիմը հատ ալ ուրիշ տեղէ մը կը փրցնես ու կը հատիս կարմրուկ ու դեղեցիկ, նոր բացուած ու անուշահոտ վարդեր. ամէնքն ալ քեզի պէս դեղեցիկ, քեզի պէս նոր բացուող և քեզի միայն արժանի ու փուճ մը կապես. և բերանդ ալ ղուարթ երգ մը թրթռայ, ու մազերդ, սեւուկ ու փայլուն մազերդ, ցերուցան, առտուան մեղմիկ ու անպատկառ հովէն շարժելն անդադար ու վշտիդ և ուսերուդ վրայ անկանոն եղեւէներ ընելն։ կը տեսնամ դիտել քեզ հեռուէն, երբ կը խօսիս սիրելի ւս մտերիմ թռչուններուդ ու թռչնիկներուդ հետ, քեզի պէս ղուարթ ու այրուն երգ ըլլեր, աղուորիկ,

մանք աչքերով, դեղին ու փայլուն փետուրներով, քիչ մը երկար տտուններով, բարակ, շա՛տ բարակ ոտքերով Թուչնիկներուդ հետ մանաւանդ, որոնց վրայ միւսներէն աւելի սեր ու խնամք դնիս, և որոնց հետ կը խօսիս այնքան մեղմ, այնքան գեղեցիկ, այնքան ներդաշնակ, որքան չեն կրնար խօսիլ ու գեղգեղել անոնք։ Թուչնիկներդ ալ կարծես հասկցած ինչ որ կըսես իրենց, կը պատասխանեն քեզի՝ իրենց ճիւճիւներովը ու գեղգեղանքներովը. ու դո՛ւն ալ չափազանց կը հրճուիս լսելով ու մտիկ ընելով զիրենք։

Բայց չես խօսիր քնաւ, Շուշա՛ն, չես գիտեր թէ ի՛նչ է ան որ կայ սրտիս մէջը, չես գիտեր ի՛նչ է սրտիս բաղձանքը, ի՛նչ է սրտիս տենչանքը, տենչանք որ տանջանք պիտի ըլլայ եթէ . . . եթէ չկրնամ ասկէ ետքը միշտ քեզ տեսնել և քեզի հետ խօսիլ։ Միտքս միշտ քու վրայ կը խորհի, սիրտս քեզի համար միայն կը բաբախէ. իմ կեանքս, իմ երջանկութիւնս քու կողդ է, քու ժպիտդ իմ երջանկութիւնս է. քու խօսքերդ ու երգերդ իմ բոլոր ուրախութիւններս են։ Միշտ քեզի համար անհուն իղձե՛ր, անվերջ բաղձանքներ, միշտ բղխող ջուրի ակի մը պէս. բայց անոնք բոլորն ալ քեզ տեսնելու, քեզի հետ խօսելու, ձայնդ ու երգերդ լսելու և քեզ միշտ վայելելու մէջ կը կայանան ու կը վերջանան։

Չա՛, կուզե՞ս գիտնալ թէ ի՛նչ է սրտիս տենչանքը, կուզե՞ս գիտնալ թէ ի՛նչ է սէրը, ի՛նչ է սիրելը։ Ա՛հա, սէրը՝ այն սէրը. զոր ունիմ քեզի նըկատմամբ, ծադիկներէն աւելի անուշահոտ է, ան ամէն բանէ աւելի պանծալի է. սիրել ու սիրուիլ կեանք ըսել է, ապրիլ ըսել է. մտիկ կ'ընե՞ս, կը հասկնա՞ս։

Ամէն բան զիրար կը սիրէն։

Սա կապուտակեզ երկինքը նայէ. կը յիշե՞ս որ երբեմն անիկա օրերով կուլայ, շարունակ մանրիկ արցունքներ կը թափէ, տրտմած ու վշտացած՝ սգաւորի պէս քողեր կառնէ պահելու համար իր դէմքը, չի ցուցըներ իր հաղարումէկ գեղեցկութիւններէն և ո՛չ մէկը, ո՛չ լուսինը՝ ո՛չ ալ այն անթիւ և ազուոր աստղերը, որովհետև կը կորանչնէ իր սիրելին՝ արևը. ու ատանկ սգաւորի և հիւանդի պէս կը մնայ մինչև որ գայ նորէն իր քով սիրելին, և ա՛լ կարծես մոռցած բոլորովին անցածը և ուշեցած վիշտերը կը բանայ իր ծածկած ու պահած դէմքը և կը ցուցնէ իր բոլոր գեղեցկութիւնները, ու ա՛հա, այն ատեն, գեղեցիկ ու տօքուկ օրեր և բնութեան հազարաւոր բարիքները հո՛ս, երկրի վրայ, մեզի համար, և վերը, հո՛ն, անչինջ ու անհուն կապոյտ մը, արեւին ապխտակ ու լուսափայլ ճառագայթները՝ ցերեկը և գիշերն ալ՝ շողշողուն ու պայծառ լուսինը և ա՛լ ուրիշ շատ ու շատ փայլփլացող ու պլպլացող աստղեր՝ գիշերուան մթնութեան ու խաւարին մէջ՝ վառուած ճրագներու պէս։

Սէրը, դուն ըսէ, այն սէրը զոր կը տեսնես նոյն իսկ թուչնիկներուդ վրայ՝ իրարու նկատմամբ՝ դո՛ւն ըսէ, ո՛րքան գեղեցիկ, ո՛րքան սիրուն է. ինչո՞ւ կ'ուրախանաս և կ'զմայլիս, երբ զիրար կը համբուրեն անոնք,

— Ա՛, թուչնիկներուս սէրը, իրաւ ան ի՛նչ աղուոր բան. եկո՛ւր մենք ալ թուչուն ըլլանք, և մենք ալ անոնց պէս, զիրար պիրենք ու համբուրենք։

ՄՈՏՍ

ԻՄ ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ

ԺԷ

Ձակատագրային օրէնք մ՚է կարծես, որ հանրութեան ծառայող մէկը՝ որքան և խղճիւ կատարած ըլլայ իր դերը, ի վերջոյ զոհ երթայ անիրաւութեան և մատնուի հալածանաց։ Ի՞նչու Անդրէաս վարժապետ՝ այն ազնիւ դաստիարակը՝ որուն մաքուր և անձնուէր կեանքի նկարագրութիւնը այնքան մեծ տեղ մը բռնեց մեր յիշատակներու մէջ, բացառութիւն պիտի ըլլար այս դրեթէ ընդհանուր կանոնէն։ Ֆանեվեցամեայ յոգնաջան պաշտօնավարութենէ մը յետոյ՝ ուր Իզմիրցի Հայերու ամբողջ սերունդներ իր ձեռաց տակ մարզուած ու հրահանգուած էին անհուն սիրով և խնամքով՝ եկած էր ժամանակը — և այս՝ իր վաղահաս ծերութեան և հիւանդագին վիճակի մէջ — որ իր խաչը կրէ և գառնութեան բաժակը քամէ ցմրուր։ Մանրամասն պարագաներու մոռնալ մեր նպատակէ դուրս է։ Տաճկերէն դասատուի չնչին խնդրոյ մ՚առթիւ խուլ հակառակութիւն մ՚ըսկսաւ Անդրէասի և ժամանակին «ուխթիւ» Հոգաբարձութեան կամ աւելի ճիշտ՝ անոր մէկ քանի անդամներուն միջև։ Աչակերտք՝ արդէն վաղուց խելամուտ իրենց սիրական վարժապետի դէմ տածուած թշնամական ոգւոյն՝ դժգոհութեան անվայել ցոյցեր կ՚ընէին երբեմն ընդդէմ Հոգաբարձութեան, ցոյցե՛ր՝ զոր վճռացեալ վարժապետը՝ թերևս ներքնապէս գոհ՝ զսպելու կամ արգիլելու ճիգ չէր ըներ երբէք։ Անդրէասի կարծեմ միակ յանցանքը կամ սխալումը մ՚այս եղաւ, այս ցաւալի դէպքերու մէջ։ Այս ցոյցերն յայտնի է թէ առաւել և պիտի զայրացնէին թշնամի Հոգաբարձութիւնը։ Հուսկ ուրեմն Անդրէասի պաշտօնէ հրաժարիլը հարկ եղաւ։

1856 Ապրիլ 6ին պատահեցաւ այս Դպրոցի թանգարանին մէջ Հոգաբարձուաց հետ ունեցած բուռն խօսակցութենէ մը ետք՝ դուրս ելաւ, և «Տէ՛ր, կը մեկնիմ այսօրուանէ, ա՛լ ես հրաժարած եմ պաշտօնէս» պոռաց յուզեալ ձայնիւ։ Կսկծալի էր տեսարանը. ինք կուլար, ուսանողք խումբը կուլար իր հետ։ Այն կէտին՝ ուր վերջապէս կը մեկնէր դպրոցէն՝ աչակերտք բոլորովին ղժացեալ՝ կը վազէին անոր ձեռք համբուրելու՝ զոր ջերմաջերմ արտասուօք կը թրջէին։ Իր յիշատակարաններէն քաղ-

ուած հետևեալ տողերը՝ որք երևելի եղած են, յայտնի կը ցուցնեն այն հակառակութիւնը՝ որ մեր հանրային դործերու և խնդիրներու մէջ անխուսափելի դեր մը կը կատարէ գրեթէ միշտ, և որու այս անդամ ալ կ'երթայր Անդրէաս, «ի 16 Յունիսի ի չուկայի ասաց ինձ Ա. (իր հին աշակերտներէ մին) լու ի լու . . . ըսած որուն Կ. պաշտպան եկաց քեզ, գան ըմպելոց ես սաստիկ յոյժ. — Ո՛վ քրիստոնեայ արանցս »: Միշտ նոյն պարզ և դեղեցիկ դրարարը այնպիսի ժամանակներու մէջ ուր քառականդուն խրթին բառեր դործածելը քաջ հայկաբանութեան մը ամենէ մեծ դրաւականը կը համարուէր:

Պոլրոյէ հրաժարած՝ իր տան մէջ դասարան մը հաստատած էր Անդրէաս, ուր Թուրկաւ կը յաճախէին սիւսկան աշակերտներէ ոմանք, որոնց մէջ մենք ևս դտնուելու պատիւն ունէինք: Այդ մանուկը և անկախ դասատուութեամբ թէև իր ապրուստը կը հայթայթէր վաղեմի վարժապետը, և մանաւանդ որ հանգիստ ալ էր ամէն նկատմամբ, այլ սիրտը դոհ է՞ր միթէ և իրապէս կը վայելէ՞ր այդ հանդիստն՝ որու այնքան պէտք ունէր մտապէս թէ մարմնապէս — Ո՛չ և ամենևին: Նեղքը միտքը Մեսրոպեան դպրոցին՝ ուր կենացը մեծագոյն մասն անցուցած էր, և հոն թողած աշակերտներուն վրայ սևեռած կը գըտնուէր: Հոն ամփոփուած կ'ին իր բուռն սրտի բովանդակ սէրը և իր ապնիւ մտքի բովանդակ յիշատակները: Իր տունը՝ զոր ապդին կատկած է, Ս. Սահակեանոս եկեղեցւոյ դիմաց՝ և Ս. Մեսրոպայ տան չատ մտերը կը դտնուին: Այդ մերձաւորութեան ընորհիւ դպրոցի զանդակի ձայնը կը հասնէր մինչև այն սենեակն՝ ուր կը դասախօսէր մեզ, ամեն անդամ թուղդ հանելով իր սրտեն՝ զոր բիւր սլաքներով կը խոցոտէր: Երբ այդ զանդակին արձակման նշանը տար, հէք վարժապետը կ'ընդվիզէր իր դասը սրտայոյզ, կը մոռնար իր մասնաւոր դպրոցը և իր աքսորի հետևող սիրական աշակերտներու խումբը, և ակնոցը դրած պատուհանին առջև կը վազէր և կը դիտէր — կը դիտէր անյագ և ցվերջ — հեռուանց կարգաւ անցնող Մեսրոպեան սանուց՝ զոր կարուտած էր, երկարատև շաբքը կը դիտէր տակաւին երբ ալ բան մը մնացած չէր դպրոցական թափօրէն, և . . . արցունքի տաք տաք կաթիլներ իր աչքերէ կը հոսէին, մինչ իր բերանը կը մնար հառ և անխօս: Սրտաճմլիկ բան մ'էր տեսնել այս հինաւուրց դժրաղդ դասախարակը՝ այդ որդեսէր հայրը՝ զոր անիրաւութիւնն այնքան անդթօրէն զատած հեռացուցած էր իր

սիրասուն աշակերտներէ՝ զոր իբր մէյմէկ զաւակ կը նկատէր։ Մեսրոպեան վարժարանի առջին չէր կրնար անցնիլ նա առանց ամէն անդամ յորդ արտասուք թափելու։ Լալով տուն կը դառնար խեղճը իր ամուսինէն մխիթարութիւն հայցելով, — և կարծեմ ամուսնական երջանկութիւն ալ չունէր։ Ինչո՞ւ — և ջլագար — մէկն էր իր կինը, տակաւին բաւական հազուագէպ երևոյթ մ'այն ժամանակները . . . ։

Ձդիմացաւ Անդրէասս Իր հաստատած մանաւոր դասարանը իրեն ապրուստ կուտար այլ ո՛չ սրտի գոհունակութիւն, Դիմումներ, գիջումներ ըրաւ, ամեն նուաստութիւն յանձն առաւ նորէն Մեսրոպեան դպրոցը մանելու որու չրջապատին մէջ բովանդակ կեանք մ'անցուցած էր, և որմէ դուրս ապրիլ ալ անկարելի կ'ըլլար իրեն համար։ Այնպիսի փառք մը, այնպիսի մխիթարութիւն մ'էր այս՝ որ կ'արժէր ամեն կարելի զոհողութիւն։ Ուսոմ և գիջում ոսոխ Հոգարարձութենէ ներսում խընդրել . . . իր գործած և չգործած յանցանաց համար։ Պահանջուեցաւ որգրաւոր կերպիւ հայցէ ներողութիւն։ Իսկզբան մերժեց վարժապետը իբր կարի նուաստիչ առաջարկ, այլ հուսկ ուրեմն այդ գիջողութեան ևս յանձնառու եղաւ։ Ի՞նչ չպիտի ընէր նա դպրոցին և իր քաջ աշակերտներու երեսը նորէն տեսնելու համար։ Բաւական չհամարուեցաւ այս. պայման մ'ալ տրուեցաւ, իբր հնազանդութեան գրաւի նշան (իմա՛ իբր նախատինք) տասն և հինգ օրի չափ երթալ վարժապետել աղջկանց դըպրոցը, այդ կարծր առաջարկն ընդունելի ընծայելու համար իր թոռակին վրայ քանի մը հարիւր գրուշ վերադրութեան իսկ խոստմամբ. անկէ ետք պիտի վերահաստատուէր իր հին պաշտօնին մէջ։ Այսպէս ամէն օր նոր և անիրաւ պահանջումներ երևան կ'ելլէին։ Անդրէասս փափուկ սրտին ծանր եկաւ այս անակնկալ առաջարկը, և իր առաջին չարժումն եղաւ մերժել գայն, ինչպէս իսկզբան մերժած էր դրաւոր ներողագիրը։ «Լաւ համարիմ չապքատութեան կեալ քան այսպիսի առաջարկութիւն նոցա ընդունել» կը գրէր Յիշատակարաններուն մէջ։ Այս անդամ ևս երկար չտևեց սակայն Անդրէասս ընդդիմութիւնը, իր հեզ և խոնարհ ոգին և մանաւանդ իր կորուսած զաւակներու սէրը պիտի չաղթանակէր ամէն նկատմանց, և խօսք տուաւ անոնց այս դժնդակ հրամանը ևս կատարել՝ երբ չանկարծական կայթուածային ծանր հիւանդութիւնն՝ ո՛ր կրկնութիւն մ'էր նախորդ տագնապի մը՝ և որու վրայ իր վերջին կրած յուզ-

մունքներն անկարելի էր որ աղետալի կերպիւ ներգործած չըլլային, հէնց դաստիարակն անկողին ձգեց։

Զգայուն սրտի մ'ինքան ծանր եկած էին այդ վերջին չարաբաստիկ անցքերն՝ և մ'ինքան անկեղծ էր իր առաջադրութիւնն պայման դրուած նոր գործունէութիւնը ի գործ դնելու, որ իր մօտ գտնուողներուն հետեւեալ բերանացի կտակը կ'ընէր, և որ կրնայ նկատուիլ այրած և աննսեմ սրտի մ'իրը կարի սրտաչարժ արտայայտութիւն, « եթէ մեռնելու ալ ըլլամ՝ անգամ մը մարմինս դագաղով աղջկանց դպրոցը տարուի, գոնէ քառորդի մը չափ հոն դրուի, որպէսզի էրեկոյ կամէք կարդալ։ » Սրտաճմլիկ չէ՞ն միթէ այս խօսքերն, ծանր հիւանդ ինկած հին և բազմարդիւն վաստակաւորի մը կողմէ . . . ։

Ծերունի դաստիարակին հիւանդութեան լուրը սակայն ահեղ նետի իրարանցում մը պատճառած էր Իզմիրի վշտացեալ Հայ թաղի մէջ։ Անէնքը հայր վարժապետի կրած տարապարտ կորանքներու համար արդէն ցաւած զգածուած՝ անոր տունը կը վազէին իր վիճակին վրայ լուր առնելու համար առտուընէ մինչև իրիկուն, նոյն իսկ գիշերը մինչև առտու խռնող այցելուներու պատճառաւ փողոցի դուռը հարկ եղած էր բաց ձգել։ Այս չարժումը տևեց մինչև այն օրն՝ որ իր վիճակը՝ գէթ այն անգամի համար՝ վտանգէ դուրս հռչակուեցաւ։ Պօլսեցի բազմարդիւն պատուելիին կեանքը այս անգամ ևս գրեթէ հրաշիւք՝ ընորհուած էր ազնիւ սիրող բազմութեան՝ որու մեծադոյն մասն՝ ուելորդ է ըսել՝ իր վաղեմի աշակերտներն էին։

Ապաքինեցաւ հայր վարժապետը, և ոտք ելած օրը՝ յապաղոյց իր հնազանդութեան կրցաւ կատարել աղջկանց վարժարանը երթալու իր խոստումը։ Հոգաբարձուաց կամքը կատարուած էր լիովին, այլ անոնք ևս իրենց կողմէն մնաւոցին հաւատարիմ որդեկորոյս խեղճ հայրն իր զաւակներուն վերադարձնելու խոստման վրայ։ — Դժբաղդաբար ո՛չ, չէ թէ տասնևհինգ օր՝ այլ երկար ամիսներ երեսի վրայ թողուցին զինք Հրիփս վարժարանը (ուր և ոչ իսկ կը յաճախէին), անոր սրտի դառնութիւնն անբոյժ ձգելու համար։ Ծողովրդեան մէջ ձայներն ու բողոքները հետզհետէ կը բարձրանային սակայն, և վերջապէս Հոգաբարձութեան քանի մը բարեսէր անդամներ յօժարեցան առաջնորդել զինք Մեսրոպեան դպրոցը։ Վարժապետի ամսականէն քանի մը հարիւր ղրուշ զեղչուած էր՝ թէև ընդհակառակը պէտք բարդել իսկ խոստացած էին՝ եթէ նա իրենց կամաց խո-

ՅԱԿՈԲ ԱԼՓԻԱՐ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ՍԱՊՈՆԻ

ԳՈՐԾԱՐԱՆ—ՔԼՐԼՍԹԼՃԻՏԻՒՔԱՑ ԹԻՒ 65

ԳՐԱՍԵՆԵԱԿ—ՆՈՒՍՈՒՅՑԻ ՖԼՐԹԱՆԼ ԹԻՒ 2

ՋՄԻՒՌՆԻԱ

ՄԵՐ ՍԱՊՈՆԻ — Տեսակը գերազանց է չաւերբէն։
ՄԵՐ ՍԱՊՈՆԸ — Ունի մրևնոյն ատոիճանը, ՄԻՇՏ և ՈՉ ՊԱՏԱՀԱՐՄԱՐ ինչպէս չաւերուանը։
ՄԵՐ ՍԱՊՈՆԸ — Ջուտ է ամեն խարդախութենէ։
ՄԵՐ ՍԱՊՈՆԸ — Լաւ կ'մաքրէ։
ՄԵՐ ՍԱՊՈՆԸ — Լաթերը չմաշեցնեը։
ՄԵՐ ՍԱՊՈՆԸ — Կ'չինուի առաջին կարգի նիւթերով, որոց գործերը և ատոիճանները փնտռել յետոյ ըսած պետք կ'գտաղդուին, որավ՝
ՄԵՐ ՍԱՊՈՆԸ — Քիմիական օրինաց ամենաճիշտ տիպարն է։
ՄԵՐ ՍԱՊՈՆԻ — Դրծարանը հմուտ քիմիագէտ մը և փորձառու մասնագէտ վարիչ մ'ունի։
ՄԵՐ ՍԱՊՈՆԸ — Է ինչպէս որ պիտի տեսնէ ամեն ոք՝

ԼԱՒ ԱՊՐԱՆՔ ԵՒ ՄԻՇՏ ԱԺԱՆ

նարհէր։ Թոզակի այդ անիրաւ կրճատումը չէր ի բնէ անչահախնդիր վարժապետին սրտին ցաւը, այլ այն անգութ անօրէնութիւնն՝ որով որ և է դասախօսութիւն կ'արգիլուէր իրեն՝ որպէսզի իր սիրասուն աշակերտաց հետ յարաբերութեան մէջ մտնելու մխիթարութենէն զրկուէր իսպառ։ Վարժապետաց վրայ անուանական տեսչութիւն մը միայն կը ընորհուէր իրեն՝ թափուր իր բոլոր նախկին հմայքէ և արտօնութիւններէ։ «Ծաղրակա՞ն տեսչութիւն», ինչպէս կ'անուանէ իր պաշտօնը իր յիշատակագրերու մէջ։ «Ձիք իմ յոյս միսիոնութեան վիճակիս, կը գրէ, եթէ ոչ այլ արասցէ ինձ երկին, զի և այլք, որպէս թուի ինձ, այնպէս հաստատեալ են ի կարծիս, չգիչանիլ եղկելոյս, և միանգամ տարապարտ խոնարհութեանցս՝ վըրիժառու եղեն ինձ։ Այսպէս վարձատրեցին զիս յետ քսան և հինգ ամաց յոգուտ աղգիս ծառայելոյ, և աւելի ևս ժամանակաց . . . »։ Աղաչեց, խնդրեց, որ թոյլտուութիւն ընծեն միևնոյն պեղչեալ ամանականով իր հին դասերէն դոնէ՛ մէկ քանին աւանդելու։ Այլ ըզո՞ւր։ Այս դերագոյն մխիթարութիւնն ալ պղցուեցաւ իրեն։ Ետան և վեց ամեայ դաստիարակն անարժան կը դատուէր դասախօսութեան . . . ։ Ոմանք տակաւին ելած չէր իր թշնամիներու սրտէն՝ որոնց մէջ ձեռնասուն աշակերտներ ալ կային։ Այս վերջին պարագան ամենէ աւելի վիշտ և դառնութիւն կը պատճառէր դժբաղդ վարժապետին . . . ։

«Ուխիդ» ժողովը լուծուեցաւ վերջապէս, ու նոր հոգաբարձուներ ընտրուեցան՝ համակիր Անդրէաս վարժապետի, որք իր յաւէտ յայտնած փափաքի համեմատ արտօնեցին զինք ուսուցանել՝ Քրիստոնէականի, Աչխարհագրութեան և Պատմութեան դասերը յանձնելով անոր։ Դպրոցին համար խաղաղութեան և հանդարտութեան նոր թուական մը կ'սկսէր։ Ինչ անպատում ուրախութեան օր էր այն՝ երբ Անդրէաս բարի վարժապետը չուրջը ժողովելով իւր սիրական աշակերտները՝ զրոյ կորուսած էր այնքան երկար ժամանակներէ հետէ, ջերմ հաւատով կը խաչակնքէր երեսը և կ'սկսէր դասին։ Փա՜ռք կուտար Աստուծոյ՝ որ այս երջանիկ ժամուն վերջապէս սրժանի ըրած էր զինք։ Իր ապաքինումը կը վերագրէր մանաւանդ Սբ. Աստուածածնայ հզոր բարեխօսութեան՝ որուն մասնաւոր ջերմեռանդութիւն մ'ունէր (թերևս իր ընդունած կաթոլիկ դաստիարակութեան հետևանք), և որուն չրջանակեալ մէկ պատկերը կախել տուած էր իր նստած սենեակի դիմացը՝ պա-

տէն վրայ։ Ուրախութեան յորդահոս արցունքներ իր բուխ աչքերէն կը վազէին, իրեն հետ կ'արտասուէինք նաև ամենքս նիս յուզուած ղաձուած։

Այլ աւա՛ղ, խիստ կարճ՝ այսինքն տասն օր միայն սիրտ տևէր հայր վարժապետի ուրախութիւնը, և դպրոցին բերկրալի դիմաց վրայ «սիրտ դար ծածկուէր տրտմութեան սևաթոյր քողը։» Անդրէաս վարժապետ՝ որու անողոք ախտը սընունդ գտած էր կրկնուած բազմաղիմի յուզմունքներէ ու մտատանջութիւններէ, կը վախճանէր քանի մը ժամու մէջ, այս երրորդ անգամ յանկարծամահ (foudroyant) էր կաթուածը։

Դղրդեցաւ բոլոր իզմիր, և ողբաց իր հին անխոնջ մշակին մահը։ Ա՞ն կորուստ արդարև։ Ի՜նչ տխուր՝ անհունապէ՜ս տըխուր տպատորութիւն ըրաւ մեր ամենուս վրայ այն սերմ ատենախօսութիւնն՝ զոր ղգածեալ ձայնիւ մ'արտասանեց իր քեռորդին՝ Յովհան Փափազեան որ այն ժամանակ Մեսրոպեան դպրոցը վարժապետ՝ և որ եռքէն ա՛նքան մեծ դեր մը սիրտ խաղար Պօլսոյ ազգային դործերու մէջ։ * Ուղղակի վախճանեալին տունէն կը դառնար նա, և տակաւի՛ն ականջիս մէջ կը հնչեն իր հոդւոյն խորէն բխած և խորունկ վշտի շեշտով արտասերած սա բացագանչութիւնը, «վարժապետը մեռա՜, մեռա՛ւ վարժապետը»։ Աչակերտք չէ թէ կուլային, այլ կը հեծէին՝ հեկեկալին պարզապէս։

Սգալի թափօրը Մեսրոպեան դպրոց եկաւ, Անդրէաս վարժապետի ոդին իր յետին այցը կ'ընէր Սուրբ Մեսրոպայ տան՝ զոր այնքան սիրած էր, և որու բարոյական անդն քառորդ դարէ աւելի ժամանակ իր յորդահոս քրտինքներով ո՛ռոգած ու բեղնաւորած։ Դագաղը կը վերցնէին իր վաղեմի աշակերտք, որոնց մէջ կը դտնուէին նաև անոնք, որ ա՛նքան դառնացուցած էին իր վերջին տարիները . . . : Տէր Մարդար քահանայ Մկրտչեանց դպրոցին բակին մէջ խիստ սրտառուչ դամբանական մը կարդաց, որ ամենէ անտարբերներու անգամ խորին յուզմունք պատճառեց։ «անդարմանելի է քաղաքացւոյս կորուստը» ի՛ըսէր նա։ Ապնիւ և ուսեալ եկեղեցականը՝ իր աչխարհական նուիրեան ժամանակ պաշտօնի և պարագաներու բերմամբ հին

* Անդրէաս վարժապետ չիշուած նամի մը գրաբառ տոդերը հանդիսիմ ունար կենսագրութեան տետրակին՝ զոր հրատարակած է Փափազեան ի Պօլիս։

հակառակորդ մը Անդրէասի, վեհանձն սրտիւ՝ որ պատիւ կը բերէ իրեն, արդէն վաղուց մոռցած էր հին անցքերը։ Թրավէի գաղիացի դաստատուն, հայր վարժապետի սրախօս բարեկամը, «Հայոց մեծ կորուստը յանձին Անդրէաս Փափազեանի» կը հռչակէր սգալի դադաղին առջև։ Հին բարի դաստիարակը թաղուեցաւ իր սիրած դպրոցի դիմացով՝ զոր իր անմահ հոգին կը շարունակէ անշուշտ դիտել անդադար խանդաղատանօք։

Քանի մը տարի ետք Անդրէասայ սիրական աշակերտ Գարեգին Բարաղեան՝ որ դովելի գործերու գլուխ գտնուելու ապնիւ եռանդ մը կը ցուցնէ, մասնախումբ մը կը կազմէր՝ որու անդամակցեցանք և մենք, աշակերտաց հանդանակութեամբ Հայր վարժապետին արժանաւոր մահարձան մը կանգնելու համար, որ և գործադրուեցաւ գրեթէ անձան։ Պատուանդանի մը վրայ, որու չորս անկիւնները չորս սիւներ կը գտնուին զահակիր, բրդաձև կոթող մ'է այն, գագաթին վրայ կրելով սգալի սափոր մը։ Ցիշատակարանը՝ որ գեղեցիկ յօրինուած մը կը ներկայէ, չրջապատուած է երկթէ քառակուսի վանդակոմով։ Ընդհանուր երևոյթը պարզ և սակայն մեծաշուք բան մ'ունի։ Գարեգին Բախազեան որդիական սրտաչարժ ջերմեռանդութեամբ հոգ կը տանի առեն առեն դամբարանի մաքրութեան, ինչպէս նաև վթարեալ մասերու նորոգման։ Երկար տարիներ Անդրէասի տօնի օրն հանդիսաւոր պատարագ կր մատուցուէր և Մեսրոպեան սանուց ներկայութեան կ'օրհնուէր անոր գերեզմանը, այլ երախտագիտական այս գովելի սովորոյթը հիմա մոռցուած կ'երևի։

Մեզ վիճակեցաւ սիրելի վարժապետին տապանագիրը գրելու պաշտօնը, ինչպէս օր մը մեզ պիտի իյնայ եղեր անոր դպրոցական բազմաչխատ կեանքը պատմելու և անոր յիշատակը նորոգելու հաճոյական գործը։

Ահաւասիկ դամբարանին վրայ կարդացուած պարզ տողերը։

Ցուրէնի Անդրէաս Փափազեան
Բարեջան Տեսչի
Եւ բազմարդիւն վարժապետի
Ս. Մեսրոպեան Վարժարանին Ազիւռնիոյ։
Զոր ծաղկեցոյց զամս հասն եւ վեց,
կանգնեցին զայս մահարձան
Աշակերտք իւր շնորհապարտք։

Ծնեալ ի 11 Ապրիլ 1806, փոխեալ յաստեաց ի 6 Մարտի 1857

Անդրէասի մահուան հետ կը վերջանայ մեր Մանկական Ցիշատակներու առաջին մասը։ Անկէ ետքի պանազան անցքերը, Մարկոս Աղարէգեանի տեսչութիւնը, մեր պատանեկան ինչ ինչ պարագաները՝ որք թերևս իսպառ զուրկ չըլլան շահեկանութենէ, և հուսկ ուրեմն մեր հրաժեշտը Իզմիրի ազգային դպրոցէն, մեր Ցիշատակներու երկրորդ և վերջին մասը պիտի կազմեն, զոր պիտի հրատարակենք պատեհ առիթով։

ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ

ՖՐԷՕՊԷԼԵԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

ԹՂԹԻ ԳՈՐԾ ԵՒ ԿԱՒ

Ֆրէօպէլեան Մանկապարտէզներու մէջ մեծ դեր կը խաղայ նաև քառակուսի գունաւոր թուղթը, որով տարբեր և զուարճալի զբաղումներ տեղի կունենան։

Թղթի գործ ըսելով կը հասկցուի ծալլոմը (le pliage), հիւսակը (le tressage), ծակոտելը (le piquage), ընդդէմ կտրելը եւ փակցնելը (découper et coller) և *քարտոնաժը* (le cartonnage)։

Մանկութեանս ժամանակ, երբ դպրոցներն իրենց նախնական վիճակի մէջն էին, երբ աւանդական Ֆալախան սրահին մէկ որմին վրայ կը հանգչէր ամենայն փառաւորութեամբ, լաւ կը յիշեմ թէ որչափ մեծ ախորժ կ'զգայինք՝ երբ ուսուցչէն դաղանի՝ թղթի կտորներուն այլ և այլ ծալքեր տալով կը շինէինք պայուսակներ, ձիեր, պայթուցիկներ եւն։ Ծալլումը ինքն ըստ ինքեան պարզ խաղ մէ՝, զոր ամեն երկրի տղայք յանշարժ կը սիրեն։ Ցիշեալ այդ խաղը իր պարտէզին մէջ ընդունեց և զայն կրթութեան գործ դործի մ'ըրաւ։ Թղթի ծալլումը գուցէ թէ չատերուն անմիտ խաղ մը թուի, սակայն մարդ կը զարմանայ երբ այդ խաղին նպատակն ու գործածութիւնը տեսնէ Մանկական Պարտէզներու մէջ։ Քառակուսի գունաւոր թուղթը, պարտիզպանուհւոյն ձեռքը, մանկանց աւանդելի երկրաչափութեան ամբողջ տարերքը կամփոփէ իր մէջ, արուեստից մատեանն մ'է։ Պարտիզպանուհին աշակերտաց կը բաժնէ քառակուսի գունաւոր թղթեր, կ'ուսուցանէ քառակուսւոյն կողմերն ու անկիւնները։ Հորիզոնական ծալ մը, որ երկու հակադիր կողմանց միջին կէտերը կը միացնէ, զայն երկուքի կը ծալլէ և կ ստանայ քառանկիւններ կամ երկար քառակուսիներ։ կը բացատրէ քառանկեանց՝ քառակուսիներէն ունեցած տար-

բերութիւնները՝ չեղ գծով մը, որ երկու հանդիպակաց անկիւնները կը միացնէ, քառակուսին երկու ուղղանկիւն եռանկեանց կը վերածէ. կը բացատրէ եռանկեան տարբերութիւնը քառակուսիներէն ևս։ Թէև չատ հեռուն կարելի է երթալ բացատրութեանց մէջ և միշտ մանկան ըմբռնելի եղանակով, սակայն զգուշ պէտք է ձնալ տղայքը ձանձրացնելէն և ծալքերու բացատրութենէն իսկոյն չէնքի անցնելու է։

Ծալումը մանկան մատերը կը մարզէ, պարտիզպանուհւոյն բացատրութիւնները միտքը կը զարգացնեն և չինուած գեղեցիկ ձևերը դեղեցկագիտական ճաշակը կարթնցնեն։

Ահա խաղ մը որ կրթութեան երեք պայմաններուն բաւականութիւն կուտայ։

Գուցէ չատերուն անհաւատալի թուի եթէ ըսեմ թէ՝ թղթի կտորի մը վրայ պարտիզպանուհին աւելի դիւրին կը բացատրէ իր դեռատի մանկանց կարգ մը երկրաչափական տեսութիւններ, քան բարձր դասարանի երկրաչափ ուսուցիչն իւր երկարաձիգ բացատրութիւններով։

Պարտիզպանուհին ծալուածքի մէջ կազմուած գծերով ու մակարդակներով մանկանց կ'ուսուցանէ օրինակի համար, թէ՝ քառակուսւոյ մը երկու անկիւնները չեղակի միացնող անկիւնագիծը զայն երկու հաւասար ուղղանկիւն եռանկեանց կը վերածէ. թէ՝ այդ եռանկեանց իւրաքանչիւրին երեք անկեաց գումարը երկու ուղիղ անկեանց հաւասար է, վասնզի մէկ անկիւնն արդէն ուղիղ է իսկ միւս երկու սուր անկիւններն կէս կէս ուղիղ անկիւններ են. թէ՝ եռանկիւն մը նոյն բարձրութիւնն ունեցող և նոյնահիմն քառակուսւոյն կէսն է ևս։

Թուղթ ծալելու գաղը, որ առ առաւելն երեք քառորդ ժամ տեւողութիւն պիտի ունենայ, երեք մասի կը բաժնուի՝ երկրաչափական բացատրութեանց, չինուածոյ և իրաշնորութեան որ կը կեդրոնանայ չինուած առարկային վրայ։ Թղթի կտորէն տղայք կը չինեն պէս պէս առարկաներ՝ աղամանդ, կաթսայ, պնակ, սեղան, բազմոց, աքաղաղ, ձի, պայուսակ, տափատ, չապիկ, կօշիկ, տուփ, մակոյկ, առագաստանաւ, ծրար, թիթեռնիկ ևն. այս ամենուն վրայ վարժուհին բացատրութիւններ կ'ուտայ։

Թուղթ ծալելը երեք տարեկանէն կարելի է սկսիլ, իսկ երկրաչափական բացատրութիւնք՝ 6—8 տարեկան տղոց կաւանդուին։

Թղթի հիւսակը ծալումէն յետոյ կ'սկսի, երբ տղայք բաւական վարժուած են ծալումին մէջ։ Այս գործողութիւնը երեք բան կը պահանջէ. Ա. եզերքը, սերդղը և մէջտեղը զուգահեռականի հատուածներու՝ վերածեալ զանազան քառակուսիներ, որք սովորաբար ընդհ կը կոչուին, Բ. թելանին զուգահեռականի հատուածներուն լայնքն ունեցող ժապաւէններ, զորս ա-ԷՋ կը կոչենք և մայրէ ասեղ մը։ Գայրէ ասեղը 15—20 սան-

թիմէթր երկայնութեամբ ողորկ ձող մ'է՝ ծայրը մանր ճեղքով։ Հիւսակի գործը ոստայնանկութեան կը վերաբերի և կը կատարուի հետեւեալ կերպով։ Աչակերտը առէջին ծայրը ասեղին ճեղքին մէջ կ'ամրացնէ, ապա ասեղին հակառակ կողմը թելաններն հատուածներուն մէջէն կ'անցնէ վոխն ի վոխ՝ անգամ մը ետակէն, անգամ մը վրայէն մինչև որ հատուածները վերջանան և վերջապէս ասեղը կ'ազատէ առէջէն։ Հիւսակին երկրորդ կարգը նախորդին հակառակ չարքը պիտի ունենայ և այսպէս շարունակ, որով երփներանգ անկուած մը կը ձևանայ։ Փղթի հիւսակը թխատ ներդաշնակօրէն իրարու կը միացնէ հաչիւ, գոյն, ու ձև։ Տղայք իրենց պատրաստած դեղեցիկ անկուածները մասնաւոր ձեռարուեստի տետրին մէջ կը փակցնեն և կամ զանոնք կը դործածեն տուփեր, չիշեր, լապտերներ զարդարելու կամ իրենց խամաճուկին սենեակը դորգելու համար։ Խիստ մանր տղոց համար կարելի է մոմլորկ թելքան ու առէջ պատրաստել աւելի դիմացկուն ըլլալու համար։ Այս դրաղմանն բոլորովին հակառակ կիրարկութեան մ'ալ կայ որ ֆիլէյաշ կը կոչուի (parfilage). այսինքն՝ անկուածի մը մէջէն մասնաւոր հաչուով մը թելեր քաշել նկար մը յօրինելու համար։

Հիւսակին տարբեր մէկ ձևն ալ կայ, ուր թղթէ թելքանի տեղ խաչաքարտէ և ձողիկներէ պատրաստուած թելքան մը կը դործածուի։ այդ պարագային մէջ հիւսակները ոչ թէ հարթ այլ ծաւալական կ'ըլլան և կը չինուին տուփեր, կողոփներ, զամբիւղներ, օրօրուկներ և։ Ցիշեալ առարկաները պատրաստելու համար խաչաքարդի երկու կտորներ կը կարենք, օրինակի համար, տուփին յատակին և խուփին ձևովը։ ասոնց եզերքըն իրարմէ հաւասար հեռաւորութեամբ մանր ծակեր կը բանանք։ ապա ձողիկներ կամրացնենք մէկ ծայրը վերի և միւս ծայրը վարի ծակերուն մէջ և վերջապէս պատրաստուած վանդակը կը հիւսենք գունաւոր ժապաւէններով։ Շէնքն աւելի ամուր ըլլալու համար կարելի է ծակերուն մէջ մտնող ձողիկներուն ծայրերը հասարակ սոսինձը թաթխել։

Ցրէօպէլ իր մէթոտին մէջ յաջորդութեան օրէնքն ի ձևին՝ հիւսակէն յետոյ յարմար կը դատէ ծակոտման դասը։ Մենք տեսանք որ տղաք Պարտէզին մէջ իրենց չրջակայ առարկայից նկարները կազմեցին նախ ծաւալական մարմիններով — խորանարդ, պրիսմակ, ապիւս —, ապա՝ մակարդակներով — տախտակիկ, թուղթ — և վերջապէս գծերով — կաւար, ձողիկ, օղակ —։ ժամ է արդ՝ վերջացումը կատարեալ ընելու համար՝ կէտերով նկարելու սկսիլ։ Ծակերով նկարներ յօրինելը կ'սկսինք միայն այն ժամանակ երբ մանկանց ձեռքը վարժուած է գրավէմի վրայ դեղեցկագիտական ձևեր յօրինելու, և որովհետև այս դրաղումը չափազանց լոյս կը պահանջէ՝ տկար աչաց անյարմար կը դատուի, ուստի առ առաւելն չաբաթը երկու անգամ տեղի կունենայ և այն ալ ½ ժամ տևողութեամբ։ Ծա-

կոտման դասին պարտիզպանուհին աշակերտաց կը մատակարարէ խաւաքարտի կտոր մը, նոյն մեծութեամբ թաղիք մը և փայտէ կոթունով հերիւն մը։ Տղայք կաչխատին ուղղահայեաց ու մանր ծակերով գեղեցկագիտական ձևեր կամ առարկայից նկարներ յօրինելը։ Մակուկէն նկարը կազմուելէն յետոյ մանկան ձեռքը կուտանք ասեղ և բուրդ՝ նկարին կենդանութիւն տալու համար։

Աշակերտը այս ամենը կատարելէն՝ և գծանկարի մէջ (dessin linéaire) բաւական յաջողութիւն ցոյց տալէն յետոյ կրնանք սկսիլ աթոռնկարը պարզ աշխատութիւն մ'է՝, որ աւելի տան տիկին կրնայ իր տղուն կատարել տալ։ Ասոր համար պէտք է պարզ պատկեր մը, թափանցիկ թուղթ, որ պատկերին վրայ կը տրուի և կակուղ մատիտ։ Նէ թուղթ կարելի է թափանցիկ ընել՝ եթէ հարկը պահանջէ՝ ընկոյզի պճեղ մը քսելով։ Վեց եօթը տարեկան տղայք խիստ կը սիրեն այս աշխատութիւնը և առանց ձանձրանալու ժամերով կ'զբաղին։ Ընդհանրապէս վեցերորդ տարիէն յետոյ տղայք մեծ փափաք կունենան մկրատով թղթեր կտրատելու և զանազան առարկաներ չինելու, սակայն մեծ մասամբ չեն յաջողիր։ Ջրէօպէլ մանկանց այդ հակումն ալ դիտնալով՝ կտրելու և ժակցնելու աշխատութիւնն ալ նուիրեց նորատի մանկանց։ Շատեր կը վախնան մանկան ձեռքը մկրատ տալ, սակայն եթէ մանուկը կարգապահութեան վարժուած է, երկիւղի տեղիք չկայ երբէք։ Աւելի ապահով ըլլալու համար կարելի է տալ կլորածայր մկրատներ։

Գեղեցիկ և ճաշակաւոր ձևեր կտրելու համար քառակուսի թուղթը պէտք է երեք անգամ ծալել անկիւնէ անկիւն, այնպէս որ ուղղանկիւն եռանկիւն մը կազմուի։ Այնպիսի եռանկիւնէ մը ներքնաձիգին կամ էջերուն զուգահեռական կամ ուղղաձիգ հատուածներ հանելով՝ կ'ստանանք գեղեցիկ խաչեր, չրջանակներ, աստղեր և բազմազան գեղեցիկ ձևեր։

Աշակերտք բաւական վարժուելէն յետոյ կ'սկսին կոր հատուածներու, որով աւելի ընդարձակ գործեր կ'արտադրեն։ Կորուած ձևերը կը վակցուին ձեռարուեստի տետրներուն մէջ։

Երբ տղայք մկրատ բռնելու վարժ են և մատներին բաւական զօրացած է կ'սկսինք քարդոնագործութեան։ Քարդոնագործքը վերջին տարուան յատուկ զբաղմունք մ'է և թուղթ կարելէն այս տարբերութիւնն ունի, որ մկրատի տեղ՝ դանակ և բարակ թղթի տեղ խաւաքարտ կը պահանջէ։

Քարդոնագործութեան դասին աշակերտք անակնկալ, պահակատուն, օրօրոց, դրասեղան եւ կը չինեն, զորս նախ կը նկարեն խաւաքարտին վրայ և ապա կը կտրեն վակցնելու համար մասնաւոր ներքեր թողլով։

Մանր տղայք չափազանց կը սիրեն աւազի, ցեխի և ջրի հետ խաղալ, մեզմէ իւրաքանչիւրը, եթէ չեմ սխալիր, բաւա-

կան զուարճալի ժամեր անցուցած է կիրակի օրեր՝ միուռ չինե-լով, ցեխէ հացեր ու կարկանդակներ պատրաստելով եւ: Տրէ-օսկէ այս խաղն ալ ընդունեց յօդուտ մանկանց եւ զայն զար-գացուց ու կրթութեան չօրաւոր դործիներէն մին ըրաւ:

Կաւի դասին աշակերտաց կը բաշխենք տախտակիկներ կամ իւղոտ թղթեր, մէկ մէկ կաւոր կաւ և տոսախէ դանակներ: Այս միջոցիկ պաշարով աղաք կաշխատին իրենց տեսած առարկա-ներուն ու կենդանեաց պատկերները կաղապարելու: Ոմանք այնքան կը յաջողին որ զարմանալի նրբութեամբ կը պատրաս-տեն ծաղկամաններ, թռչնոց բոյներ, կեռաս, տանձ, տխմորմ եւ: Պատրաստուած առարկաները նախ արեւին տակը կը չոր-ցընենք և ապա անվնաս պահելու համար կ'եփենք Տուներու մէջ իսկ մայրերը, եթէ կուզեն հանդիսատ ըլլալ և միևնոյն ժա-մանակ մանկանց զրաղասիրութեան նպաստել, թող տան տը-ղոց ձեռքը քիչ մը կաւ, որով անվեզ արարածը ժամերով կը զրաղի:

Ա. Վ. ՊԱԼՊԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Մեր նախակրթարաններու կրթական ծրագրին մէջ ամենէն բարձր թողի եղած դասերէն մին ալ երաժշտութեան մասնա-ւոր դասաւանդութիւնն է, որ մեր ամէն վարժարաններուն մէջ առհասարակ դոյութիւն իսկ չունի: Անշուշտ խօսքս եկե-ղեցական երգեցողութեան մասին չէ, այլ ան միւս երաժշտու-թեան՝ որ ժողովուրդի բերնին մէջ կը դտնէ իր արձագանքը ամէն օր, ամէն վայրկեան:

Ինծի համար երաժշտութեան դասը, մարմնամարդի դասէն (թէև ան ալ կը պակսի մեր շատ մը վարժարաններուն մէջ) աւելի հրահանդիչ ու օդտակար է: Ի՛նչ միտք եթէ մարմինը կայտառ ու քաջառողջ՝ անդին հոդին բարոյական հիւանդու-թեանց մէջ կը լողայ, չէ՞ մի որ մարմինէն աւելի հոդին է մեզի պիտանին, և առանց հոդիին ու սրտին մարմինին կատարած դերը ի՞նչ է բարոյական աշխարհին մէջ:

Ուրեմն չանա՛նք մեր աղոց հոդիները ու սրտերը աղնուա-ցընել ու անոնց ազնիւ ղդացումները միատ մի արթնցնել ի-րենց մէջ: Եւ ատ բարեփոխութիւնը ձեռք բերելու է՛ն գործ-

նական և ազդեցիկ միջոցը ո՞րն է։ — եթէ ոչ երաժշտութիւնը, միթէ բարոյախօսութեան քրիստոնէականի, կրօնագիտութեան չոր ու ցամաք դասերը նայնքա՛ն անվրէպ ու գործնական ներգործութիւն մը կրնա՞ն ընել, ա՛րչափ պիտի ազդեն հզօրապէս երաժշտութեան դասերը ուսանողին սրտին ու հոգիին վրայ։

Պոլսոյ մէջ հապիւ քանի մը նախակրթարան կը գտնուի, ուր եկեղեցական երգեցողութիւնն ի գործ, աշխարհական երաժշտութիւնն և ձայնագրութեան սկզբունքը դաս տրուի, մնացեալ վարժարաններուն մէջ միայն եկեղեցական երգեցողութիւն կը աւանդուի, և որո՞նք են այդ դասին հետևողները. — մեծ մասամբ աղքատ՝ և երբեմն միջին դասակարգէն տղաքներ, որոնք իրենց ճռազած ու աններդաշնակ ձայներով թէ՛ կոկորդնին պատռտել ստիպուած են և թէ՛ հատատացեալ եկեղեցասէրը ճանձրացնել, իսկ անդին կը մնայ խումբ մը տղաք, մեծամասնութիւնը, որ երաժշտութեան այբ ու բէնին անտեղեակ, երաժշտութեան դասէն զրկուած կը մնան. եթէ այս վերջիններուն համար ալ երաժշտութեան դաս մը հաստատուէր, ուր զուարթ երգեր, ցնծուն ու ոստոստուն եղանակներով երգել սորվեցնէին, ուր ձայնագրութեան սկզբունքը բացատրուէր, գէշ կ՚ըլլա՞ր եթէ քիչ մը երաժշտութեան մարդուն հոգևկան կեանքին մէջ խաղացած չինիչ ու բարոյացուցիչ դերը մատնանիշ ընեն կեղծ յորդորականներէ ու խրատականներէ քանի մը անդամ աւելի լաւ արգիւնք չկո՞տի ունենար։ Ապահովաբար այո՛ պիտի պատասխանեն ամեն անոնք, որոնք քիչ շատ երաժշտութեան նկատմամբ սէր ունին։

Երբեմն՝ ճչմարիտը ըսելով՝ տղայ ըլլալս կուգայ, երբ կը լսեմ մանկապարտէզի տղոց զուարթ ու մանկական երգերը, որոնք անմեղ բերաններէ երգուելով ա՛լ աւելի հրապոյր մը կազդեն ունկնդրին։ Եւ երբեմն խօլ փափաք մը կ՚զգամ երթալ խառնուիլ այդ փոքրիկ երգիչներուն մէջ, որոնց առանց երաժշտութեան ուսանիլը անկարելի պիտի ըլլար այդ տարիքին մէջ։

Անտարակոյս չեմ պահանջեր որ նախակրթարանի ու երկրորդական վարժարաններու տղաքը առտուընէ մինչև իրիկուն երգեն, այլ, երբ ուսանողը օրական 4 — 5 ժամ մտաւորական աշխատութիւն ունի, քիչ մը չկո՞տի հանգստանար և իր սիրտը հրճուանքով լեցուէ՞ր, եթէ ժամ մըն ալ երաժշտութեամբ զբաղէր ու ան առնէ աւելի զուարթ ու քաջառողջ իր հոգևկան կարողութիւնները չկո՞տի ըլլար։

Եւ այս անհոգութիւնը միայն նախակրթարաններու մէջ չի տեսնուիր, այլ նաև երկրորդական վարժարաններու մէջ, օրինակի համար Պօլսոյ կեդրոնականին մէջ, ուր գեղեցկագիտութեան դասեր կ'աւանդուին բարձրագոյն երկու կարգերու մէջ. բայց ի՞նչ օգուտ որ այդ գեղեցկագիտութեան չոր դասերը գեղարուեստի ճաշակը չեն զարգացներ այնչափ ուրչափ երաժշտութեան գործնական դասերը։ Ասոր համար ալ պիտի ուսարկեն ոմանք թէ կամքէ անկախ պատճառներով ինչ ինչ երգեր երգել կարելի չէ. հոգ չէ թող հայերէն ուսանողական երգեր ըլլան անոնք կամ թէ եւրոպական երաժշտութեան անպատառ գանձարանէն առնուած յարմար կտորներ. խնդիրը նպատակը գործադրելուն վրայ է. ըլլա՛ն երգերը հայերէն կամ ֆրանսերէն։

Այս՛ սորվեցնենք մեր տղոց երաժշտութիւնը, միտանակ ընդարմակ կերպով աւանդելու անոնց բնակ. ու չափական դիտութիւնները, սիրցնել տա՛նք անոնց երաժշտութիւնը, որպէս դի մտաւորական ճշմարիտ զարգացման բան չպակսի, թերևս այն ատեն աւելի սրտի տէր ազնիւ երիտասարդներ ելլեն մեր վարժարաններէն, որոնք կեանքի մէջ իտէալի մը փարին։

Երաժշտութիւնը, ի՞նչ մոգական բառ, որ երեւակայութեան լալ թռիչներ կուտայ, հոգին կը կախարդէ, միտաղրելով երազներու վերին աշխարհին մէջ, ուր զգացումները համակ սուրբ, աննիւթական, դիւթիչ են։ Ո՞վ չէ յուզուած ու սրտին մէջ խռովք մը չէ զգացած ի լուր երաժշտական ընտիր կտորի մը և կամ մելամաղձիկ եղանակի մը։

ԾՈՓԵՑԻ

ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ՎԱՆՔ ԵԿԵՂԵՑՒ ԳԱԻԱՌԻ

Տարիներ առաջ Ա. Մամլ. մէջ Երզնկայի Չարչարանաց վանուց նկարագրութիւնը հրատարակուած է՝ եկեղեցւոյ գաւառ վերնագրով չարունակական յօդուածներու շարքին մէջ, բայց տնկէ ի վեր շատ բան փոխուած, մանաւանդ այս կարևոր վանքի մասին գաւառացի հասարակութեան հետաքրքրութիւնը աւելցած լինելուն, կը փութանք մեր այցելութեան նոր տպաւորութիւնները մեր սիրելի ընթերցողաց ներկայացնել։

Զարչարանաց վանքը որ Տատասկի վանք և ըստ ոմանց Մերձանի վանք ալ կը կոչուի, գատառիս հարաւային արեւելեան կողմն է։ քաղաքէն 3 1/2 – 4 ժամ հեռաւորութիւն ունի և ղեռեղուած է դաշտը պարագծող չկոփային ստորոտը և Մերձան վտակին ափունքին մօտ։ Վանքը իւր այժմու դիրքէն եթէ մէկ մղոնի չափ դէպի հարաւ, կամ արեւելք և կամ դէպի արեւմուտք չինուած լինէր, աւելի բարձր, տեսարանաւոր ու նպատակադիր դիրք մը պիտի ունենար, հետևաբար աւելի հովասուն. բայց կ'երևի թէ պատմական պատճառներ արդելք եղած են այս բանին։ Այսու ամենայնիւ գուրկ չէ այն չքեղ, զմայլելի ու բանաստեղծական տեսարաններէն, զորս կ'ընծայեն իրեն հանդիպակաց ու մերձաւոր բարձրաբերձ լեռներն, անոնց մշտադալար գագաթներն. անդնդախոր կիրճերն, անոնց դարաւանդներուն ու կողերուն վրայ, ձորերուն մէջ ու ստորոտները ցրուած բազմաթիւ չէներն, դիւղակներն, դիւղերն ու այգեստանն։ Ոչ նուազ գեղազարմ է մարդագետինն, որ կը տատածուի վանքին դրան առջև. դարաւոր թմենիներ, սաղարթագեղ ուռիներու և բարտիներու կանոնաւոր շարքեր կը լեցնեն ու կը պարագծեն զայն։ Մերձանայ վտակէն անջատուած լայն առու մը կը հոսի, կ'անցնի մարդ ավայրին մէջէն. անոր առնորակ ալիքները կը շոյեն մամռանպատ դարերը ու նատրաններն որ յօրինուած են առուին եղերքը, ծառերուն դեղուղէչ ոստերն ջուրին վրայէն կը խոնարհին, իրարու կը մօտենան և իրարու կը վաթթուին կարծես համբուրուելու համար, ու հոն կը ձեւացնեն հովանի մը, ուր արևուն ճառագայթները չեն ջոկեր թափանցելու։ Մնձուրեան լեռնագաւառէն վրայէն անցնող ցուրտ քամին չուշանար իր անուշ զովութիւնը դրկելու մերձակայ Մերձանի կիրճէն և կատարելագործելու այս հմայիչ տեսարանին գաղտնութիւնը, զոր վայելել կ'փութան քաղաքէն ու դիւղերէն խոնջեալ մարդիկ, պարտասեալ մարմիններ, զբաղմասէր հոգիներ։ Վանքը եթէ չունենար իսկ այսքան հրապոյր, անոր բազմադարեան նշանաւոր ուխտատեղիի համբաւը, անոր պահած ու պահպանած արդութիւնները և Մերձանի բարեհամ ու պաղուկ ջուրը, որ մինչև քաղաքը վճառելու կը տարուի, բաւական են կրօնասէրներն ու տկարակազմները իրեն հրաւիրելու։ Արդարև գատառիս պատկանեալ միւս բոլոր վանքերը ունին իրենց սեփական առաւելութիւնները, առուեր կամ նուազ առատջարար օդ և ջուր, բայց Մերձանայ առուն ամենէ աւելի կանոնաւ կը զովացնէ օդին սրտակները և կը զրդռէ ախորժակները։

Վանքին չէնքը ունի լայն պարիսպ, ընդարձակ թոնրատուներ ամառուան ու ձմեռուան համար, բաղանման չափարաններ, դռներ, ախոռներ, գետնայարկ ու կրկնայարկ սենեակներ այցելուաց համար։ Պարզ ու քարուկիր եկեղեցի մը, որ չինուած է իբր 40 տարի առաջ հին մատուռին տեղը։ Այս վերջինը, ըստ

պատանդութեան, լուսաւորչական եղած է և ունի եղեր կաթուղիկէ։ Եկեղեցւոյն հարաւային որմին մէջ բացուած դուռ մը կ'առաջնորդէ ստորերկրեայ անձուկ գուբ մը, զոր կը կոչեն իոր վէրպ։ Տաճարին ներքին դրան բարաւորին վրայ Ս. Լուսաւորչի ու Տրդատայ պատկերը ներկայացնող մարմարիոնէ մը, որ վերջին ժամանակի գործ կ'թուի, և եկեղեցիէն դուրս, արևելեան որմին ստորոտը կանգնած մի քանի խաչքարներէ զատ, հետաքրքրութեան արժանի ոչինչ ունի այս նշանաւոր վանքին չէնքը։

Ձեռագրերու կողմէ, այս վանքը, հակառակ ամենուն ակնկալութեան, խիստ աղքատ է, ունի միմիայն մէկ ձեռագիր աւետարան, մեծադիր, միջակ գրով ու նկարաւ, գրուած Խլաթի մէջ? 22 թուին։

Իսկ հնութեանց կողմէ հարուստ կրնայ համարուիլ։ Ունի չատ մասունք զոր վանահայրը, Տ. Ղևոնդ Հայր, ամենայն երկիւղածութեամբ ու բարեպաշտութեամբ կը պահպանէ, կամ պահպանել կը ձևացնէ։ Ահաւասիկ ցանկը այդ նշխարաց, ոմանց մէկ քանին տեսանք, իսկ մնացեալներուն անուններն ստացանք։ 1. Ս. Գրիգոր աստուածարանի բազուկէն մաս, 2. Ս. Գր. Լուսաւորչի գագաթէն մաս, 3. Ս. Լուսաւորչի ոտքի բևեռներէն 2 հատ, 4. անոր բերանը գրուած դանդ անավանգէն կտոր, 5. Բերանի գելոցէն կտոր, 6. հինգ հատ տատասկ, 7. Աբիստակէս հայրապետի ծնօտէն մաս, 8. Ոսկեբերանի մասունքէն, 9. Ս. Գէորգի ճկոյճէն, 10. Ս. Աստուածածնի շապիկէն կտոր, 11. կենաց փայտէն մաս, 12. Նոյեան տապանէն մաս, 13. Աթենաթորոս վկային նշխարներէն մաս, 14. Նոյեան տապանէն ուրիշ մաս՝ խաչի մէջ առնուած։

Վանքը ունի իւր շուրջը չատ պատմական վայրեր ու աւերակներ, ուր հնասէր այցելուն կամ բարեպաշտ ուխտաւորը հետաքրքրութեամբ կը չրջի, կը դիտէ փլատակաց դերբուկնելը, որ հնութեան բեկորներն են, հանգած եկեղեցիներն, մատուռներն ու վանքերն, ուր կրօնաւորը գարերով մրմնջեր է իւր ազօթքը, բարձրացնելով իւր խունկի ծուխին հետ հոգւոյն ամենէն ջերմ զգացումներն առ Աստուած, անվոյթ գըլխնուած է ժողովուրդին լուսաւորութեան, կը տեսնէ, կը չօշափէ, կը համբուրէ ուխտատեղիներ, որ ջերմեռանդութեան առարկաներ եղած են ու մխիթարութիւնը մեր նախնիքներուն, կը հանդիպի դիւղերու, որոնց Հայ բնակիչներն փոխադրուած են դաչտային վայրեր, անտեր թողլով իրենց եկեղեցիները։

Վանքին չէնքէն մէկ քառորդ ժամ հեռու այէպի հարաւային արևելք քարքարոտ ու խոպան վայրի մը մէջ կը գտնուի ժայռ մը, որ ունի փոսիկ մը ձևկն պէղը անուն։ Լուսաւորիչ, քստ աւանդութեան, չարչարուելու առեն հոն ծունկ չոքեր է աղօթելու և հանգչելու համար։ Ինան վայրկեանի չափ հեռու, Մերճպոի ձորին մէջ, վանքին ճիշտ հարաւային կողմը, ջուրին

եղերքը բարձրացող ժայռի մը կրճնած է ընդարձակ սրբավայրի մը աւերակներուն դերբուկը, որու որմերուն տեղը կ'երևի դեռ որոշակի Գեամիին սրնիթաց ջուրերուն, սոսկալի հեղեղներուն դիմադրելու համար չատ ամուր, հոյակապ ու ընդարձակ պէտք էր ըլլալ այս եկեղեցին, որ կ'անուանի Էջմիածին, ուր, ըստ աւանդութեան, լուսաւորիչ մինչդեռ խոնջած ու պարտասած մնացեր է իր տանջանքներէն ընկճուելու մօտ, Միածին որդին իջեր ու քաջալերեր է զինքը Մերձանայ ժորկն անդին, կէս ժամ հեռու վանքին չէնքէն, կայ դիւզատեղի մը բարձր դիրքով, որ ունի առողջարար օդ, գեղեցիկ տեսարան, ընդարձակ վարելահողեր, աւերակաց կոյտեր, քանդուած այգիներու մնացորդներ, հանգած եկեղեցի, միով բանիւ բազմամարդ ու զուարճալի գիւղի մը բոլոր նշաններն Այս կալուածքը որ Զոչկանց կը կոչուի, կը վերաբերի Լուսաւորչի վանքին և կը մշակուի քուրդ մշակներու միջոցաւ որ հոն ունին բնակութեան համար երկու տուն Զոչկանց անուան ստուգաբանութեան համար մէջ բերուած մեկնութիւններէն և ոչ մին հաւանական կը թուի

Վանքին դէմ, միայն քանի մը վայրկեան հեռաւորութեամբ դէպ արևելք, դարձեալ Մերձան վտակին եզրը կայ գիւղատեղի մը Երէց անուն, ուր, ըստ աւանդութեան, կը գտնուէր Անահիտ դիցուհիին արձանը ու հետևաբար Գրիգոր Լուսաւորչի վերաբերող դէպքեր կը յիշուին

Դէպի հարաւային արևմուտք, Ագրակ գիւղին մօտերը, բարձրադիր ու քարքարոտ տեղ մը կը տեսնուին գիւղատեղւոյ աւերակներ, լքուած առուներ, անդաստան, մարդագետին և սակաւ ծառաստան, որ իրրև սահմանան մակագրեալ կը ծառայեն չրջակայ դիւղերու հօտերուն Այս ընդարձակ, բարձրադիր, բարերեր ու հովասուն վայրը այսօր բոլոր գիւղացիներէն կը կոչուի ագռաւ և կ'աւանդուի թէ Լուսաւորիչ իր աղի բեռը, զոր չաչկած էր, հոն հանգչեցուցած է, կամ այդ չարչարանքը հոն կրած է

Վերջապէս, դէպի հիւսիսային արևելք, Մեղուցիք գիւղի ճամբուն վրայ, հեղեղատի մը բերած աւազներուն ու խճակոյտներուն եզրը կը գտնուին ուրիշ ընդարձակ գիւղատեղիի աւերակներ, զոր այսօր ժողովուրդը կ'անուանէ Պաղկանց, վասնզի հոն Լուսաւորչի գլուխը անցուցին մոխրով լի պարկը

Նկարագրուած աւերակները այսօր բոլոր չրջակայ գիւղացի ժողովրդներուն կողմէ մեր նշանակած անուններով կը կոչուին և կը կազմեն իւրաքանչիւրը մէկ մէկ հանգ, այսինքն վարելահողերու մաս, անդ, ուր կ'երթան վարուցանի և հունձքի աշեն. իսկ անոնցմէ Ծնկին պեղը և Էջմիածինը ուխտատեղիներ են և հանուն կազմելու չափ վարելահող չունին.

Վանահայրն է Տ. Ղևոնդ քահանայ Տ. Պողոսեան որ քաոդրդ դարէ ի վեր հոն հաստատուած է, իր մեռնողրու-

թեան հետ այդ պաշտօնը ընդունած է Ազգային Պատրիարքարանէն՝ կուսակցական կռիւներէ վերջ, որոնց մէջ իր կողմնակիցները յաղթանակը տարած և Տ. Ղևոնդի բարեխիրատ ու հաստատամիտ հօրը տեղ դինք վանահայր կարգել տալու յաջողած են։ Ժամանակին պատրիարքը Տ. Ղևոնդէն հաստատ խօսք առած է վանք դառնալէ յետոյ հոն գիշերօթիկ վարժարան մը հաստատելու և գիւղերու վարժապետ պատրաստելու։ Տ. Հայրը արդարև 5—10 տղայոց համար վարժապետ մը վարձեց ու վեց ամիս պահեց, բայց չը դիտցուիր թէ ինչո՞ւ համար չուտով ճամրեց թէ տղայքը և թէ վարժապետը և այն օրէն իվեր մոռցած է իւր խոստման հետ գիշերօթիկ վարժարանի մը գաղափարը։ Այժմ Տ. Հայրը նոյն իսկ իր զաւակներուն պարզ դրել կարդալ սովրեցնելու համար ուսուցիչ չը հրաւիրեր։ Լուսաւորչի վանքը ունի իւր չորքը գանի մը թեմական գիւղեր, ինչպէս Մեղուգիւղ, Մամ-գեղ, Սպրակ և Եղնաբեր (Մօղա-գեղ), որոնցմէ պզտիկ և ուրիշ անուններով նուէրներ կը հաւաքէ։ մենք գոհ պիտի լինէինք, եթէ Տ. Հայրը գէթ այդ գիւղերուն վարժարանները բարեկարգելու համար իւր խօսքը չը զլանար միայն։ Պարտք և իրաւունք փոխադարձ են. երբ գիւղացին իւր բերանի պատառը, իւր զաւակին անունդի բաժինը կը հանէ և իրր նուիրական պարտաւորութիւն վանքին կուտայ, պէտք է որ վանքն ալ գիւղին կրթական ու եկեղեցական գործերուն բարւոք ուղղութիւն մը տալու ջանայ։ Գաւառին ժողովուրդը գիշերօթիկի մը խոստումը մոռցած է, այդ բաղձանքէն հրաժարած է։ այժմ եթէ Տ. Հայրը այդպիսի վարձք մը ունենար իսկ, ժողովուրդը պիտի չը թոյլատրէր, վասընկի՝ Տ. Հօր հսկողութեան ներքև կրթութիւն առնող աղաքներէն բան մը չուտալ կարելի չէ։

Վանքը ունի բաւական բարգաւաճ վիճակ. ընդարձակ վարելահողեր, պաղարեր այգի, դաւար և արջառ, այցելուներու և ուխտաւորներու նուէրներ, չրջակայ գիւղերուն պատին, ասոնք ամենը հասոյթներ են որ բաւական մեծ գումար կը կ՚արտադրեն։ Որբեր, տնանկներ յանձնուած չեն վանքին իւնամարկութիւն, անցորդներ և ազքատ այցելուներ դուն ուրեք կը պատահին. երկար տաեն վանքին նորոգութեան մէկ փող չը ծախսուիր. արդ այսչափ առատ հասոյթ ի՞նչ բանի կը գործածուի։ Տ. Հայրը պատասխանատու և համարատու մարմին մը ճանչցած չէ ցարդ։ ժողովրդին այն անառարկան անկեալ կացութեան, դպրոցներուն ողքեցի վիճակին ի տես, հարկ չէ՞ արդեօք Տ. Հայրը հրաւիրել որ թողու անպատասխանատու և քմահին անառարկութիւն մը և աւելի արդար, իմաստուն ու հեռատես ընթացքի մը հետեւի։ Մինչ հայուհի խոյս տալ օգտակար է նոյն իսկ իր անձին ու չահուն։ ժամ է որ վերջ դնէ այս կատակերգութիւնը, իմաստուն բարեպաշտ ու անշահախնդիր անձերէ բաղկացեալ մարմին մը կազմուի, որու առջև Տ.

Հայրը ոչ միայն պատասխանատու ըլլայ յառաջիկային համար, այլ անցեալին հաչիւները ներկայացնէ։

Տ. Հօր առաքինութիւններն ալ չատ փոխուած դտայ։ Երբեմն չատ հիւրասէր ու մարդասէր կ'երեւէր. ուխտաւորները և այցելուները կ'ընդունէր ժպտագէմ և կը պատուէր դանոնք, անոնց ամեն կարգի պիտոյքը կատարելու փութաջանութիւն ցոյց տալով։ Այժմ, ընդհակառակն, այցելուայ ու ուխտաւորաց երեսը տեսնել չուզեր. չաս անդամ կը պահուըտի. երեւան ելած ատեն այնպիսի ցուրտ ընթացքի մը կը հետեւի որ այցելուն ինքնին կ'ստիպուի թողուլ երթալ։ Կոնխահոդութիւն չունեցող ուխտաւորներէն չատեր անօթի ու բացօթեայ պառկած են այդ հարուստ վանքին մէջ։ Երբեմն աչխատասէր ու չարքաշ էր, աչխոյժ, փութաջան ու դիւրաշարժ. արտերը անդամը վարել ու ցանել կուտար, դուլ ու դադար չուներ, ինք բոլորովին չարժուն էր. ամեն դործ կ'ընէր, ամեն բանի կը հասնէր, ամեն տեղ էր։ Այժմ ընդհակառակն, արտերը, կիսով չափ կիսարի (մըպպա) կուտայ, ոչ թէ ինք, իր տղաքն անդամ չեն աչխատիր. օրն ի բուն դրան առջև նստած է, կամ ձեռքերը դոտին անցուցած դանդաղորէն կը չրջի դիտելու համար թէ ամեն մարդ ինչ կը խօսի. չատ անդամ կը յայտարարէ թէ հիւանդ է։ Միայն Ագրակ ու Մեղուցիկ դիւղերը երթալ հոգևոր մատակարարութիւն ընելու համար փութաջան կը դտնուի։ Այս դիւղերէն առաջինը քահանայ չունի, իսկ երկրորդը որ 200 տուն հայ կը պարունակէ, միայն մէկ քահանայ ունի։ Պաղի հաւաքելու մասին ալ դանդաղ չէ։

Ատեն մը վանքը աւելի մաքուր, աւելի կոկիկ, պարիսպներն ու սենեակներն նոր ու անվթար էին այժմ քակուած, մաչուած, փրթած, ծակած ու պատռած ամեն կողմ կերևին, որոնց նորոգութիւնը Տ. Հայրը միչտ յետաձգել կուզէ։

Ատեն մը վանքին առջևի ծառաստանը աւելի մաքուր, վայելուչ ու զարդարուն էր, Տ. Հայրը ուռի ու բարտի ծառերու նորատունկները բազմացնելու փափաք մը ունէր. ուխտաւորաց հանգստութեան ու հանգչելի համար ամեն միջոց ի դործ կը դնէր։ Այսօր անհոգութիւն մը, անփութութիւն մը, անտարբերութիւն մը կը նշմարուին ամենուրեք։ Մարդաշէտինը ծածկուած է աւազով, դարերն ու նստարաններն փլած, կամըրջակներն քակուած, թթենիներն դօսացած, չորցած, փճացած, արմատ չը բռնող կամ ուրիչ պատճառներով չորցած ծառերուն տեղ նորեր չեն տնկուիր։

Տ. Հօր անհոգութիւնն մինչև հոն հասած է որ վանքին սրբութիւններէն ու մասունքներէն մի քանին չախչախուած ու վնասուած են, մասունքներ, որոնց վրայ Տ. Հայրը կը դուրգուրայ, որոնց մասին ծայրագոյն մեծարանք ու բարեպաչտութիւն կը ցուցընէ, բայց զանոնք ոսկերչի մը ձեռքով նորոդել տալ չուզէր։

Այս տողերը կարդալով Տ. Հայրը սաստիկ վիշտ ու զայրոյթ պիտի զգայ ու պիտի ջանայ անոնց հեղինակը թշնամանել ա- մեն կերպով, ինչպես ըրաւ անցեալ տարի, երբ Հայրենիքի մէջ իրեն նկատմամբ քննադատական յօդուած մը երեւցաւ: Սա- կայն մենք իրեն բարեկամ ենք և կը վստահինք որ իր սխալ- ները ճանչնայ և ուղղէ: Ճշմարտութեան դէմ մաքառիլ անհն- նար է. ճշմարտութիւնը ուշ կամ կանուխ պիտի յաղթանակէ:

12 Նոյ. 1894 Երիզա

Եղիկեան Վրթանէս Ս. ԱՄԱՏԵԱՆ

ԿԱՐԵՒՈՐՆԵՐԷՆ ՄԻՆ

Շատ տեղերու հասարակութիւններ երբ կը տեսնեն որ ի- րենց թաղերէն մանչերու և ազգկանց վարժարաններու մէջ պէտք եղածէն աւելի վարժապետ ու վարժուհի կայ, — այսին- քըն 25—30 աշակերտի մէկ վարժապետ — կաճապարեն անմի- տօրէն քարոզել թէ՝ ալ իրենց դպրոցներն բարեկարգուած են:

Մենք այդ կարգի անձանց նման չենք ուզեր չուայլ ըլլալ. այլ կը սիրենք սպասել ժամանակին, և երբ իրական արդիւնք- ներ նշմարուին՝ այդ ատեն միայն կը ճայնակցինք:

Բարեկարգութեան առաջին նշաններն պէտք է որոնել վար- ժարանին աշակերտաց և վարժապետաց մէջ տիրած բարոյա- կան ներդաշնակութեան ներկայութենէն:

Միայն ծրագիր յատակագիծ և դրութիւններ չեն կարող տղայքը պէտք եղածին չափ դաստիարակել, երբ անդին վար- ժապետն ու վարժուհին՝ անհաճոյ վարմունքով և անվայել ըն- թացքով՝ փոխանակ բարի օրինակ հանդիսանալու, յոռի ազդե- ցութիւն կունենան:

Գաւառներու մէջ հոգ արարձուք՝ որ տեսչութեան փափուկ պաշտօնն ունին որքա՛ն մե՛ծ գործեր ունին ընելիք և աւելին՝ որպիսի անբասիր կեանք մը վարելու են:

Հոգ արարձուն, վարժապետն ու վարժուհին պէտք է որ մխիթարչն խորհուրդներով տոգորուած գործեն. պէտք չէ որ քը- մահաճոյքը, կողմնակցութիւնն անձնասիրութիւնը տիրէ մէջեր- նին, իրենց չարժումներն, ընթացքը՝ խօսուածքին կերպերը և

վարքն ու բարքը միայն պէտք կայ պատկերանայ աշակերտաց մատաղ կեանքին մէջ։ կատարեալ օրինակներ ըլլալու են։

Եւ երբ մեր բոլոր վարժարաններն այս սկզբունքն ընդունած՝ վարժապետ և վարժուհի մէկ կողմէն, հոգաբարձուք միւս կողմէն՝ չկան կատարեալ օրինակներ ըլլալ, ահա այն օրէն պիտի սկսին էքսկիւզիոնիեան մէջ մտնել մեր վարժարաններն։ Այնատեն պիտի ունենանք ներդաշնակ դաստիարակուած տղաքներու և աղջկանց խումբեր, որ օրին մէկը Աստուծով բարի ծնողներ ըլլալով՝ պիտի վերցնեն հասարակութեան վիճակն ինչ որ յոռի է և ինչ որ վնասակար։

Բարքերու ազնուացումը այս դրութենէն կախում ունի։

Մաղնիսա, 19 Նոյեմ։ 1894 Մ. ԵՐԱՆԵԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲՈՇԱԿ

Մեր նախորդ յօդուածով բացատրեցինք թէ՝ ընկերութիւնը չունի որ գոնէ տարրական կրթութիւնը ծաւալի իր ըստորին խաւերուն մէջ, թէ ազգատութեան, մոլութեան, չարագործութեան և զանազան ընկերային չարեաց առաջն առնելու ազդեցիկ միջոցներէն մին կ'համարուի կարելի եղածին չափ օգնել տնտնկին որ իր զաւակը կրթէ, և թէ պետական տուրք՝ հաւաքական, նպաստներ, մսնտական նուէրներ անդադար կը հաւաքուին կ'յատկանան այդ նպատակին գործադրութեան համար։ Սակայն ի դերև պիտի ելնէին մասամբ այս ամեն զոհողութիւնները եթէ ընկերութեան անդամներուն վրայ իրենց անհրաժեշտ պարտ չդրուէր կրթութիւնն՝ և եթէ, անհատական անկախութիւնն յարգելու սրամտրութեամբ, ծնողք ազատ ձգուէին հետևիլ իրենց կամաց կրթական գործին մէջ։ Հետևապէս չատ քաղաքակիրթ տէրութիւններ տարրական կրթութիւնն օրինօք վազուց պարտաւորիչ հրատարակած են, և այսպէս գործնապէս հաստատած են թէ՝ քանի՛ մեծ կարևորութիւն ունի ընկերութեան համար՝ մանաւանդ չքաւոր դասակարգին մէջ, կրթութիւնը տարածել։ Բայց օրինօք տրամադրել ազգատին կրթութեան պէտքը կ'ենթադրէ օրինօք ևս հայթայթել յետոյ այդ կրթութեան նիւթական միջոցներն, որպէս զի ծնողաց կողմէ ո և է առարկութեան տեղի չտրուի։ Եւ իրօք՝ այս

օրինաց հետևանօք կրթութեան ելմտացոյցներն, որ երբեմն լոկ ուսանելիք հազարներու դումարներ կին, այսօր մի իսններու կը հասնին, և անտարակոյս հետզհետէ պիտի աւելնան եթէ պետութիւնները կարենան ղեկչել իրենց ելմտացոյցներէն ծախսերը որ մարդկային ազգի ընդհանուր կեանքին շատ աւելի վնասակար են քան օգտակար։

Մեր այս խորհրդածութեանց եզրակացութիւնն այս է որ՝ եթէ հարուստ ազգեր իսկ անխնամ ու անկիրթ չեն կամիր թողուլ ազքատիկ դասակարգին մանկտին և այս նպատակաւ կարևոր զոհողութիւններ չեն կրնար, որչափ ևս առաւել օգնութեան և քաջալերութեան կարօտ են այն հասարակութեանց մտորին դասակարգն՝ որ մանաւանդ կրնական գործին վրէ, անկարող է իր մանկտւոյն դաստիարակութեան համար կարևոր ծախսեր սատնձնել։

Ա.յսպիսի պարագայի մէջ մի քանի միջոցներ կ'ներկային կրթութեան յատկանալի դումարներ հայթայթելու. այս է՝ հանրային դպրոցական փոխ — առևոր մանկանց դպրոցական ընծայ — քաղաքացիէ կոմունաճ հասարակական եկամուտ։

Արդ՝ եթէ ի նկատի առնենք հայ ժողովրդեան կրթական ելմտացոյցներն, պիտի տեսնենք, որ սոյն երեք միջոցներն քիչ շատ ի գործ կ'դրուին դպրոցներու մատակարարութեան համար. իսկ այն թաղերը, գիւղերն ու թեմերն՝ ուր վարժարանները լիովին զուրկ են հաստատուն հասոյթէ, ազքատիկ մանկտւոյն վրայ ամսական կամ չաթմանական տուրք մը կ'դրուի, տուրք՝ որ հազիւ կ'բաւէ դոցել ծախսն, այնպէս որ նպաստամատոյց ընկերութիւններ ստէպ կ'կազմուին որպէս զի անոնց օգնութեան հասնին։ Հաչիւ եղած է որ միայն Մայրաքաղքի հայ դպրոցներու համար տարեկան ծախսուց դումարն քսան հազար ոսկւոյ կ'ելնէ, առանց սակայն ահնկալուած արդիւնքը ստանալու, մէկ գողմէ կրթական անհրաժեշտ պիտոյից համեմատութեամբ սոյն դումարն անբաւական և միւս կողմէ մանկավարժական եղանակները թերակատար նկատելով։ Եւ եթէ կայ աւելի նկատողութեան արժանի կէտ մ'որով ստէպ ազքատիկ աշակերտը կը զրկուի, այս է թէ՝ առ հազարակ ունևորին զուտ ևն չքաւորին համար սահմանուած դրամով կ'դաստիարակուի, հարուստը կը կողոպէ ազքատն, ինչպէս պիտի հաստատենք, նոյն իսկ այնպիսի հաստատութեանց մէջ ուր արդարութեան և հաւասարութեան սկզբունքն կրթութեան առաջին և վերջին պայմանը պարտ լինիլ։

Փ

Չէրկ չկայ այս ընդհանուր նկատողութեանց վրայ աւելի ծանրանալ՝ հաստատելու համար թէ մեր մէջ ազքատ մանկտին իրաւունք ունի հանրային ձեռնտուութեան՝ դէմ տարրական ուսումնարան մը ստանալուն համար։ Բաւ է միայն ակնարկ մը

նետել մեր չուրջն և քննել թէ ազգային վարժարաններու մասնակարաբութեան համար ինչպէս կ'տնօրինուին թոշակ, տուրք և եկամուտ։

Արդ՝ ամենուն յայտնի է թէ շատ տարիներ առաջ՝ գրեթէ յիսուն տարուան չրջանի մը մէջ՝ նախ Ս. Մեսրոպեան և ապա Ս. Հոգեհրեշտակեան վարժարանն ամեն դասակարգի մանկանց ձրի կրթութիւն կ'տար. ոչ մի աշակերտ ու աշակերտուհի, ինչ վիճակի որ պատկանէր, կանոնաւոր թոշակ կամ տուրք մը չէր վճարեր, վասն զի՝ Հասարակութիւնը մեծ մասամբ եկեղեցեաց կտակուած կալուածներ ունենալով, որոշուած էր անոնց եկամուտներէն մի մասն կրթութեան գործին յատկացնել։ Թէև դովելի էր այս անօրէնութեան սկզբունքն, գործադրութեան եղանակն էր անիրաւ, քանի որ ոչ միայն հարուստին տղէն չէ կ'խլուեր, այլ և խնամով, հետևապէս և մեծագոյն ծախիք՝ ի վնաս աղքատի որդւոյն, որ գրեթէ ընկեցիկ և ողորմելի դրութեան մէջ բարոյապէս և մտապէս կ'տուժէր, ինչպէս՝ Նուպարեան Պ. Մեսրոպ՝ իր Մանկական յիշատակներու մէջ՝ այնքան մանր և պզտիկ ոճով բացատրած է, ցաւալով և ցաւեցնելով զոհերն դիմաւորապէս չունենալ դասակարգին մէջ աւելի առատ լինելով։ Ասոր կ'հետևի որ գրեթէ կէս դարու չափ շատ ունևոր ներուններ վայելած են, որքան որ կարելի էր վայելել այն ժամանակ, ձրի կրթութեան օգուտներն՝ ըստ անօրէնութեան չէնան պաններու, որ կարծէին թէ իրաւունք ունին ըստ հաճոյս անօրինել մինչև իսկ կտակել գումարներ։ Սակայն մեծ մասամբ՝ յանուն Ս Ստեփաննոս Եկեղեցւոյ և Ս. Լուսաւորչ Հիւանդանոցի և միւքր մասամբ վարժարաններու ձգուած եկամուտներն միթէ աղքատո՞ն թէ ոչ հարուստին վայելման համար են։ Անտարակոյս կտակարարներու նպատակն եղած է և պիտի լինի միշտ աղքատասիրութեան, ողորմասիրութեան և կրթասիրութեան ոգւով, թշուառ մարդկութեան ձեռնտու դտնուիլ և անոր նիւթական, բարոյական և մտաւորական ցաւերն ամոքել։ Երբէք լսուած և տեսնուած չէ որ ունևոր կտակարար մ'ունեւորին ո և է պիտոյից գոհացման համար իր հարստութենէ մաս մը զոհէ հրապարակային հրիտակով, մանաւանդ երբ կտակարարն չէ թէ մանաւանդ այլ հանրութեան օգուտն ունի կատնպատակի և նոյն հասարակութեան աղքատիկ, տկարիկար ու թշուառ մասին բարօրութիւնը։ Արդ՝ եղած կտակներուն տառն ու հոգին, ինչպէս նաև բանականութեան թելադրած ամենապարզ խորհուրդներն անտես առնելով՝ մեր հինաւուրց ջրջերն որոշած էին գրկել աղքատ հարուստին համար և բուսական մեծ անիրաւութեան մը դործակատարները լինել, ինչպէս նաև Հասարակութիւնը վարժել անխտիր անգործութեան և մուրացկանութեան, որով ձրի կրթութեան համն առնելէ ետք՝ իրրև բնական պարգև, կեանքս ուրիշ պէտքեր ևս ձրիապէս վայելելու պիտի ձգտէին։ Բայց կարելի չէր որ սոյն անիրաւու-

թի՝ նն յաւէտ չարունակուէր և տղքատին իրաւունքն ընդ միշտ խորուէր։ Ֆանի լոյն սկսաւ արդարութեան ղդացումներու հետ հայ Հասարակութեան մէջ տարածուիլ, քանի ժամանակի և կրթութեան պահանջումներուն հետ դպրոցական ծախսերն սկսան աւելնալ, բանիրուն մարդիկ տեսան որ վարժարանաց եկամուտներուն դումարն խիստ մեծագոյն մասամբ բարձրագոյն դասարաններու ուսանողներու համար կ'ծախսուի, դասարանները՝ ուր ունևորներու որդիներն մեծամասնութիւնը կը կազմէին։ Աղքատ դասակարգին եղած այս սկներև դրկանաց խնդիրն 1876ին Ուսումն. խորհրդոյ ուշադրութիւնը կ'դրաւէ և դպրոցական թոշակ հաստատելու պէտքն վարչութեան ձեռօք գաւառական ժողովին կ'ներկայէ։ Ժողովն նուիրական կտակներու պահանջումն և արդարութեան պարտք մը կատարելու համար կ'որոշէ որ այնուհետև քիչ շատ կարող և ունևոր դասակարգի ծնողաց վրայ դպրոցական թոշակ մը հաստատուի և աղքատիկ մանկանց իրաւունքն ապահովի։ Այս որոշումն կ'հաղորդուի ի գործադրութիւն Ուսումն. խորհրդոյ, որ անմիջապէս թոշակներու բաշխումն դասարաններու բաժանման և ծնողաց կարողութեան համեմատ ի գործ կ'դնէ՝ յատուկ մասնախմբի մը ձեռօք կարևոր քննութիւնն ընդէ ետև։ Թոշակներու աստիճաններն էին,

Ո–ասՏՏանէ	համար	Մէհիա	12 — 8 — 4
Նախակրթարանէ	»	»	9 — 6 — 3
Մաղնուէ	»	»	6 — 4 — 2

Եւ նոյն թուականէն հաւաքումը կ'սկսի, այնպէս որ տարուէ տարի, այդ աղբիւրէն, միջին հաշուով կ'գոյանար 4 — 5 հարիւր մէհիա, դումար՝ որ բաղդատմամբ դպրոցական հաստատ եկամտից, որ գրեթէ 1,100 ոսկւոյ կ'հասնէր, աննշան էր և հետեւապէս ունևորն դարմեալ աղքատին համար յատկացուած հասոյթից մասնակից կ'լինէր։ Այս մասնակցութիւնը դէթ մասամբ ջնջելու համար էր որ բարեյիշատակ Խրիմեանի տեսչութեան օրով՝ Ուսումն. Խորհրդոյ կոչուէ կ'առաջարկուի Գաւառական ժողովին կրթական տուրք մը հաստատել բոլոր կարող վերայնոց վրայ, առաջարկ՝ որ բաւական դանդատներ պրգռեց մանաւանդ այն անձերու կողմէ որ կամ անզաւակ էին և կամ իրենց զաւակներն օտար վարժարաններ կ'ուղարկէին, առարկելով թէ՝ մեր դպրոցներուն եկամուտներն աղքատներու կրթութեան համար լիուլի կ'բաւեն և թէ՝ պարտականութիւն չեն զգար ունևորներու զաւակներու ի նպաստ ուևէ զոհողութիւն մ'ընելը։ Այս առարկութիւնն՝ թէև ինքնին բանաւոր, չէր սակայն կարող ծնողաց վրայ որ թոշակաց ուևէ յաւելման դէմ կ'բողոքէին, իրենք ալ առարկելով որ դպրոցներն բաւական եկամուտ ունին, աշնքան արմատացած սովորութիւն դարձած էր նոյն իսկ ունևոր դասակարգին մէջ մրի կրթութեան վայելումն, աշնքան

ծանր կ'թուէր իրենց հաւատալ թէ հին քաղէ ժամանակներն անցած և ուսումնական նորանոր պիտոյից դռներ բացուած էին։

Իրաց այս վիճակին մէջ դպրոցական վարչութիւն և տեսչութիւն հիմնական փոփոխութիւններու կ'ենթարկուին 1888 ին և նորընտիր Ուսումն. Խորհուրդ մը լոկ ժողովրդականութիւն շահելու և Հասարակութեան աչքին փուշի փչելու համար՝ թոշակներու մասին վճռանչելէն կ'վարուի, և գրեթէ անփոյթ կ'դտնուի, թէև դպրոցական ծախսերն տարուէ տարի կ'աւելցնէ, առանց ո և է արդիւնք ցոյց տալու, և ելմտացոյցն այնքան կ'ուռի որ 1,300 ոսկւոյ գումարի կ'հասնի, գումար, զոր ազգ արկղն կ'վճարէր առանց համր պամանջելու։

Ա

Այսպէս մէկ կողմէ թոշակներու գումարը կ'նուազէր, միւս կողմէ ազգ. արկղին վրայ ծախսց բեռը կ'ծանրանար, երբ 1893 ին ընտրուած նոր Ուսումն. Խորհուրդն ընդ հանուր թոշակաւորութեան համար յատակագիծ մը կ'յօրինէ, և, ինչպէս կ'նըսևի, առանց Գաւառական ժողովին հաւանութիւնն առանձնաբար, կ'որոշէ յետին ազգատէն իսկ թոշակ պահանջել, թոշակն իննասաստիճան բաժնելով այսպէս — 1 1/2 — 2 — 3 — 4 — 5 — 6 — 7 — 9 — 10 — 12 արծ. մէկ իմիջէ՝ այս համոզմամբ թէ՝ ամենէ չքաւորն իսկ չարաթական մի քանի դրուշ տալու չպիտի դժկամակի՝ և այս սկզմամբ թէ՝ որքան որ հաւր մը պարտականն է իր զաւկին նիւթական պիտոյքն հոգալ, նոյնքան պարտաւորութիւն ունի անոր կրթական պիտոյից համար իր լուման չպլանալ, և մանաւանդ դպրոցական ընդհանուր ծախսուց։ Այս կարգադրութեան գործադրութիւնն կ'սկսի ներկայ դպրոցական շրջանին սկզբէն և այնպիսի յուզում և դժկամակութիւն կ'պատճառէ Հասարակութեան ազգատիկ դասակարգին մէջ, իրրև անիրաւ և ապօրէն կարգադրութիւն, որ մինչ շատեր կ'մերժեն համակերպիլ՝ ազգատութեան պատրուակաւ, այլք բողոքներ կը բառնան, որ արմագանք կ'դտնեն մի քանի հայ օրագիրներու մէջ և թեր ու դէմ յօդուածներ կ'երևին։ Անխտիր թոշակառութեան կատակիցը կ'դժկէր կրիւք, — Ա՛լ բաւական է լրութիւնն, պէտք է որ ծնողք՝ ինչ կարգի որ պատկանին, թոշակ վճարելու վարժին և ամենայն մուրացկանութենէ հրաժարին, պէտք է որ քահանաներն զգուշանան անհատներու ազգատութիւնն հաստատուն վկայագիրներ տալէ, վկայագիրներ՝ որ սուտ են և չհետ ակնկալութեամբ, այսինքն իրենց ժամերին վերաս չերերելու մտօք կ'տրուին, քանի որ յետին ազգատն իսկ կարող է որոշուած աննշան թոշակը տալ՝ հացէն, օղիէն, ծխախոտէն կտրելով։ » Իսկ հակառակ կողմը կ'ըսէր.—Պէտք չէ որ ճշմարիտ ազգատը վճարէ, քանի որ վերհանձն բարերարներ անոր կրթու-

թեան ծախսն վաղուց հոգացած են, և ազգ. դպրոցներն չէ թէ ուևևորին ալ չքաւորին համար են։ »

Այնպէս կ'թուի որ թէ՛ այս և թէ՛ միւս կողմն իրաւունք ունին, սակայն եթէ խնդիրը հիմնովին քննուի, եզրակացութիւնն աւելի աղքատին դատին նպաստաւոր պիտի գտնուի։

Եւ իրօք՝ եթէ տեղւոյս ազգ. վարժարանները հաստատ եկամտէ զուրկ լինէին, Հասարակութեան մէն մի զաւակատէր անդամ պարտաւոր պիտի լինէր իր կարողութեան չափով մասնակցիլ անոնց մատակարարութեան ծախսուց, եթէ կ'փափաքէր զանոնք կանգուն պահել և ծաղր ու ծանակ չձնալ միւս օտար հասարակութեանց առջև։ Իսկ գլխովին անկարող անհատներու թոշակը կարողները պիտի հայթայթէին, ինչպէս մարգասիրութիւնը կ'պահանջէ։ Այդ՝ խնդիր է թէ՝ հաստատուն վիճակին մէջ տեղւոյս ազգ. վարժարաններն պիտի կարենա՞ն արդի հաստատ եկամտից դումարն, 1,500 ոսկի ճարել, թոշակներու կամ դպրոցական տրոց չնորհիւ։ Այս բանը մեզ կասկածելի կը թուի։ Հաւանական գումարը կրնար հասնիլ մի քանի հարիւր ոսկւոյ, ըսենք 500, այնպէս որ մեր կրթարաններն ծախսոցներու կարգը պիտի իջնէին։ Ատոր կ'նեւևի որ կտակեալ եկամուտներուն կէսէն աւելին այժմ ուևևոր դասակարգին կրթութեան և քսակին կ'նպաստէ։ Սակայն՝ ինչպէս վերև ցոյց տուինք, դրամական կտակներն աղքատիկ դասակարգի զաւակներուն սահմանուած լինելով՝ ուևևոր դասակարգը պարտաւոր է կտակեալ գումարներուն չափով, այս է 1,500 ոսկի, թոշակատուութեամբ դոյացնել, ենթադրելով որ կէս ու կէս թիւով են աղքատ և ուևևոր, որպէս զի հաւասարութեան և արդարութեան սկզբանց համեմատ վարուած լինի, որով և վարժարաններու կրթութեան ատիճանն պիտի բարձրանար և լիկէոնի ու ճեմարանի դիրք մը պիտի ստանային։

Ցայտնի է թէ, թոշ 1,500 ոսկի, հազիւ հազ 150 ոսկի կը դոյանայ արդի թոշակառութեան դրութեամբ, թոշակառութիւն՝ որ պարզապէս ինքնախաբութիւն է չէ թէ աղքատին այլ հարուստին կողմէ, քանի որ աղքատին յատկացած գումարին մեծագոյն մասն ինք կ'վայելէ՝ յատուկ ելլով իր ուժանց ընթացքին մէջ, և չատ ժամ գնով կ'ստանայ կրթութիւն մ'որմէ կամ առեպ զուրկ կ'մնայ և կամ կ'ստարէ կիսկատար չքաւորն մի և նոյն յատուկութիւնն և խնամածութիւնը չտեսնելով։ Վասն զի՝ համեմատութիւն չկայ անկար և կարող աշակերտներու թոշակի ատիճաններու մէջ, քանի որ այս վերջինն՝ բարձրագոյն թոշակն, այս է 12 արծ. մէճիտիէ վճարելով կ'պրծի ու պարծի որ իր կրթութիւնը ծրի չէ։

Եթէ տեղւոյս Աւետարանական յոյն վարժարանի դրութեամբ բաշխուէին թոշակներն, անիրաւութիւնը զէթ այնքան դլուխ չէր լինէր։ Այդ. վարժարանն ունի մօտ 1000 աշակերտ, որոց ⁰/₀ 60ը լուծին ծրկավարժ են, ⁰/₀ 20 ատիճանական որոշ-

եալ թոշակ կ'վճարեն, իսկ մնացած % 20 զեղչով՝ ծնողաց դրամական վիճակին համեմատութեամբ։ Նախնական ճիւղին տարեկան բարձրագոյն թոշակն է 30 արծ. մէկ. Ցիմնազիոնին 60, առևտրական ճիւղինն 35, այնպէս որ 1000 էն աւելի ոսկի կ'հաւաքուի լոկ թոշակի գումար, իբրև առեալ պատահական նուէրներն, որ հաստատ եկամտից, 3000 ոսկւոյ բարդուելով՝ տարեկան 4000 ոսկւոյ ծախուց պատկառելի գումարը կ'գոյանայ։ Այս բաւական չէ։ Ազետարանական վարժարանն, ըստ տնօրէնութեան աչալուրջ և գործօն յոյն Հասարակութեան ոգւոյն, իր գործոցական հասոյթէն միշտ նպաստներ կը հանէ քաղաքիս զանազան աղքատիկ թաղերու գործոցներուն համար, և օրէ օր՝ թոշակներու և եկամուտներու աղբիւրներն աւելցնելով՝ կրթութեան բարիքն կ'ծաւալէ՝ ուսուցման նորագոյն միջոցներով, նոյն իսկ թեմական և գիւղական չրջանակներու մէջ։ Եւ քանի՛ արդար, քանի արդիւնաւէտ ներգործութիւն պիտի ունենար կրթութիւնն և մեր մէջ, եթէ տեղոյս ազգ. կրթարաններուն հասատատուն հասոյթից մի մասն, միւսանակ կարող ծնողաց զաւակներուն համար զոհելու, չրջակայ թեմերէից ոզորմելի գործոցներու բարւոքման համար գործածուէր, և այն չափով այս տեղ պակասծն աւելի բարձր թոշակներու և նուէրներու հաւաքմամբ ընելու միտք տարուէր։ Բայց, ո՛չ, բարեկեցիկ իսկիրցին լաւ ևս ունի օտար վարժարաններ ուղարկել իր որդին մեծաքանակ թոշակ վճարելով, քան թէ ազգային կրթարաններն չափաւոր տուրքով, և անոնք որ կուշլարկեն կարծես ընդհ ա՛ըրած կ'լինին՝ առարկելով թէ հայոց գործոցներն, մանաւանդ այս վերջին մի քանի տարիներն, շատ տարտամ ու չվոթ դրութեան մէջ ընկած են և թէ տրուած կրթութիւնն չարժէր տրուած թոշակն։ Թերևս իրաւացի լինի այս գանգատն եթէ աչքի առաջ բերենք կրճատ Ուսումնականներն կուսակցական խլրտումներն և գործած աւերումներն, սակայն չարդարացներ մեր այժմու թոշակի դրութիւնն, քանի որ աղքատիկ դասը կ'զնատուի, և այդ ընդն իրրև տուգանք կ'ծանրանայ իր վրայ։ Եթէ գժգոհ է ուննևորն մեր կրթութեանվ իմակէն, կամ պարտաւոր է՝ կրթասիրական տառապեալներու և պարտաճանաչութեամբ, այդ գժգոհութեան պատճառները բառնալու աչխատիլ, և կամ ի սպառ Մեսրոպ. և Հռիփս. վարժարաններն միայն աղքատիկ մանկանց կրթութեան յատկացնել։ Բայց զարմանալի է որ ընդհանրապէս չատէ, ոչ գործոցները կ'ընդգրկեն և ոչ կ'ներառանան, այլ լաւ ևս կ'համարեն որ աղքատը քաչուխ, անկիրթ, թափառիկ կեանք մը վարէ և տգէտ մնայ քան ձրի կրթութիւն ստանայ. այս անդութ տրամադրութեան ի նպաստ իրրև բանաւոր միտք բերելով նախ՝ գործոցական հասոյթից անձկութիւնն, երկրորդ՝ աղքատին ալ թոշակ վճարելու պարագն զղացնելու հակումն պահանջումն։

Եւ արդարև՝ ինչ եղաւ արդիւնքն այդ պահանջմանն։ Շատ աշակերտներ և աշակերտուհիներ կ՚վճռուին վարժարաններէն իրենց ըմբռնած թոչակաւորութեան, այլ ոչ աղքատ, անոնց թիւն 474 էն 300 ի կ՚իջնէ, ամանք տուները կ՚մնան, այլք փողոցներն կ՚շրջին և շուկաները դարձ կ՚գնուտեն, դաս մ՚աշակերտներ ալ օտար վարժարաններ կրթութիւն կ՚մուրան։ Թոչակին այս խըստութիւնը մի քանի ամիս կ՚չարունակուի, դպրոցական գրասեղանները թափուր, ծնողաց աղաչանքն ատեպ անլսելի կ՚մնան, բայց ի վերջ՝ Պատ. Ուսումն. Խորհուրդն նկատելով իր ըրած փորձն փորձանքի կերպարան կ՚առնու, կ՚մեղմէ իր ընթացքն — կարող կարծուած աղքատներուն առջև դպրոցներուն դռները բանալով և ծրիավարժ ուսանողներուն դասագրեանքն կիսադին վճարել տալով։ Արդի Ուսումն. Խորհրդոյ իմաստութենէ և չրջահայեաց խոհականութենէ կ՚յուսացուէր այս բարեփոխութիւնն որ փորձառութեան վրայ հիմնուած է, և որով միայն ծրիավարժ աշակերտներու թիւն կ՚իջնէ 100 էն 60, իսկ աշակերտուհիներունն 110 էն 23։ Բայց մինչ այս բաւական է . . .

Մեր այս դիտողութիւնները Պատ. Ուսումն. Խորհրդոյ հասուն նկատողութեան ենթարկելով՝ կ՚եզրակացնենք.

ա) Թէ հասատուն հասոյթներն աղքատիկ մանկանց կըրթութեան համար կոտակուած են։

բ) Թէ ամեն անոնք որ քիչ շատ կարողութեան տէր են պարտաւոր են անպատճառ թոչակ վճարել։

գ) Թէ բարեկեցիկ ծնողաց վճարած թոչակն համեմատաբար աննշան է, և իրր այն՝ աղքատին զրկանք մը։

դ) Թէ ունևորներու վճարած տուրքն եթէ ոչ այժմ ամբողջովին, գէթ կիսովին պարտ է որ հատասարի կրթարաններուն հատուած հասոյթիդ։

ե) Թէ գաւառական կեդրոն մը պարտի օգնութեան ձեռք կարկառել չրջակայ թեմերու և գիւղերու աղքատիկ դպրոցներու, որ ըստ օրէ աւելցնելով եկամուտներու աղբիւրն, փոխանակ ծրի կրթութիւն տալու ունևորներու։

Եւ այս երկար յօդուածը գրելով՝ բնաւ նպատակ չունինք Պատ. Ուսումն. Խորհրդոյ կրթասիրական ճգնութեան ու եռանդին, ինչպէս նաև հանրօգուտ դիտաւորութիւններն կասկածի ներքև դնել, այլ՝ ընդ հակառակն՝ գովելով հանդերձ իր անձնուրացական աշխատութիւնն այս գրեթէ վարչային անկերպարան կացութեան վրչ, ուր ինք ամեն դժուարութենց դիմադրութիւնով կ՚չարունակէ իր ծանր պաշտօնը, արժան դատեցինք ազատօրէն մեր կարծիքն արտայայտել թոչակի խնդրոյն վրայ, քանի գիտնալով՝ որ կարծիք չարդել և կրթական գործին համար ամեն օգտակար առաջարկէ օգուտ քաղելու տրամադիր Ուսումնական մարմնոյ մ՚առջև կ՚գտնուինք։

ԼՐԱՔԱՂ

Հռիփսիմեան կրթասէր Ընկերութիւնը կ'հրատարակէր անցեալ ամսին 11 ին իր միամեայ գործառնութեանց համառօտ Տեղեկագիրն։ Ընկերութիւնն շնորհակալութիւն կ'յայտնէ իր առատաձիրտ նուիրատուաց որ եթէ անտարբեր մնային կ'ըսէ, իր դրամագլուխն ու ապագան վտանգելու սպառնած պիտի լինէր։ Զարմանալի է որ Ընկերութիւնն մանաւոր զգուշութիւն մը ցոյց կ'տայ իր դրամագլխէն փոխ մ'իսկ չզրկեցնելու և ընդհակառակն զայն բարգելու ճիգեր կ'ընէ։ Ներուի մեզ հարցնել թէ, Ընկերութիւնն մ'որ թոշակաւոր աշակերտաց ամսականներով՝, տարեկան նուէրներով, պարահանդէսի, երեկոյթի և վիճակահանութեան հասոյթներով, երբ կ'յաջողի իր տարեկան ծախուց պիւտճէն դոցել, ինչո՞ւ ի զուր դող կ'ելլէ որ իր դրամագլուխն չվտանգուի, և մ'եթէ իրաւունք ունի՞ Ընկերութիւնն մանաւոր անհատներէ իր հաւաքած դրամներով դրամագլուխ մը շինել ու պահել։

Թերևս առարկուի թէ՝ Ընկերութիւնը մտադիր է ապագային իր պարտեզն բոլորովին ձրիավարժ աշակերտներ ընդունիլ։ Տարակուսելի կ'երևի մեզ այս խորհուրդն և Ընկերութիւն մ'որ իր պարտէզն կ'ընդունի թոշակաւոր աշակերտներ ինչո՞ւ միմիայն ձրիավարժներու համար հարկ եղած տարեկան ծախուց գումարն հոյթեթելով չբաւականար։

Կրթասէր ընկերութեան տարեկան մուտքն եղած է, 1893 Սեպտ. 1 է մինչև 1894 Օգոստոս 31, բաժնեգիններէ և նուէրներէ՝ 4619. 50 — վիճակահանութենէ՝ 1693. 75 — Խաչէրէ՝ 24048. 50 — ծախուած նիւթերէ՝ 399. 75 — Եւէյնէ՝ 18473 — ազգ. արկղէ՝ 9612*, համագումար 58846. 50, ի բաց առնելով իր դրամագլուխն որ է 34430 ղրչ. զոր բարգելով վերջին հաշիւ մնից գումարներուն վրայ կ'յանգի 93276. 50 ղրուշի. մէճիտիէն 33½։

Այդ իբր ծախք կ'տեսանինք հետևեալ գումարներն. պաշտօնէից ամսական՝ 26792 — գեղնոց և կօշիկ՝ (ձրիներու) 547. 50 — պարտէզի ծախք, 1896 — երեկոյթի ծախք՝ 6974 — վիճակահանութեան՝ 324. 50 — տօնածառին՝ 792. 75 — տան վարձքի՝ 9612. գումար՝ 46938. 75։ Հետևապէս դուրս թողնելով ընկերութեան նախորդ դրամագլուխն, կ'տեսանինք որ մուտքն աւելի եղած է քան ծախսն, այնպէս որ կ'աւելնայ 11907. 75 ղրչ. որու վրայ բարգելով ընկերութեան պահեստի դրամն 197. 50, կ'լինի 12107. 25, և երբ ներկայ չրջանի Ագգ. արկղին յանձնուած, գումարն է 34160 ղրչ. և պ. Թումանեանի մօտ գտնուածն 1979. 50 ղրչ. կ'հետևի թէ Ընկերութիւնն իր Տեղեկագրին մէջ ընաւ գանգատելու տեղի մը չունի, երբ մեր աչաց առջև ունինք թէ իր նախորդ տարուան տոկոսաբեր դրամագլխոյ 34430 ղրուշի գումարն բարձրացած է այս տարի 46140 ղրչ. 25%ի։

---

*Թէև չկարողացանք բերել թէ մոխց այս գումարն տոկո՞ս մ'է, թէ ոչ նուէր մը ազգ. արկղէն, և երէ տոկոս մ'է բաւի տարեւսեան և ի՞նչ սակով։

Ա.յս պարզ հաշիւն ներկայելով մեր ազնիւ ընթերցողաց մեր նպատակն է հաշիւներու շփոթութիւնն պարզել, գովելով միանգամայն կրթասէր ընկերութեան կրթական հաստատութեան ուղղութիւնն և կանոնաւորութիւնն՝ որով հետզհետէ աղգային մատղաշ մանկտոյն մէջ բարեկրթութիւնն տարածելու կ'ընկրկի։

Գեր. Գէորգ Եպիսկոպոս Սուրէնեան ներկայ գտնուած է Ադեքսանդր Գ. կայսեր յուղարկաւորութեան հանդէսին ի Բեդերզպուրկ։

Ցոյց Ամեն. Տ. Մկրտիչ կաթողիկոսն ի տէր հանգեր է։ Կ. Պօլսոյ խառն ժողովոյ որոշման համեմատ Տէր Աբրահամ Եպիսկոպոս Հալէպ կը մեկնի։

Եկեղեցական համագումար ժողովն անցեալ ամսոյն 25ին ի նիստ կ'գումարուի և պատրիարքական ընտրելեաց ցանկն չընելէ յետոյ, կզբաղուի նաև կրօնական ժողովոյ ընտրելեաց եռապատիկ ցանկն պատրաստելու։

Գրաւական եւ կրօնական գործոց նախարարութիւնն պաշտօնագրով մը ծանուցած է Պատրիարքարանին թէ կայս. իրատէի մը համաձայն արկածելոյ նպաստամատոյց ցանկնաժողովին 750 ոսկի յատկացուցած է երկրաշարժն ղնատուած հայոց եկեղեցիներու և անոնց սեպհական կալուածոց նորոգութեան համար։

Հոգ. Որբախնամ Ընկերութիւն, ինչպէս ի լոյ կ'ելմանանք, ամսոյս 5ին կատարած է իր Որբանոցն գիշերօթիկի վերածելու պարզ հանդէսն. ներկայ գտնուած է տեղւոյն Ա.ւագնորդ Ս. Հայրն՝ որ պարագային յարմար յորդորէ մ'ընդ՝ գովելով Ընկերութեան բարեգործութիւնները, կարողութիւն և յարատեւութիւն մաղթած է Պատ. Անդամուհեաց։

Մենք ևս մեր կողմէ նորահաստատ գիշերօթիկ Որբանոցին փայլուն ապագայ մը ունենալուն առաջին փափաքողներէն ենք. տակաւին ներքուի մեզ հարցնել թէ՝ մինէ՞ սոկ մաղթանք և գեղեցիկ ու գոլարիկ խօսքեր բաւ՞ են որբանոցի մը բոլոր կարևոր պիտոյքները գոհացնելու և անոր ապագան ամուր հիմերու վրայ հաստատելու։

Մեր կարծեօք՝ Հոգ. Որբախնամ Ընկերութիւնն աճապարած է իր նպատակն իրագործելու։ Ա.յս գործին ձեռնարկելէ յառաջ՝ պարտ էր խորհիլ թէ պիտի կարողանա՞յ հայթայթել՝ լոկ կամաւոր նուիրատուութիւններով իր ունենալիք առնուազն 120—150 ոսկւոյ տարեկան ծախուց գումարն։ Մինէ լաւագոյն չէ՞ր լինէր եթէ Ընկերութիւնն շրջահայեցութեամբ՝ նախ և առաջ ներկայիս Աբգոյ ազգայնոց իր պիւտճէին, ցոյց տալով մի առ մի այն կարևոր պիտոյքներն որոնցմէ կախուն ունի գիշերօթիկ որբանոցի մը յառաջդիմութիւնն ու ապագան։ Մինէ անհրաժեշտ ու կարևոր չէ՞ր իր տարեկան ծախուց դումարն հաստատուն և ոչ-համայական բաժանորդագրութեամբ գոյելու և ապա գործադրել իր որոշումն։ Մինէ ամենակարևոր խնդիր մը չէ՞ր Որբանոցի յատուկ սեպհական տուն մը հայթայթել և գոնէ տարեկան վարձքինէն ընդ միշտ զերծ մնալ, և վերջապէս եթէ այս ամէն կէտերն ի նկատի առնելով Ընկերութիւնն ակատծ ի իր ձեռնարկն յառաջ տանիլ, ինչո՞ւ համար այնքան, չըսենք անշուք, այլ անտես կերպիւ կատարեց բացման հանդէսն, առանց կանխաւ ծանուց-

ցանելու Ազգիս Հաստատութեան և մանաւանդ անհատից, որոնք անշուշտ պէրայօժար պիտի մնանակցէին հանդէսին և իրենց ներկայութեամբ ալ ապահովել մը տալէ ի զատ, թերևս արդեամբ իսկ նպաստէին իր առաջին քայլերուն մէջ Հոգ. Որբոխնամ Ընկերութեան Որբանոցին։

Եւ փափաքող ենք իմանալ մեզ համար ալ անկակարևորն, թէ Ընկերութիւնն՝ յայտնելո՞ւ ապահովութեամբ՝ ստանձնած է իր աղբմասիրական ձեռնարկն, և թէ՝ որո՞նք են իր Որբանոցի մատակարարութեան և հաստատ եկամտից աղբիւրներն։

Պատրիարքական ընտրութիւն։ — Ամսոյս 7ին տեղի ունեցաւ Մայր Եկեղեցւոյ կանանց յատուկ տաճարին մէջ ժողովոյ բացումն ի ներկայութեան 75 ժողովականաց և Նախագահութեամբ Պատրիարքական Տեղապահ Գեր. Հմայեակ Եպիսկոպոսի։ Ժողովը նախ ձեռնարկեց Մայր դիւանի ընտրութեան և հետզհետէ ընտրուեցան Ա. Ատենապետ, Գաբրիէլ Եֆ. Նորատունկեան, Գեր. Ատենապետ, Ռեմէոս Եփ. Պերպերեան, Ա. Ատենադպիր, Յորութիւն Եֆ. Մուսիչեան (Տնօրէն Կեդր. վարժարանին) և Բ. Ատենադպիր, Յովակիմ Եֆ. Յովակիմեան։ Ապա ժողովն դիւանական թղթակցութեանց զբաղելէ յետոյ, կարդայ Տեղապահ Հմայեակ Սրբազանի մի իմաստալից ու համառօտ պաշտօնագիրն և ապա սկսաւ Պատրիարքական ընտրութեան քուէհամարին և 76 քուէարկուայ 67 քուէով Թուրքիոյ Հայոց Պատրիարք հռչակուեցաւ ԱՄԵՆ. Տ. ՄԱՏԹԷՈՍ ՍՐԲԱԶԱՆ ԻԶՄԻՒԼԵԱՆ։

ԼՐԱԲԵՐ

Ցրանսա ծանր ու դառն կորուստներ կ'կրէ. Վ. Տիւրիւյ, անուանի պատմաբանն և Պուրսո՝ երեսփոխանական ժողովին հանճարեղ Ատենապետն կ'վախճանին։ Այս վերջնոյն տեղ կ'ընտրուի Պ. Հանրի Պրիսօն։ Իսկ Քառնօի յիշատակն, որ անմոռաց պիտի մնայ, կ'նուիրագործէ ժողովրդային հանգանակութեամբ հաստատուած հիմնարկութեամբ մ'որու նպատակն է ամէն տարի մի մի գումար բաշխել գործաւոր դասու այրի ու բազմազաւակ հիներուն։ Առ այժմ Մատակատարի Ցրանսացի դէսպան՝ Պ. Լը Միւռ տը Վիլէրնի պաշտօնն անյաջող եղաւ մը կ'ունենայ՝ մեծ կղզւոյն Թագուհին մերժելով առաջարկուած ծանր պայմանները։ Ուստիոյ նոր Ցարին հարսնիքն մեծ փառաւորութեամբ կ'կատարուի, և կայսրն նոր Թուական մը պիտի բանայ,

ըստ երևոյթին, իր երկրին համար՝ զանազան բարենորոգումներ գործադրելով։ Նախնական կրթութիւնը պարտաւորիչ ընելու համար որոշում տուած է, և՛ իրր փորձ նախ պիտի գործադրուի քանի մը կուսակալութեանց մէջ, և ապա եթէ արդիւնքը գոհացուցիչ լինի, Տէրութեան ամեն կողմը նախակրթարաններ պիտի հաստատուին, և կ'ըսուի թէ 300 հազար չէնք պէտք է նախակրթարանի համար և 100 միլիոն ռուպլի ծախք, ինչպէս նաև հրէից դէմ հալածանքը մեղմելու։ Իսկ Անգլո-Ռուսական նոր համաձայնութեան նշաններէն մին կ'համարուի Ռուսիոյ 400 միլիոն ռուպլիի փոխառութիւնն, որ պիտի բացուի Լօնտօն՝ կառավարութեան արտօնութեամբ, և որ կ'ըսուի թէ այդ գումարին բազմապատիկն ստորագրուած է արդէն զանազան մայրաքաղաքներու մէջ։ Կովկասիոյ կուսակալութիւնն ըստ առաջնոյն փոխարքայութեան պիտի փոխուի և արդէն ցարին հօրեղբայր՝ վլատիմիր Ալէքսանդրովիչ իշխանն փոխարքայ կարգուած է։ Բրիտանական ժողովուրդն տակաւ հանրավարական ձկտումնքը կ'չեշտէ և ընկերային նորանոր բարւոքումներ կ'իրագործէ։ Արդէն նոր օրէնքի մը համեմատ՝ բոլոր Անգլիոյ և Կալէսի 13 հազար չրջանակներու մէջ՝ գիւղական և թաղական խորհուրդներու ընտրութիւններն կ'կատարուին, որոց մասնակից կ'լինին նաև արամբի կանայք։ Լորտ Ռոզպէրի, որու գործունէութիւնն հետզհետէ կ'տկարանայ՝ Փետր. 5ին (Ն. Տ.) բացուելիք խորհրդարանին մէջ մեծամասնութիւնն նուազած գանուելով՝ թերևս ընդհանուր ընտրութեանց օրն հասած նկատէ, թէև այս պատճառ մը չէ, որ իր ծրագիրը յաջորդ նստաշրջանին համար չպատրաստէ, ծրագիր՝ որով պիտի առաջարկէ Իրլանտայի մէջ կալուածատիրութեան օրէնքն փոխել, ընտրողաց ցուցակներն աւելի օրինաւոր կերպով պատրաստել, ընտրողին ո և է պրկանք չպատճառելու համար։ Կալէսի մէջ անգլիական եկեղեցին բառնալ և ընաւ իրր պետական չճանչնալ, և լորտերու ժողովը բարեփոխելու միջոցները քննել։ Գերմանիոյ Ռայխսթագին կ'բացուի գահճառով մ'որ խաղաղութեան յարատևութիւն կ'աւետէ, պատիժներու մեծագոյն խստութեան համար նոր օրինագիծ մը կ'պահանջէ, ինչպէս նաև առորչն չահամրցութիւններ և Սակարանի զեղծումներ դադրեցնելու համար՝ յօգուտ գործաւոր դասուն։ Ջին և Ճարոն հաշտուելու վիճակին մէջ մէջ չեն երևիր՝ հակառակ Երկնային պետութեան փորձերուն, որ իւղերև կ'ելլեն իր ճարպիկ, աննկուն թշնամւոյն յաղ-

Թուխեանց հնարհիւ Բօրդ – Արթիւրը՝ կ'դրաւուի, Մուգտէնի ճամբան կ'հարթուի, Նանէին կ'առնուի և թէև ծանր այլ անհոգ ըղձովը՝ ձաթոնցին դէպ ի Բէքին կ'դիմէ, ուր անշուշտ պիտի ընդունիլ տայ իր հաշտութեան պայմանները. որ տարապայման կ'երևին։

ՅԱՆՑ ՆԻՒԹՈՑ

1893 29
Ազգային կեդրոնական վարժարան 382
Աղաւնին 179
Ադօր իրիցկինը 733
Այլ եւ այլ . . 61, 128, 261, 423, 525, 623, 685, 718
Այբ եւ արցունք 287
Առ ընթերցողս 720
Ասոպնեղոս հեթ 481
Արդի նշանաւոր երաժիշտները 147, 182
Արեւելեան Ակումբ 157
Արծիւներու բոյնը 400, 432, 470
Աւազ սարկաւագունին կոյս Հռիփսիմէ Թայիրեանց 331, 378
Բարեգործական եւ կրթական 189
Բաբելոնը 145
Բարձրագոյն կրթուրիւնն առ Հայս 9
Բարոյական եւ դպրոց 446
Բարոյական խնդիր 271, 305
Բժիլկ Տոքթ. Սերվիչեանց Ֆենտի 82
Բրօսքեր Մերիմէ 476
Գեղադեղի արուեստը 483
Գերբնականը կենաց մէջ 497
Գերմանը 161, 233, 265, 329, 393
Գերման բանաստեղծուրիւնը 709
Գիլէր 313
Գիլէրը 745
Գիշերային վէպ մը 349, 369
Գիտութեան ծառը 361